17

ՍՏԵՓԱՆՆՈՍԻ ՆԱԶԱՐԵԱՆՑ

Վարդապետի

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԶՈՒԱԳԻՏՈՒԹԵԱՆ

# ՅԱՂԱԳՍ

# ՓՈՐՁԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԵԱՆ

# ՃԱՌ

Quem te Deus esse jussit et humana qua parte locatus es in re, disce.

PERSIUS.

*Որպիսի հրամայեցարդ լինել յԱստուծոյ և յորո՞ւմ մարդկեղէն կարգի զետեղեալդ իցես 'ի բնաւս, ուսի՛ր։*

*Պերսիոս.*

'Ի ՄՈՍԿՎԱ.

'Ի տպարանի Վօլտէմար Կօթիէ Փրանսիացւոյ։

1851

Քննելով զայս երկասիրութիւն (Հոգեբանութիւն անուանեալ) Ստեփաննոսի Նազարեանց Վարդապետի Ասիական լեզուագիտութեան, և չգտանելով 'ի սմա ընդդէմ ինչ հաւատոյ և օրինաց՝ ամրացուցանելով զԹերթս տպագրութեամբք և երիզապնդեալ կնքով, յորս Թերթք Թղթոց գրելոց են ընդ ամէնն քառասուն և երեք (43) իսկ չգրելոցն յորս գծեցան նշանագիրք և տառք՝ ութն (8) որք առնեն ընդ ամէնն յիսուն և մի Թերթ (51)։ Հրամայեմք 'ի տիպ մուծանել հաստատելով տպագրութեամբ մերով և դրոշմամբ Արքեպիսկոպոսական կնքոյ. 'ի 11 մայիսի 1851 ամի. 'ի Նախիջևան։

Թեմակալ Առաջնորդ Նոր Նախիջևանայ
և Բեսարաբիոյ հայոց Արք Եպիսկոպոս
Մատթէոս։

Տ. Կ.

ԲԱՐԵԲԱՆԵԱԼ ՅԻՇԱՏԱԿԻ

*Վաղամեռիկ եղելոյ մանկանն*

# ՅՈՎՀԱՆՆՈՒ ԽԱՉԱՏՐԵԱՆ

# ԱԶԱՐԻԵԱՆՑ

*'ի Հեղինակէս*

ՆՈՒԷՐ

## ՅԱՒԵՐԺԱՑԵԱԼ ԴՈՒ

Բաղդ յաջաղկոտ թէ ոչ շնորհեաց
Աւ կենդանեօքդ ըղձից պաշտել.
՚Ի քոյդ շիրիմ՝ տուրք արտասուաց
Թողցի՛ զայս իմ երկ նուիրել։

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ճանաչել և սիրել զազգ հայրենի ո՛չ ամուլ և սնոտի շատախօսութեամբ՝ որ չէ ինչ դժուարին ըստ որում ոչինչ կարօտ զրկանաց անձին յօգուտ մարդկութեանն՝ այլ կենդանի և ճշմարիտ արդեամբք, այն է՝ խուզողական մտօք քննելով զպիտոյս իւրոյ ազգի և փութոյ պնդութեամբ դարման նմին մատուցանելով. այսպիսի՝ մտացն դիտակցութիւ̅ ազգասիրութիւն չիք առ Ռուսահայս որոց շատ է և կարի շատ երջանկութիւն, միայն թէ վայելել կարիցեն 'ի մարմնեղէն բարեկենդանութեան իւրաքանչիւր։ Ասացելոցս վկայ անհակառակելի՝ մերոց հայկական զաւակաց տխուր և ամենաողորմ վիճակ՝ մինչև այբբենարանս անգամ չունել սոցա յուսումն դպրութեան լեզուին որով վարին 'ի հասարակ կենցաղս, իսկ զորս ունին՝ հականան ոչ։ Համարիմ ոչ սուտ ինչ կամ անլուր իմն բարբառիլ, եթէ ասիցեմ՝ թէ մանկտին Հայոց 'ի Ռուսաստանեայս առ 'ի չգոյէ որ յաշխարհիկ լեզու հայախօս մատենից ըստ ազգ ազգ գիտութեանց՝ բռնադատի հրաժարիլ յիւրմ 'ի հայրենի լեզուէ որ չէ նմա կամուրջ լուսաւորութեան, և զոյգ ընդ օտար լեզուին և ձայնին՝ որով տարրանան 'ի նմա գաղափարք մտաց՝ օտարանայ հարկաւ և 'ի բաց մերկանայ

յանձնէ զամենայն զիւր հայութիւն · վասն զի յորոյ ազգի լեզու մոռանի և խօսի ոք, 'ի համարի ասի լինել նորին իսկ ազգի, և լեզու է՝ որ զատանէ ազգ յազգէ, ոչ դարձեալ՝ նա է՝ որ կապակցէ զմարդիկ յազգ։ Անփոյթութիւն ամենակարևոր խնդրոյս սովոր է յառաջացուցանել վնասս մեծամեծս, տոյժս և տուգանս սաստիկս, և՝ զի՞ ևս յերկարեցից՝ անդառնալի կորուստ ազգի, վասն զի 'ի բառնիլ բանի և գրոյ՝ ազգն ևս՝ որոյ իմանալի կենդանութիւն սերտ և կռուկապեալ է 'ի դպրութիւն հարազատ՝ չմարթի կալ յակաստանի, այլ գլորեալ կործանի կործանումն անկանգնելի։

Զսոյն զայս ահաւոր ճշմարտութիւն յանդիման կացուցեալ աստէն, այլև զայնոսիկ 'ի մերոց եղբարց որք չիցեն զգայազիրկ և իմաստասպառ ամենևին՝ յայսոսիկ հրաւիրելով 'ի խորհրդածութիւնս՝ կանխեմք վասն առաջարկութեան գործոյս ասել այսչափ։ Ոչինչ հարկ և արժան դատելով անդէն 'ի սկըզբանն առաջի դնել հայազգի ուսումնասիրին մատեան երկայնախօս զիմաստասիրական խնդրոց՝ շատ համարեցաք զգլխաւորսն վարդապետութեանց հոգեբանութեան աւանդել նմա՝ ոչ կարի խորութեամբ և ոչ կարի յայտնութեամբ, այլ միջակ ուսմամբ տալով զծանօթութիւն գիտելեացն։ Զբովանդակ նիւթ ճառիս բաշխեալ 'ի հնգեակ հատուածս՝ ուրոյն ուրոյն 'ի քննութիւն գալով կարողութեանց հոգւոյ և գործականութեանց նորա 'ի մարդումն, յաւելաք 'ի կատարածն կոյս զհարևանցի տեսութիւն կանոնաց դաստիարակութեան, և այն՝ խորհրդով և ոչ դիպուածով, վասն զի յանհրաժարելեացն մեզ թուեցաւ տեսականին հուպ դնել զգործականն, որպէս զի աւանդեալքն յառաջնում անդ, ակնյանդիման կացուցեալ 'ի յետնումն՝ լուսափայլ ևս ընդառաջ ելցեն մտաց։

հաղարաց և բիւրուց, ո՛չ իւր ինքեան, այլ ընկերին. զայն զայս հրամայաբար պահանջէ և առողջ բանն և պիտոյք մերոց աւուրց. զայն զայս ուսուցանեն մեզ փորձք դարուց և ժամանակաց՝ միայն թէ կամիցի ոք անպղտոր մտօք քննել և ճանաչել զհանդէս Եւրոպէացւոցն քաղաքականութեան և ոչ զկուրութիւն քան զտեսութիւն նախամեծար ընտրիցէ։

Արդարև չէ՛ն ինչ պէտք մեծի ճարտարամտութեան և կորովատեսութեան առ 'ի խելամտեալ ճանաչել զանդարմանելի զայն վիհ ժամանակաց՝ որ խորոց ընդ մէջ անկեալ յետնոցս և առաջնոցն՝ անհնարին 'ի միմեանց զմեզ տարանջատէ, ո͞պ զի հեշտին եւս իցէ զմեռեալս յարուցանել 'ի գերեզմանաց քան զբոլոր ազգ հայոց 'ի հնութիւն անդր վերածել։ Ո՛ւ ժամն զհակառակորդս մեր և զօգտի հասարակաց ծանօթս առնել կամելով մերում կարողութեան ըստ հնոց հայախօսել, վարեցաք անցելոց աւուրց լեզուաւ Հայաստանեայց, և այն՝ յանկոխ շաւիղ գիտութեան առ Հայս. բայց առ յապայս ո՛չ անփոյթ արասցուք ելանել 'ի հրապարակ նորոյ հայկաբանութե͞, նոյն և մերկապարանոց առաջի աչս ունողացն կացուցանել՝ թէ սոյն այս աշխարհիկ բարբառ անտեսեալ մինչև ցայսօր առ 'ի մերայնոց 'ի Ռուսաստանեայս (*),

---

(*) 'Ի նորումս գիտնական բարեկամ մեր Մսեր վարժապետ Զմիւռնացի 'ի լոյս էած 'ի Մոսկվա երկուս փոքրիկ մատեանս մակադրեալս Հաւատապատում. հատ. ա, և Քրիստապատում. հատ. բ. 'ի լեզու իւր աշխարհիկ։ Հեղինակ աշխատութեանցդ երկասիրելոց 'ի պէտս սորին դասատանց ուսումնարանի քաջափայլ տեարց Լազարեանց յորս ուսանողք չէին տակաւին բաւական հասկանալ զգրաբարն հին հայկաբանութեանն, այն ըստ իմիք հպատակ աշխարհիկ բարբառոյն՝ բայց հարկաւորիմք խոստովանիլ ցաւելով, թէ եւս քան զնորախօս, հնախօս տեսանի՝ շատ և կարի շատ ներելով հնումն ոճոյ։ Աշխարհիկ հայախօսութիւն Արարատ լրագրի զոր հրատարակէ 'ի Տփխիս Հ. Գաբրիէլ Պատկանեանց, չէ այս պարտակելի,

զօրէ այժմ բացատրել զխորհուրդս լուսաւոր մտաց՝ մինչ լծորդեալ լիցին ՚ի մատենագիրս ճաշակաւոր ընտրութիւն, շրջանկատ հնարագիտութիւն և երկայնամիտ տոկունութիւն ջանից. աշխատութիւն յաղթող է դժուարութեանց, միայն թէ կամեցող ոք գտանիցի լեալ աշխատութեան՝ բոլորով սրտիւ, ողջամիտ հայրենասիրութեամբ։ Իսկ որք շատախօսեն առ Հայս զանհնարութենէ գրելոյ յաշխարհիկ լեզու և զայն ապացուցանել համարին ՚ի մէջ բերելով զբազմութիւն այլ և այլ բարբառոց առ Հայս ըստ այլ և այլ տեղեաց, զպակասութիւն միոյ ընդհանրականի, զյարտուղութիւն աշխարհիկն բարբառոյ ՚ի գրոցն, զխանգարումն նորին եկամուտ օտարոտի բառիւք և ոճովք խօսից և որ այլ այսպիսիք. արդ այդոքիկ՝ խոստովանիմք աներկիւղ՝ ոչի՛նչ ապացուցանեն յայս բանագիտաց՝ բայց միայն զթանձր և զողորմ տգիտութիւն իւրեանց (*). զդոցա կարծիս ցրել և յաճախն լուծանել չէ՛ գործ որում տեղեակն է ընթացից

---

բայց անկանոն յոյժ և խառն ընդ գրոցն ոճոյ, այլ և յաղթահարեալ ՚ի տեղական բարբառոյ, թո՛ղ զչքաւորութիւն բանից բովանդակութեան։

(*) Այժմեան հռոմէական անուանեալ լեզուք յորոց ոմանք են գաղղիականն, սպանիականն և իտալականն՝ չեն և չէին ինչ այլ բայց լեզու լատինական՝ անհնարին աղճատեալ և խանգարեալ յընթացս ժամանակաց. իսկ անգղիականն խայտաճամուկ կերպարանափոխութիւ իւրով դարուց ՚ի դարս, ցայնչափ այլանդակեցաւ մինչև ՚ի բաց մերկանալ զամենայն հարազատութիւն ազգային և դարձեալ խառնաշփոթ խիճ հաւաքածոյ բառից Անգղոսաքսոնացւոց, Դանեմարքացւոց, Նորմաննաց և Նորագոյն Գաղղիացւոց, թո՛ղ զլատինականն մուծեալս յանգղիական լեզու ՚ի սկզբանն, մինչ հարաւային Անգղիա հպատակէր հռոմէական տէրութեան։ Այլ նախ քան զելանել Անգղոսաքսոնաց յԱնգղիա՝ բնակէին անդ հին Բրիտանացիք՝ որոց զհետք կեան տակաւին ՚ի կոմսութեանն Վալէս և խօսին յիւրեանց բնիկ բարբառ, զԿիմրեանն ասեմ կամ զՎալէսեանն. բայց ՚ի հնոյ և ՚ի սկզբնական լեզուէ անտի պահպանին յԱնգղիականն այժմուս բառք սակաւք յոյժ և եթ։

զարգացման և բարգաւաճմանց Եւրոպէականացն դպրութեանց, այլ վասն համառօտելոյ մեզ զճառս շատ լիցի առաջի դնել իմաստակացդ՝ յորոց միջի երևի և ռուս ոմն Ալիվիցկին (*) այր տգէտ իւրոյ իսկ հարազատ ազգի պատմութեանն՝ զխնդիրս զայսոսիկ. ո՞ւր են և չքացան բարգաւաճ այն լեզուք Յունաստանի և Հռովմայ. ընդէ՞ր արտաքսեալ 'ի կենդանի կիրառութենէ յընկերական կենցաղս՝ կապեալ և կաշկանդեալ դնին 'ի յաւիկ խորշս մատենից իբրու յարգանդ գերեզմանի. ո՞ւր անհետացաւ սլաւոնականն որով երբեմն խօսէին և մատենագրէին արք ռուսիացիք. յի՞նչ պատճառաց զկնի պղատոնական և դիմոսթենեան ատտիկաբանութեան և կիկերոնեան պերճ լատինախօսութեան յաջորդեցին առ Յոյնս ասացեալն նոր յունական διάλεκτος ῾Ρωμαϊκή, καθομιλουμένη, իսկ առ Հռոմայեցիս՝ բարբառն հասարակ volgare eloquio. առ ի՞նչ Պետրոս իմաստուն Թագաւոր Ռուսաց 'ի բաց զսլաւոնականն վտարեալ՝ քաղաքագրեաց զնոր բարբառն ազգային, ուստի հետզհետէ վերաճեալ ծաղկեցաւ այժմեան լեզու և դպրութիւն Ռուսաստանեաց. ո՞յր վասն հին լեզու գրոց՝ որպիսի տեսանի 'ի թարգմանութե ածաշունչ մատենին Ռուսաց և 'ի ժամանակագրութեան Նեստորի աբեղայի Կիեվացւոյ՝ ոչ պահեալ պահպանեցաւ առ 'ի լինել գործարան ռուսաւորութեան՝ եթէ հնարաւոր ինչ էր այդ. ասասցե՛ն մեզ հնամոլ իմաստակքդ, զի 'ի դոցանէ ուսեալ գիտասցուք. ասասցէ՛ մեզ և պարոն Ալիվիցկին՝ եթէ ուսեալ ինչ իցէ 'ի նկարագրէ քաղաքականութեան իւրոյ իսկ համարիւն ազգի. իսկ եթէ ոչինչ ուսեալ է դոցա միանգամայն, ուրեմն մի՛

(*) Տե՛ս Կովկաս անուն լրագիր տպեալ ռուսերէն 'ի Տփխիս, 22 Ապրիլ. 1850. երես 127.

ամաչեսցեն նախ ինքեանք ուսանիլ և ապա զայլս ուսուցանել. վասն զի կոյր կուրի առաջնորդ՝ երկոքին 'ի խորխորատ անկանիցին։

Հին լեզուք համօրէն ունին բազմարուեստ իմն դասաւորութիւն բառից և ամփոփութիւն ոճոյ խօսից. այս յատկութիւն որ արդարև ուժգնութիւն և գեղեցկութիւն մեծ ընծայէ լեզուի հնախօս հեղինակաց՝ յանցանել ժամանակաց և 'ի փոփոխիլ քաղաքական և իմանալի որպիսութեան ազգաց՝ ոչ հեշտեաւ ինչ հնարաւոր առ 'ի պահպանութիւն գոլով, եղծեալ խանգարեցաւ բազմօրինակաբար՝ առ տգիտութեան ամբոխին, և առիթս ետ այլափոխութեան խօսից և քերականական ձևոց լեզուին, յորոց բազումք 'ի նորածնեալսն անդ ըստ իւրաց ինչ ճոխացուցեալ հարստացան, իսկ կէսք կրճատեալ և յապաւեալ 'ի կորուստ գնացին մինչ 'ի սպառ՝ որպէս հոլովք և հոլովմունք լատինականին 'ի հռոմէական ասացեալ լեզուս (*). յաւել առ այս և զպէսպէս տե-

(*) Այո՛ և յառաջքան զկործանումն հռոմէական տէրութեան՝ կիրառականն 'ի հասարակ կենցաղս լեզու լատինական յեղափոխեցաւ յոյժ, գոնեա 'ի Գաղղիա, նաև առ հօգևորս գերագոյն կարգի. ինչ որ առաւել յատուկն էր հասարակ բարբառոյ և զատանէր զայն 'ի մճիտ լատինաբանութենէ անտի, վրիպակ գործածութիւն տեսանի հոլովոց և նախադրութեանց և անփոյթութիւն քերականական ուղղութե՛ գրուածոյն 'ի հասարակի։ Հետզհետէ պատահեալ խանգարմունք՝ որովք լեզու լատինական յեղափոխեցաւ 'ի գաղղիականն և 'ի լեզուս յաւէտ յարակիցս նմին՝ այսպէս տեսանին։ Նախդիրք վարեալք լինէին առանց համաձայնութե՛ ընդ հոլովմունս անուանց և ընդ լծորդութիւնս բայից. գոլով տգէտս կանոնաց փոփոխութեան բառից՝ ցայն չափ չփոթէին զմի հոլով ընդ միւս, մինչ զի հարկ էր 'ի ձեռն նախդրաց որոշել զնա. զոր օրինակ մասնիկքս de և ad պաշտեալ լինէին առ 'ի նշանակել զսեռ. և զտրական հոլովս, որ սովորական յոյժ է 'ի գրչագիրս եղեալս 'ի վեցերրորդ դարէ անտի մինչև ցտասներորդն. այլև առ 'ի լցուցանել զպակասութիւն որոշական և անորոշ յօդիցն 'ի գաղղ. լեզուի՝ 'ի գործ ածէին զբառս ille և unus, զառաջինն մանաւանդ. կրճատութիւն

ղական բարբառս ըստ աշխարհաց և ըստ քաղաքաց, ուստի գնալով յառաջացան այժմեան լեզուք Եւրոպիոյ, ո̄պ իտալականն, սպանիականն և գաղղիականն առ նախնի հպատակս հռոմէական տէրութեան, յունա-

---

ձայնիւ ille է որ յետուստ և է որ յառաջուստ՝ ծնաւ առ յապայս զյօդս գաղղ. և իտալ. լեզուաց՝ le և il: Նոյնպ̄ գործեալ՝ ներգործական օժանդակ բայն *avoir*, avere, haben, որ յաւէտ քան զամենայն տարբերէ զնոր լեզուս ՚ի լատինականէն՝ յառաջ եկն (՚ի յայտ է առ աղքատութեան) ՚ի չգործածութենէ պէսպէս որ ՚ի ժամանակս բայից փոփոխութեանց. յաւելլ առ այս և զայն՝ թէ առ լատինացիս չէր հնար բացայայտելոյ զխտիրն որ ընդ անցեալ անորոշ (passé indéfini) և ընդ անցելոյն որոշական (passé défini), ուստի և ձեւքս j'ai vu և je vis լինին առ լատինացիս միայն՝ *vidi*. ՚Ի սկզբան անդ առ գաղղիացիս և իտալացիս պաշտէր լինել օժանդակ բայն առ ՚ի լրացուցանել զպակասորդ լատինականին. բայց ոմանք ՚ի հեղինակաց սուղէին զայս կիրառութիւն միջութեամբք ոմանց տեղեաց առ հին ընտիր մատենագիրս, ո̄պ են habeo dictum, habeo constitutum, որք չեն բայց ինչ մի մանաւոր և ուժգնութեան աղաղաւ պաշտեալ առ լատինացիս: Զբովանդակ ընթացս այսոցիկ փոփոխութեանց լատինականին որ ՚ի պետութիւնս հիմնարկեալս ՚ի վերայ աւերակաց հռոմէական տէրութեն՝ ոչ է կարողութիւն ցուցանել կատարելապէս. ո̄պ և չէր մեզ ճշգիւ որոշել զկէտ ժամանակի յորում քերականական լեզուն վերջացաւ դոլ հասկանալի ժողովրդեան. բայց անհակառակելի է՝ թէ Գաղղիա յութերորդ և յիններորդ դարս, իցէ թէ՝ սակաւ մի եւս յառաջ ատացաւ իւր լեզու, որ չէ ինչ այլ բայց կազմած իմն գեղացեալ աղճատմամբ ՚ի լատինականէ անտի (մանս զի բառք Կելթեանք կամ Տեւտոնեանք մուծեալ անդր՝ չեն ինչ բազմաթիւ և ոչինչ ունին առ կազմակերպութիւն նորին), որ և հետ գհետէ ցայն վայր խառնեցաւ ՚ի նախատղէ իւրմէ և՛ յարտասանութեն և՛ ՚ի քերականութեան, մինչև ՚ի բազում դէպս չէ հեշտին անդրէն դառնել զարմատական ձեւս գաղղիացուցեալ լատին բառիցն: ՚Ի սոյն յայս նորաշէն լեզու հռոմէական՝ բաշխեալ յերկուս տարբեր բարբառս՝ որ են ասացեալն *provençal* և լեզու հիւսիսային Գաղղիոյ՝ հանդիսացան ՚ի վերջ ժա̄ դարու և ՚ի սկիզբն երեքտասաներորդին բանաստեղծական վաստակք զուարճամիտ ականաւոր տաղաչափից՝ Տրուբադուրաց (Troubadours) անուամբ ՚ի հարաւային Գաղղիա, և Տրուվերաց (Trouvères) ՚ի հիւսիսակողման Լօար գետոյ հոչակելոց. Տես История Европейской Литературы XV и XVI столѣтій Генриха Галлама, մասն առաջին. եր. 17—18.

կանն նոր՝ առ արդի Յոյնս և ասացեալն քաղաքական լեզու այժմեան Ռուսաց՝ ծնեալ 'ի զուգախառնութենէ երից որ 'ի Կիեվ, 'ի Բելօրուսիա և 'ի Մեծ Ռուսսիա գործածական բարբառոց ժողովրդեան, որ օրըստօրէ հրահանգեալ բարգաւաճեցաւ ընդ հմուտ գրչաւ հեղինակաց որպիսի եղեն Լոմոնոսով, Դերժավին, Ֆոն Վիզին, առակախօսն Խեմնիցեր յաւուրս մեծի Թագուհւոյն Կատարինեայ Բ, պատմագիրն Կարամզին, բանաստեղծքն Կռիլով, Պուշկին, Ժուկովսկի և այլք։

Ոչինչ ընդհատ 'ի նախակարգելոցդ հանդիպեցաւ առ Հայս. և անցք անցեալք ընդ մերս լեզու նոյն են որ ինչ անցան ընդ այլոցն, որով իբրու 'ի հայելւոջ իմն մարթիցիս տեսանել, թէ հասարակաց են օրէնք ընթացից մարդկութեանս առ որ և է ազգս, յոր և է աշխարհս. ուրեմն և Հայք իսկ չեն բացառութի ինչ յընդհանուր կանոնէ անտի, այլ իբրև հարազատ անդամք միոյ միայնոյ ազգի մարդկան՝ պարտին զնոյն գնալ զճանապարհ, ընդ որ բոլորն ընթացեալ տեսանի. ապա թէ ոչ. իբրև փտեալ և անպիտանացեալ որդիս ժամանակի 'ի բաց հատեալ 'ի բոլորէն՝ ծախեսցին 'ի ժանիս որկորամոլ ծերունւոյն Կռոնոսի։

Գրաբառ կոչեցեալ լեզու հայկական որոյ ընտիր ընտիր յիշատակարանք շինեալ հաստատեցան ճարտարապետական ձեռամբ սրբոց թարգմանչաց մերոց 'ի Ե ոսկի դարու Հայոցս դպրութեան, և գործեցան հիմունք հաստարմատք յորոց վերայ զկնիք խարըսխեալ բարձրացուցին զհայկաբանութեանն կազմած սքանչելարուեստ՝ հեղինակ իւրաքանչիւր ըստ չափու իւրոյն կրթականութեան և հանճարոյ մշակեալ և ճոխացուցեալ զժառանգեալն 'ի նախնեաց. այս գրաբառ լեզու Հայոց՝ արտաքոյ քան զբնիկ աշխարհ արա-

րատեան տարեալ՝ յայլ և այլ գաւառական բարբառս յեղափոխեցաւ, զորոց թիւ եօթն դնէ Յոհաննէս Երզնկացի 'ի մեկնութեան հին քերականութեան, բերելով 'ի Ստեփաննոսէ, որք են. ჭორძაჲ, ფაჲეჲ, ხააბაჲენ, ჸრრორტ ჰაჲეჲ, ოღერაჲ, იეანე, თრჲახა-ჲენ. իսկ մաքուր հայկաբանութիւնն մնաց յարարատեան աշխարհի, զոր նոյն այր ჩქერჭერეა ნ ოთფანეჲ կոչէ ընդդիմադրելով գաւառականացն որ առ նմա ეჳერაჭანი լինին։

Հին լեզու գրոց մինչև 'ի կատարած Ժ̃Գ դարու իբր 'ի բազում պահեալ և պահպանեալ տեսանի առ Հայս. բայց վաղ ուրեմն, այն է՝ 'ի Ժ̃Ա դարու գտանին հետք ինչ այժմեան աշխարհիկ բարբառոյ 'ի թուղթսն Գրիգորի Մագիստրոսի. ապա թուի այս ծաւալեալ յԺ̃Գ դարու, ուր բազում ուրեք է տեսանել առ Մատթէոսի Ուռհայեցւոյ և առ Մխիթար բժշկի. ես առաւել յաճախեալ 'ի Ժ̃Դ երրորդումն. որում վկայեն գրուածք Գրիգորի Անաւարզեցւոյ և Ստեփաննոսի Օրբելեան։ Բայց կրկին դարձեալ այս աշխարհիկ բարբառ այլ և այլ է ըստ այլ և այլ տեղեաց. նշանաւորքն տարբերութեամբ են Ագուլեցւոց, Վանեցւոց, Մոկաց և Պէյլանցւոց առ Անթաքիւ մանաւանդ։ Առաւել ընտիրն յաշխարհիկ բարբառս և մերձաւորագոյնն հնոյ վճիտ հայախօսութեան Ճմնաչի բարբառն արարատեան՝ յոր հպաւորին ըստ իմիք խօսուածք Հաշտարխանու Հայոց։

Աշխարհիկ բարբառ Հայոց կամ լեզու որով վարին Հայք 'ի հասարակ կենցաղս՝ տեսեալ իսկապ̃՝ չէ՛ տարբեր ամենևին 'ի գրոցն լեզուէ. դասակարգք քերականական ձևակերպութեանց՝ որ 'ի նախնի լեզուին անեղծ և անխախտ պահեալ մնան՝ է զի յընթացս դարուց մաշեալ անհետացան 'ի շրթունս ժողովրդեան, և է զի անհասկանալի գործեցան ազգին՝

յանցանել ժամանակաց. ինչ մի որ իբրև հասարակաց պատահար տեսեալ եղև 'ի վեր անդր. սմին իրի աշխարհիկ լեզուն յոլովակի 'ի վար արկանէ մասնիկս անդ՝ ուր հինն շատանայ միայն փոփոխութեամբ որ 'ի մէջ և յեղր բառից. Թող զայս. Հայք հարուստ ինչ ժամանակս կացեալ ընդ իշխանութեամբ այլազգի տէրութեանց, որ է՝ Պարսից, Արաբացւոց, Տաճկաց և Ռուսաց՝ փոխ առեալ են 'ի նոցունց բազում բառս և ոճս խօսից, զորս առ 'ի բացայայտել դոն հարազատ ձայնք և եղանակք հայկականք. բայց ինչ որ ես առաւել զգրոցն բարբառ զատանէ յաշխարհիկ լեզուէն՝ է տարբեր դասաւորութիւն բառից, բազմարուեստ և ամփոփ ոճ՝ խօսից յառաջինն, իսկ պարզ և դիւրհասկանալի 'ի յետինս։

Այո՛ 'ի հանդիպիլ ընդհանուր նուաբեկութեան Հայաստանեայցս քաղաքականութեան՝ ժրագլուխ վարդապետք Հայոց զուսումն և զգիտութիւն հայկական տարեալ պատսպարեցին յամուրս և 'ի պատուարս ւրիկ օթևանաց իւրեանց, 'ի վանս ասեմ և 'ի կաթողիկոսարանս. և այսպէս պահպանեալ 'ի կորստենէ զարգասիս հայկական ոգւոյ բերեալ աւանդեցին յետնոցս. սապէս ո՛չ ուրանամք զականաւոր արդիւնս և շնորհս ցուցեալս առ ազգ Հայոց 'ի միաբանութենէ Մխիթարեան գիտուն վարդապետաց՝ որոց կամք եղև Նախախնամականին յանձն առնել զպահպանութիւն հայկականս ուսման 'ի սկզբանէ անտի ութևտասներորդ դարու մինչև ցաւուրս մեր, թէև՝ ոչ սեաւ բաղդի ազգիս՝ ոչ 'ի ծոց մօրն մերոյ Հայաստանի, այլ առ դրունս օտարաց, 'ի Վենետիկ Իտալիոյ, բայց սակայն՝ թո՛ղ զսակաւաթիւ ուսումնականս ոմանս առ մեզ՝ որոց է կարողութիւն ընթերցասիրել զմատեանս հնախօս հեղինակաց Հայոց, ազգն բովանդակ առ 'ի տգիտութենէ դարուց 'ի

դարս համապաղորդելոյ՝ չէ այլ եւս բաւական զիւրեան հասկանալ զբուն հայրենակիցս, զՄովսէս Խորենացի, զՂազար Փարպեցի, զԵղիշէ Ամատունի եւ որ այլ այսպիսի հեղինակք հնախօսութեան. վասն զի բանալի նուիրական տաճարիդ այդորիկ անգիւտ իմն կորուսեալ է նմա 'ի շրջանապտոյտս յորձանուտ դարուց եւ ժամանակաց։ Արդ սոյն այս անգիւտ կորուստ աւուրց անցելոց, սոյն այս անհնարաւորութիւն զմեռեալն հնախօսութիւն 'ի լոյս վերակենցաղելոյ ոչինչ ընդհատ սեսեալ եղեւ առ Եւրոպացիս. որպէս ընթացան սոքա, զոր կալան զճանապարհ, իւ իւիք հասին նպատակի իւրեանց. ուսցուք յիմաստուն Եւրոպացւոց որք փորձութեամբք իւրեանց կարող են փորձանաւորացս օգնական լինել։

Լապտեր լուսաւորութեան հնոյ աշխարհի շիջեալ խաւարեցաւ զկնի մահուան վերջին հնախօս լատինաբան իմաստասիրին Բոյեթիոսի որ հրամանաւ Թէոդորիկայ արքայի Գոթաց արկեալ 'ի բանտ՝ զիւրն զՄխիթարութիւն փիլիսոփայութեան (Consolatio philosophiæ) կնքեաց արեամբ իւրով յամի 524 յետ Քրի։ Անցանեն 'ի վերայ գրեթէ բովանդակ դարք հինգ. միջոց ժամանակի, յորում գիտութիւնք ամենայն՝ սահմանեալ 'ի հրահանգս ասացեալ եռեակ եւ քառեակ արուեստիցն (trivium et quadrivium) (*) իբր 'ի բաղումն թաղեալ էին 'ի կամն հոգեւորաց՝ որոց ոչ սակաւք նշանաւոր գտան անհնարին գիտութեամբ իւրեանց։ Բովանդակ մատենագրութիւնք այսոցիկ դարուց չեն՝ բայց արգասիք ստրկաբար

(*) Եօթնեակ գիտութիւնքս այսոքիկ էին. քերականութիւն, ճարտասանութիւն, տրամաբանութիւն, երաժշտութիւն, թուաբանութիւն, երկրաչափութիւն եւ աստղաբաշխութիւն՝ որոց ուսումն ըստ անպիտան մատենից Կասիոդորեայ, Իզիդորեայ եւ Մարկիանոսի Կապելլայ՝ մուծեալ եղեւ յԵւրոպա 'ի վեցերորդ դարու։

փոխաւութեան 'ի հնոց անտի և որ ինչ ինչ հանդիպին յինքնաստեղծ վաստակոց՝ ոչ անցանեն ըստ չափ միջակայնոյն. յամբոխէ անտի պարծանօք 'ի վեր ելանեն Սկոտոս Երիգինա և Գեբբերտոս:

'Ի սկիզբն երկոտասաներորդ դարու յառաջանայ նոր դարագլուխ պատմութեան Եւրոպացւոցն դպրութեան. աստ ուրեմն հանդիսանան յԵւրոպա արք երևելիք ուսումնականութեամբ 'ի զանազան բաժինս գիտութեանց և գայ հասանէ ժամանակն՝ յորում թէպէտ և ոչ 'ի սպառ անհետանայ ագիտութեանն խաւար, բայց ընդաբոյս զօրութիւնք մնաց արձակեալ 'ի դարաւոր կապանաց և օր քան զօր ջան առեալ՝ քաջութիւն և կորովութիւն զգենուն: Եւ՝ ո՛ր եղեն գլխաւոր պատճառք յառաջածուք այսր կերպարանափոխութեան իմանալի վիճակի Եւրոպիոյ. այն մեծամեծք, թէև ոչ ամենեքին գործակիցք միմեանց, ոմանք 'ի նոցանէ և ներհականք իրերաց, բայց վախճան բնաւից էր մի և նոյն, որ է՝ զարթուցանել զԵւրոպա 'ի քնոյ թմրութեան և յարուցանել 'ի նմա զքան և զգիր սեփական ազգաց իւրաքանչիւր. ահաւասիկ են ասացեալ պատճառքդ. Հիմնարկութիւն համալսարանաց և ոճ դաստիարակութեան 'ի նոսա, մշակութիւն նորոց լեզուաց և յառաջանալ [illegible] դպրութեան ազգաց, [illegible] հռովմէական օրինաց և ազատ ուսումնասիրութիւն լատինական լեզուի 'ի հին գաղափարաց մաքուրն լատինաբանութեան:

Հիմնարկութիւն համալսարանաց յԵւրոպա և բարեկարգութիւն ոճոյ դաստիարակութեան չէին արդարև 'ի փոքունց ինչ: Համալսարանք առհասարակ՝ իբր 'ի բազումս դեգերէին յուսումն դպրոցական (սխոլաստիկեան) ասացեալ փիլիսոփայութեան և համբնաբանութեան, թող զորս էին 'ի Բոլոնիա և 'ի Մօնպելիէ, որոց առաջինն հետաքննէր զքաղաքա-

կան օրէնս , իսկ երկրորդն հուչակաւոր էր բժշկական դպրոցաւ իւրով · բայց՝ մինչ դեռ ՚ի ձեռս եղանէին զուսումնական խնդրոց ՚ի լեզու օտար և հասկանալի գիտնոց միայն, վիճակ աշխարհականաց կայր և մնայր ՚ի նոյն ահարկու բարբարոսութեան ոչ և ՚ի դարս առաջինս · այսորիկ վասն վերածաղկիլ հայրենական դպրութեանց առ Եւրոպացիս է՝ յոր կոյս ունիմք ակնարկել իբրև յեական պատճառ իմանալին կատարելագործութեան եւրոպացի ազգաց։

Եկայք ՚ի տեսութիւն յառաջատուութեան նորանոր դպրութեանցդ Եւրոպիոյ։ Դանթէ փլորենտինացի ՚ի կատարած երեքտասաներորդ դարու ելանէ ՚ի հանդէս նորոյ իտալախօսութեան իւրովն հրաշալի գրուածովն մակագրաւս Կատակերգութիւն Աստուածային (la divina Comedia), և ընդ նմին սխրագործէ զնոր լեզու և դպրութիւն իտալական · այս գործ սքանչելարուեստ յորում նկարագրի այլաբանաբար ուղեւորութիւն ընդ դժոխս , ընդ քաւարան և ընդ երկինս, պատկերացուցանելով զբովանդակ որպիսութիւն ժամանակին յորում եկաց բանաստեղծն · այս գործ Դանթեայ եթէ գրեալ էր ՚ի լեզու լատինական՝ կայր և մնայր ՚ի յաւիտեան իբրև մի օտար և անմատչելի Իտալացւոց, զոր օրինակ լատինական գրուածք պղատոնական տարփաւորին Լաուրայի տիկնոջ՝ քնարերգուին ասեմ Պետրարքայի որ ՚ի ձեւս իտալական նուագաց իւրոց (Սօնէտս ասացելոց) ժառանգեաց իւր պսակ անմահութեան , զայն՝ որում ընդունայն ակնունէր ՚ի լատինախօս հագներգութենէ իւրմէ մակագրելոյ Ափրիկէ։ Ոչինչ նուազ արդիւնաւոր գտաւ Յովհաննէս Բոքաչչիօ իբրև բանաստեղծ նկարագիր նորանոր անցից ժամանական կենաց յիւրումն Դեկամերոնէ · գործ այնչափ իսկ նշանաւոր ճոխութբ ինքնաստեղծեալն լեզուի՝ որչափ բազմազանութեամբ

ոճոյ բանիցն։ Սատարելով երից այսոցիկ բանաստեղծից տարածեցաւ առ յապայս յԻտալիա ընդհանուր իմն սէր իմանալի և տաղաչափական կրթութեան, ո̃պ զի բազումք 'ի մեծատանց 'ի փորձ մատուցին զիւրեանց քանքար բանաստեղծական և յաջողակս քան զամենեսեան՝ Լօրենցօ Մեդիչիս։ 'Ի բանիլ հանդիսի նորոյ իտալաբանութեան հետզհետէ վերածեալ ծաղկին յԻտալիա ազգք ազգք բանաստեղծական արգասեաց · սիրապատումն բանաստեղծութիւն զքաջազանց 'ի միւս կէս հնգետասաներորդ դարու մուծեալ լինի 'ի դպրութիւն իտալական Մօրգանդէ (որ էր պատերազմակից Ռօլանդեայ) մակագրեալ գրուածովն Պուլչի փլորենտինացւոյ և Ռօլանդ ինամօրադօ ասացեալ վաստակովն Բոյարդօ կոմսին Սկանդիանու· յընթացս վեշտասաներորդ դարու, մանաւանդ թէ յաւուրս Մեդիչեան Լեւոնի տասներորդի հանդիսանայ ոսկի դար հմտութեան նորոյս Իտալիոյ· պերճ երևակայութիւն և քանքար ճարտարապետական նկարագրութեան ա̃ծային Արիոստեայ հրաշագործէ զսիրապատումն զայն տաղերգութիւն՝ Ֆուրիօզօ Ռօլանդ վերաձայնեալ, որում Տորկվատօ Տասսօ առընթեր կացուցանէ զիւրն բազմարուեստ հագներգութիւն վիպասանական՝ Ազատեալն Երուսաղէմ։ Նշանաւոր մատենագիրք արձակ ոճով յարեան Մաքիավելլի հեղինակ պատմութեան հայրենի քաղաքին իւրոյ Փլորենտինոյ, Գուիչիարդինի մատենագիր պատմութեան Իտալիոյ և առ յապայս՝ Պաօլօ Սարփի նկարագիր անցից անցելոց ընդ տրիդենտինեան ժողով։ Զոր ինչ գործեցին առ Իտալացիս Դանթէ նախահայր իտալական տաղաչափից, Պետրարքա և յաջորդք նոցին, գործեցին յԱնգղիա Գօթֆրիդ Չաուսըր 'ի կանթերբուրեան վէպս իւր, տիեզերական և ազգային միանգամայն տաղաչափն

Թատրոնական՝ Ուիլլեամ Շէքսպիր, Ճօն Միլտոն, Էդուարդ Եունգ, Ուալթէր Սկօտ և Լօրդ Պայրըն· 'ի Գերմանիա՝ Լութեր անձամբն՝ որ իւրովն սխրալի Թարգմանութեամբ ա̃ծաշունչ մատենին եղև հիմ-նարկու այժմեան վերին գերմանական (Hochdeutsch) ասա-ցեալ դպրութե̃ն, Լեսսինգ, Հերդըր, Շիլլեր, Գէօթէ, և այլք յայլ աշխարհս՝ զորոց մանրամաս-նաբար յիշատակել չէ տեղւոյս և ժամու:

Կազմակերպութիւն նորոյ ընդհանուր լեզուի ոչ իմանամք զայն՝ որ հիմն 'ի վեր տապալել ունիցի զհինն, ո̃պ անդէն առ նմին ձայն բարձեալ բողոքեն իմաստակք Հայոց՝ մինչ բան է զաշխարհիկ հայախօ-սութենէ· քան և մի՛ լիցի սեղանապիղծ ձեռօք հպիլ մեզ 'ի սրբազան ժառանգութիւն կտակեալն մեզ առ 'ի մերոց նախահարց· այդ ո՛չ ուրեք գործեցաւ առ Եւրոպացիս· Դանթէ յասացեալ գործ իւր ոչ սա-կաւ օգտեցաւ 'ի լատինական լեզուէ և յայլոց իտալական բարբառոց իւրոյ ժամանակին· նմանապէս Լութեր ոչ յանձնէ հնարաստեղծեաց զայն լեզու նոր գերմանական, այլ շրջանկատ մտօք հարցաքննելով զընտիր ընտիր բարբառս Գերմանիոյ: Նոյն և մեզ, մե՛զ ասեմ Հայկազանցս պա՛րտ էր՝ Թէև անագան՝ պէտ յանձին ունիլ, փութալ ձեպել առ 'ի կազմել մեզ նոր և դիւրընկալ իմն լեզու դպրութեան, քաջ տնտեսութեամբ մնաց 'ի գործ վարելով զճոխ նիւթն զոր մատակարարէ մեզ հին լեզուն և այլ-և այլ ընտիր բարբառք նորոյ ժողովրդեան, որով լիցի ապաքէն հետզհետէ մաքրել զհասարակ լեզու Հայոցս յեկամուտ օտարաձայնութեանց, լցուցանել զպակա-սորդս նորին և քաջացուցանել զայն առ իւրաքան-չիւր հանդէս ուսմանց: Այս ամենայն՝ ո̃պ քաջա-ծանօթ է բանագիտաց՝ ոչ լոկ բանիւք և մտածու-թեամբք վճարի, այլ գործով և արդեամբք: Թող

լիցին թերի և անկատար նախածին վաստակք աշխարհիկ հայկաբանին. մեծ ինչ իւրաքանչիւր 'ի փոքունց և յաննշանից սկզբնաւորեալ յառաջացաւ օր ըստ օրէ և տարեալ եղև 'ի կատար լրութեան. այո՛ զՊալլաս Աթենէ՝ սպառազինեալ կերպարանօք 'ի լոյս ծնեալ լսեմք 'ի գլխոյ Դիոսի, բայց այս՝ հնարաւոր յառասպելս և եթ՝ ոչինչ ունի առ իրականն աշխարհ։ Սկսանել միանգամ պարտ է, և՝ ըստ մերումս կարծեաց՝ 'ի պիտանեացն յայժմուս հայազգի մանկտւոյս. իմն պատկանաւոր այբբենարանս յուսումն հայրենի դպրութեան և եւրոպէականացն, սապէս քերականութիւնս, բառարանս այլևայլ լեզուաց, մանաւանդ թէ որոց էին յաւուրս մեր աղբիւրք լուսաւորութեան, բե՛ր ասել զգերմանականին, զգաղղիականին, զանգղիականին և զՌուսացն, այլև առձեռն պատրաստ մատեանս յուսումնասիրութիւն ընդհանուր պատմութեան, աշխարհագրութեան, թուաբանութեան, չափաբանութեան, բնաբանութեան, բնագիտութեան և այլն։ Մ՝ինչ դեռ ոչ է Հայոց կարողութիւն յիւրեանց բուն լեզու մտածել, խօսիլ և գրել, չի՛ք ևս ոչ հայկական ուսումն և լուսաւորութիւն և ոչ իսկ հայութիւն. և հայութիւն՝ առանց հայաբար մտածելոյ և խօսելոյ՝ բարբարոսութիւն առ մեզ ճանաչի. վասն զի ազգ և լեզու մի են. առանց լեզուի չի՛ք ազգ, ո՟պ դարձեալ՝ լեզու առանց ազգի է ինչ մի յանխիմանալեաց անտի։ Յո՛յժ և կարի յոյժ սխալին ծնողք հայասեռ մանկանց 'ի Ռուսաստանեայս՝ հայացուցանել զորդիս իւրեանց կարծելով այնու՝ զի թոշակաւորեն վարժապետս առ 'ի երկիցս կամ երիցս յեօթնեկի ելանել 'ի տունս ծնողաց և ուսուցանել տղայոց քանի մի մեռեալ բառս և ոճս հին լեզուի՝ մինչ սոյն իսկ մանկունք զբովանդակ ընթացս ուսման իւրեանց կատարեն այլազգի լեզուաւ, ուրեմն և մտա-



ՖՈՆԴԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ծել իսկ ոչ ուսանին յիւրեանց հարազատ բարբառ, Թէպէտ ծնողքդ այդոքիկ զիւրեանց պարտականութի առ որդիս անթերի լցուցեալ համարին. և ոչ չափ միայն. այլ և զպարծանս գերօրինակ հայրենասիրութեան յինքեանս յափշտակեն. ո՛ւր անտեղի և խաբեբայ հայրենասիրութեանդ, ո՛ւր հայութեանդ որ չէ ինչ ընդհատ 'ի կատարեալ այլազգութենէ. այսմ՝ յայտնաբարբառ վկայէ նոյն ինքն համապազօրեայ փորձն. մանկունք հայոց 'ի Ռուսաստանեայս, այո՛ և չափահասակք իսկ պապանձեալ կարկին՝ մինչ հասանէ նոցա 'ի հայ լեզու արտայայտել զխորհուրդս ինչ մտաց, իսկ սմին հակառակ 'ի ռուս լեզու յաջողակս արշաւեն. ուստի՞ է այդ. զի՞նչ է պատճառ չկարելոյդ Հայոց հայաբար մտածել և հայաբար խօսիլ. եթէ անգիտանան հայք, ահա՛ բացատրեսցուք նոցա. անտի միայն է, զի նոքա աններելի առ 'ի Աստուծոյ և 'ի մարդկանէ անհոգութեամբ ոչ կամին զշինութիւն հայրենի լեզուին, ո̄պ զի եղիցի սա կամուրջ և միջնորդ լուսաւորութեան հայկազեան մանկանց. իսկ ոմանք՝ ո՛ւր վերջին կուրութեան և անյուսալի հիւանդութեան բանականին հոգւոյ առ Հայս՝ իբրև խելագարս ոմանս Թափեն զամենայն ձիգն 'ի հակառակամարտութեան անդ ընդդէմ փրկականին դեղոյ և դարմանի, և այդպ̄ս աչօք բացօք վազեն հապ ձեպով առ 'ի գահավէժ գլորիլ 'ի խորխորատ կորստեան, կամ՝ որ նոյն է՝ ուրացեալ զիւրեանցն սեփական կենդանութիւն, օտարին կենդանութեամբ կեալ ախորժեն: Այլ մեք ասեմք. առանց հայաբար մտածութեան և խօսից չի՛ք և բնաւ իսկ չի՛ք հայութիւն. և զոր ուսանիմքս յԵւրոպացւոց, յայնժամ միայն ասիցեմք ուսեալ ունիլ մտացն գիտակցութեամբ, մինչ հայացուցեալ զայդ ամենայն 'ի հայրենի բան և գիր՝ արտաքս 'ի մէնջ բղխեցուցանել կարողքս իցեմք.

ապա թէ ո՛չ․ սուտ է ամենայն հայութիւն և ուրուական անգոյ․ երանի մեզ՝ եթէ խօսէաք զայսոսիկ ոչ յունկն մեռելոց, այլ 'ի լսող ականջս կենդանեաց։

Մեծամեծ ականաւոր արգասիք նորաշէն դպրութեանց առ Եւրոպացիս՝ որ է գրելոյ և խօսելոյ 'ի պէտս ժողովրդեան յայն լեզու զոր նայն իմանայ, ազատ և 'ի վեր են քան զամենայն տարակոյս, այլ և քաջածանօթ իւրաքանչիւր ումեք որոյ են աչք առ 'ի տեսանել, սիրտ առ 'ի զգալ և բան առ 'ի խելամտել․ ո՜վ որք 'ի մտախոհիցն արանց այնչափ ապիրատն գտցի մինչ զի՝ փոխանակ շնորհակալու մտօք պատուասիրելոյ և մեծարելոյ զբարեացապարտ արան զայնոսիկ որպիսի եղեն Դանթէ առ Իտալացիս, Լութեր առ Գերմանացիս, Լոմոնոսով և Կարամզին առ Ռուսս, ընծայել ևս յանդգնիցի նոցա նպատակս ստորաքարշս և դատապարտելիս միանգամայն․ իմա՛ դու ինձ զմատենագրել նոցա յաշխարհիկ բարբառ ո՛չ վասն շինութեան լեզուի և լուսաւորութեան ազգի, այլ անձնական շահաստացութեան աղագաւ․ հնար ի՞նչ իցէ արդեօք քան զայդ առաւել անիրաւութիւն ապիրատել առ պատկառելի անձինս հեղինակացն այնոցիկ որք ջանիւք և աշխատութեամբ ճարտարապետեալ կառուցին զշինուած նորոց դպրութեց և եղեն բարերարք ոչ ազգի իւրեանց միայն այլ և հասարակաց մարդկութեանս․ ո՞ր լինէր վիճակ Ռուսացն լուսաւորութեան յայժմուս՝ ոչ սատարելով այդմ նորախօս ռուս հեղինակացն Լոմոնոսովի, Կարամզինայ և այլոց բազմաց․ զայդ չե՛ գիտեն Հայք և ոչ իսկ գիտել կամին, վասն զի, ո՜պ մեզ թուի, զամենայն ինչ ուսեալ գիտեն, բայց մտածել և ճանաչել՝ ոչ․ մտածե՛լ և ճանաչե՛լ զօգուտ անձանց և զփրկելի զաւակաց իւրեանց։ Եւ որ մեծն է․ յայդ իսկ մոլորութիւն զառածեալ տեսանի ուսումն Ալի-

վիցկիյ որ ոչինչ մտաբերեալ 'ի պատմութիւն ընթացից լուսաւորութեան իւրոյ հայրենական ազգի, զգովանի վաստակս նորախօս հեղինակաց տաճկաստանի Հայոց 'ի յանցանս դնէ նոցա՝ այսպէս զրպարտելով· «нужно правду сказать, что главная причина, заставляющая ихъ усердно работать, это не желаніе, чтобы нарѣчія простаго народа образовались, приняли опредѣлительныя грамматическія формы,—но личныя выгоды.» Ո՜վ ուշամտաց և հանճարազրաւ աւնդ որ առ անհնարին ապշամտութեան իւրոյ ոչ նկատէ՝ թէ դոյն այդ անխիղճ և լիրբ զրպարտութիւն վերաբերի նոյնպէս առ հայրենակիցս իւր, վասն զի և դոքա թողեալ զհին սլաւոնականն՝ մատենագրեցին մինչև ցայսօր անհամար մատեանս 'ի նոր լեզու աշխարհիկ և սովաւ միայն մտածեն, խօսին և մատենագրեն յաւուրս մեր· խոստովանիմք, թէ այդպիսի բանից մարթ էր միայն ծնանիլ 'ի միտս խելագարութեամբ ախտացելոյն Ալիվիցկիոյ· բանիմաց և մտախոհ Ռուսք, ընդ որս և մեք այլապէս բնաւորեցաք ուսանիլ և վարդապետել:

Տե՛ս թէ զինչ ապա նոյն այր ծանօթաբանէ յիւրումն ճառի· «Не такъ смотрятъ на положеніе этого дѣла (որ է հակաճառութիւն երկուց կողմանցն՝ միոյն ջատագով լինելով հնախօս մատենագրութեանն, իսկ միւսոյն պնդելով և հաստատելով թէ պարտ է քաղաքագրել զնորն լեզու և յօրինել զայն գործարան ազգային լուսաւորութեան) Армяне, живущіе въ Индіи и преимущественно Калькутскіе обитатели. Мнѣніе всѣхъ сихъ склоняется въ пользу книжнаго языка. Калькутское армянское училище одно изъ лучшихъ армянскихъ училищъ служитъ разсадникомъ основательно образованныхъ молодыхъ людей. Имена мно-

гихъ изъ воспитанниковъ этого училища уже извѣстны въ новой Гайканской литературѣ, и Армяне съ гордостію указываютъ на высшій кругъ своихъ Калькутскихъ земляковъ, которые говорятъ между собою чистымъ книжнымъ языкомъ, а дѣти многихъ изъ нихъ пишутъ стихи, гладкостію и красотою слога не уступающіе лучшимъ произведеніямъ армянскихъ писателей.»

Պատասխանեմք անիմաստ առնդ այդմիկ. կալկաթեան հայք և գործք նոցա չե՛ն և չե՛ն մեզ օրինակք. օրինակս և առաջնորդս ունիմք մեզ զԵւրոպացիս, որք մերձաւոր են մեզ և լաւ քան զհնդկացի հայս ծանուցեալ իմացան զկարգ և զոճ ազգային լուսաւորութեան և մեծամեծ վկայութեամբք հաստատեցին ցայսօր զոր քաջ և պիտանի վարկան. իսկ հնդկացի բուռն մի հայք աւարին յօգուտ ազգի և ոչինչ. քանի մի հնախօս մատենից (իբր 'ի բազում՝ թարգմանութեանց յեւրոպականէն) 'ի նոցանէ առ մեզ եկաւորելոց չէ՛ր ինչ կարօտ ուսումնական հին դպրութիւն մեր, թո՛ղ զի չեն իսկ այնք և յականաւորացն ինչ: Վերստին տպագրութի՛ քանի մի հին հեղինակաց՝ ոչ միանգամ տպելոց յառաջագոյն առ 'ի Մխիթարեան ընկերութենէ 'ի Վենետիկ՝ չարժէ և յիշատակութիւն անգամ. բայց՝ թէ ո՞ւր մնան թագուցեալ 'ի խաւարի հոյակապ գիտնաւոր արքդ այդոքիկ զորս 'ի լոյս հանդիսացոյց կալկաթեան ուսումնարան հայոց, անգիտանամք բնաւին և հարցանեմք առ 'ի ուսանիլ. եթէ գոյ զօրութիւն, ապա ո՞ւր է ներգործութիւն՝ յայտարար մեծահռչակ այդր զօրութեան, վասն զի ամենայն զօրութիւն 'ի ներգործութենէ իւրմէ ճանաչի և սոսկ բաւիք առանց բանաւոր փաստից ոչինչ ապացուցանի: Հայք Ռուսաստանեայց պարծանօք՝ ասէ Ալիվեցկի՝ մատնացոյց

առնեն զմեծատուն հայրենակիցս իւրեանց 'ի Կալկաթա, որք 'ի մաքուր լեզու գրոց հայկաբանեն 'ի հասարակ կենցաղս, իսկ որդիք բազմաց 'ի նոցանէ շարադրեն ոտանաւորս որք հարթութեամբ և գեղեցկութեամբ ոճոյն չեն ինչ ընդհատ 'ի պատուականագունից գրուածոց հայ հեղինակաց։ Զարմանամք՝ զի պարոն Ալիվիցկիյ շատ քան զմեզ ճանաչէ զՀայս հնդկաստանի · բայց հարցանեմք զնա՝ թէ ուստի՛ առեալ իցէ զայդ ամենայն ծանօթութիւնս, ա՛րդեօք իցէ՞ ինքն հայագէտ և կարող անձամբ դատել և ապացուցանել զոր խօսին, թէ 'ի վայր 'ի վերոյ լրոց ուսեալ բարբառի, խաբէ զինքն և զայլ· լուծումն խնդրոցս ոչ ուրեք բացափայլի առ նմա · այլ մեք որ մտածողքս եմք՝ առանց փորձելոյ և քննելոյ ուսաք ընդունիլ և ոչինչ · և հարկաւորիմք ծանօթաբանել աստէն 'ի գիտութիւն պարոն Ալիվիցկիոյ և նմանեաց նորա· նախ առաջին՝ եթէ ամենայն տաղաչափութիւնք հնդկացի Հայոց այնպէս են ո̄պի տեսանի հատուած ինչ շարադրեալ առ 'ի յոհաննէ Ռուդալեան և եդեալ 'ի մատենին ընթերցանութեան տպելոյ 'ի մոսկվա յամի 1849՝ մակագրութեամբս ընտիր հատուածք քաղեալք 'ի գրոց նախնի և արդի հեղինակաց, եր. 207 և 208, ապա մեծապէս սխալի Ալիվիցկիյ կոչելով զայնոսիկ ոչինչ նուազս պատուականութեամբ քան զգրուածս հին հեղինակաց· յայդմ հատուածի ոչինչ տեսաք և տեսանեմք բայց զաննշան վաստակ համբակի ուրումն առանց բանաստեղծական քանքարոյ և աշխուժից երևակայութեան · երկրորդ՝ թէ հնաբար հայախօսեն ոմանց մեծատանց Հայոց 'ի հնդիկս՝ իբրև մնացուոր օրինակ՝ ոչինչ զօրէ տապալել զստուգութիւն փորձոց տեսելոց 'ի հանդիսի լուսաւորութ̄ե եւրոպէականացն ազանց ընդ դարս և ընդ ժամանակս։ Զոր ինչ անհնարաւոր

դատն հրաշագործել քաջ Եւրոպացիք , զլուսաւորութի̃ն իմն ժողովրդեան միջնորդաւ հին և մեռեալ լեզուաց, առ այդ բաւակա՞ն ճանաչի սակաւաթիւ մի ընկերութիւն Հայոց 'ի Հնդկաստան · այդմ կարէ միայն հաւատալ թեթեւամիտն Ալիվլիցկեյ, ո՛չ մեք և ո՛չ լուսաւոր եղբարք նորին Ալիվլիցկիոյ։ Զանկարմն առ 'ի հսկայից Եւրոպիոյ 'ի կարելիս համարիլ առ 'ի թզկաց հնդկահայոց՝ չէ՛ ապաքէն գիւտ մտաց առն խոհականի և ուսելոյ, այլ խելացնոր իմաստակի։

Զասացելոցն իւրոց զստուգութիւն ապացուցանել համարի Ալիվլիցկեյ օրինակ բերելով զհրատարակողն վերոյիշեալ ընտիր հատուածոց հայ հեղինակաց, ըստ որում չէ սորա հաւանեալ դնել 'ի մատենի իւրում շարագրածս նորոց հեղինակաց 'ի լեզու աշխարհիկ։ Ա̃պ մեզ թուի՝ անանուն հեղինակ մատենիդ համաձայն յոյժ ընթացեալ է առողջ բանի՝ ոչ ընդունելով անդր զգրուածս յաշխարհիկ բարբառ, վասն զի մտանաւոր նպատակ նորա էր ուսուցանել ոչ զնորին լեզու, այլ զհինն, ուրեմն և խառնել զնորին ընդ հնոյն անպատեհ էր ամենևին· բայց՝ այտի անկարէ հետևեցուցանել, ո̃պ առնէ Ալիվլիցկեյ, թէ հրատարակող հատակոտոր գրուածոցդ ախորժելով և նկատմամբ տարագիր անտի հանեալ իցէ զնորին հայկաբանութիւն։ Եղիցի՛ որ և է խորհուրդ հաւաքողի հայկական հատուածոցդ · եղիցի՛ որ և է մեկնաբանութիւն նորին առ 'ի Ալիվլիցկիոյ, այլ մեք հնչեցուսցուք աստանօր՝ թէ ո՛չ առաջին և ո՛չ վերջինս իշխան ինչ են առաջնորդ լինել Հայոց 'ի հանդիսի նոցայն լուսաւորութեան ըստ այժմեան պիտոյից ժամանակի · շա՛տ է Հայոց՝ առանց յաջ և յահեակ խոտորելոյ՝ ուշի ուշով միտ եդեալ ընթացից Եւրոպէացւոցն քաղաքականութեան , նոցին զհետ գնալ անմոլար շաւղաւ։

Մեծամեծ թողութիւն աղաչեմք զընթերցողս յառաջաբանիս, զի կարի յերկարեցաք աստէն 'ի ճառ. բայց կամիմք և ոչ զվերջին բանս Ռուսին Սենկովսկիոյ առանց յիշատակութեան թողուլ, որք են.

«По истинѣ, нельзя не удивляться Армянамъ. Гдѣ бы они ни жили, вездѣ самобытно проявляется ихъ національный характеръ, отличительныя черты котораго составляютъ дѣятельность торговая и умственная. Любовь къ литературнымъ произведеніямъ своихъ отечественныхъ писателей не покидаетъ послѣдняго торгаша, даже въ такихъ случаяхъ, когда его скромное образованіе не позволило ему читать эти произведенія. Живя въ Тифлисѣ, мнѣ случалось нѣсколько разъ видѣть собранія книгъ у людей полуграмотныхъ, которымъ книжный языкъ недоступенъ. Слыша о достоинствѣ какого нибудь сочиненія, они покупаютъ его и тщательно сохраняютъ его. На вопросъ: что это за книги? Армяне съ чувствомъ какого-то благоговѣнія отвѣчаютъ: это Моисей Хоренскій, это Чамчіанъ, это Егише. Такая безотчетная и безпредѣльная привязанность къ свѣтиламъ своей Литературы — говорятъ ясно, что для Армянъ, для которыхъ прошли невозвратно годины бѣдъ, терзавшихъ ихъ націю и часто уничтожавшихъ плоды народнаго генія, что для Армянъ настаетъ вѣкъ высокой ихъ образованности.»

Տեսցուք զգեղեցկահիւս բանիցդ զխորհուրդ՝ խնդրելով զոր 'ի նոսին ճշմարտութիւն՝ անաչառ միտօք: Ուր և իցեն հայք՝ ասէ Սենկովսկեյ՝ յամենայն տեղիս 'ի վեր երևի ինքնօրէն ազգային բնաւորութիւն նոցա, որ է վաճառաշահութիւն և ժրագլխութիւն յիմանալիսն. մինչև այն զի և յետին վաճառա-

կամ հայոց՝ թէև առ նուազ կրթութեանն անբաւական իցէ հասկանալ զգրուածս հայրենի հեղինակաց՝ բերի սիրով և յարգանօք առ վաստակս իւրոց մատենագրաց. այո՛ նաև արք կիսով չափ գրագէտք 'ի տփխիս՝ առ որս տեսեալ աւէ Ալիվիցկիյ ժողով հայ մատենից՝ հարցեալ 'ի սմանէ թէ զի՞նչ գրեանդ իցէ՝ պարծանօք և երկիւղածութեամբ իմն պատասխանեն՝ թէ այս՝ Մովսէս Խորենացի է, այն՝ Զամչեան, միւսն՝ Եղիշէ, և այլն:

Տուր և առութիւն վաճառաց լեալ առ հինս մեր՝ ուսանիմք և՛ 'ի մերոց և՛ յօտարազգի հնախօսաց և այն՝ ընդ երիս ճանապարհս, որ է՝ ընդ Կասպից ծով, ընդ Պոնտոս և ընդ Եփրատ մանաւանդ: Զնաւարկութենէ Եփրատայ զոր առնէին հայք սակս տանելոյ վաճառս 'ի Հայաստանեաց 'ի Բաբելոն խօսի և Հերոդոտոս յառաջին գիրս պատմութեան իւրոյ, գլ. 194, ստորագրելով միանգամայն զկազմած հայկական նաւուց յոստոց ուռենեաց՝ մորթապատեալ արտաքուստ ըստ օրինակի յատակի, ոչ զխելս նաւուն և ոչ զառաջսն սրածայրեալ ունելով, այլ վահանաձև բոլորակեալ. վաճառք Հայոց այսպիսի նաւուք տարեալ 'ի Բաբելոն էին գինի մանաւանդ. գիտեմք նոյնպէս առ և տուրս լեալ 'ի հնումն 'ի մէջ Հայոց և Փիւնիկեցւոց՝ որ 'ի Հայաստանեայց ընտիր երիվարս առեալ տանէին 'ի վաճառածութիւն յայլ աշխարհս: Բայց՝ յօրինակաց աստի չիք տակաւին տեղի հետևեցուցանելոյ՝ թէ մի 'ի բնաւորութեանց Հայոց էր վաճառաշահութիւն, վասն զի այդ հասարակաց է ամենայն ազգաց, փոքր 'ի շատէ քաղաքացելոց, և ոչինչ նշանաւոր զհայս գործէ: Զայլ կերպարանս յանդիման կացուցանէ մեզ վաճառականութիւն Հայոց 'ի բառնիլ իշխանութեան ազգին. Հայք կորուսեալ զթագ արքայութեան և ցանեցիր յերեսս երկրի

վտարանդեալ, անտուն և անհայրենիք, ծառայ և ստրուկ ամենայն ազգաց Ասիա, Եւրոպա և Աֆրիկա՝ մի միայն հնար նիւթականին կենդանութեան զվաճառականութիւն տեսանէին՝ զաղբիւրն հարստութեանց և զառաւել հեշտին ուղի հոգալոյ զկարևոր պիտոյս կենաց, ուստի գնալով յառաջացաւ հակամէտ բերումն հայոց առ վաճառականութեանս արուեստ, որ իբրև ծնունդ և արարած բռնազբօսականն հարկի՝ քաջ 'ի բաց հեռի է 'ի վաճառականութենէ Եւրոպացւոց՝ վերաճելոյ և ծաղկելոյ առ 'ի զարգացմանէ քաղաքականութեան։ Վաճառականք հայոց 'ի Ռուսաստանեայս իբր 'ի բազումն գնեն և վաճառեն կերտուածս Ռուսաց, Պարսից և Բուխարացի եօզպէկ Թաթարաց, բայց ինքեանք չունին գործատունս վաճառաշահական յօրինուածոց, ըստ որում զուրկ և ամայի նստին յիւրաքանչիւր գիտութեանց կարևորելոց առ այդ վախճան. առ Հայս չիք ընկերութիւն վաճառականաց՝ որով լինի միլիոնս 'ի գործ խաղացուցանել և միլիոնս վերստին շահիլ, այլ այր իւրաքանչիւր ըստ չափու իւրոյն գումարի դրամոց գնէ և վաճառէ. զայս առանձնութիւն և պակասութիւն ընկերական ոգւոյ բացատրելի է նոյնպէս անկրթութեամբ և անլուսաւորութեամբ ազգին։ Միանգամայն ասացից. վաճառականութիւն հայոց չէ խարսխեալ 'ի վերայ բարոյական հիմանց, այլ 'ի հարց յորդիս անցեալ ժառանգութեամբ և սովորութեամբ՝ պաշտեալ լինի իբրև առաւել հեշտին ճանապարհ հայթայթելոյ զհնարս նիւթականին բարեկենդանութեան, և սա իսկ է պատճառն տխուր եղերում տեսարանիս, զի գրեթէ բոլոր ազգն 'ի վաճառականաց բաղադրի, իսկ գիտնական և ոչ մի. ըստ որում չիք յարգ գիտութեան, ուրեմն և ոչ իսկ խնդրողք գիտութեան, վասն զի ամենայն արժանաւորութիւն դրամով չափի և դրամ

է՝ առ որ բերին ուխտ և փափագ սրտի իւրաքանչիւր։ Զվաճառաշահութիւն Հայոց անմասն և անբաժին մեք տեսանեմք յամ արդարացի պարծանաց և նախատինք քան թէ փառք հայկականս անուան. ի՞ւ ճանաչի հարստութիւն ազգի. կարծեմք՝ մեծագործութեամբք յօգուտ ազգի. բայց ո՞ւր են մեծագործութիւնքդ. ո՞ւր են պտուղք և արգասիք մեծամեծ այն գանձուց զոր շտապ տագնապաւ ժողովեալ կուտակեն վաճառաշահք Հայոց։ Մի՛ է և մի ՚ի սկզբանէ անտի մինչև ցայժմ բարեացապարտ տունն Լազարեանց՝ որոց ազգասիրական տուրք պահին եկեղեցիք յերկուս մայրաքաղաքս Ռուսաստանեայց և ուսումնարանն արևելեան լեզուաց ՚ի Մոսկվա. մի է և մի տունն Լազարեանց ՚ի Հայս Ռուսաստանեայց՝ յոր իբրու ՚ի վայր դալարի զուարճացեալ հանգչին աչք ուղևորին ընդ անմխիթար անապատ Հայոցս կենդանութեան ՚ի Ռուսաստանեայց աշխարհի։ Բայց մի ծաղիկ գարուն ոչ առնէ. միակ Լազարեանք ազգին համօրէն օգնել ոչ ուժեն. պիտո՛յ են միահաղոյն ձեռք և սիրտք ազգին՝ եթէ գո՛յ ազգ հայկական ՚ի Ռուսաստանեայս, և եթէ պա՛րտ էր ըստ իմիք ՚ի յարգի կացուցանել զՀայութիւն՝ մինչ ՚ի սպառ անարգեալ։

Հայք ՚ի Տփխիս՝ ՚ի լուր ականաւոր ինչ մատենի հայ հեղինակի՝ գնեն զայն՝ ասէ Աւլիվէցկի՝ և պահպանեն խնամով և զգուշութեամբ, սակայն ուսումնասիրել և հասկանալ զայն կարեն ոչ, ըստ որում պակասին ՚ի գիտութենէ գրոցն լեզուի. բայց սոյն իսկ Հայք պարծանօք և երկիւղածութեամբ խօսին զայնմանէ, զոր ո՛չն գիտեն, ո՛չն հասկանան. ո՞վ տղայամիտ առնդ այդմիկ որ ՚ի գովեստս գրէ Հայոց զպարծիլ սոցա յայն՝ զոր ունին ոչ. վասն զի՝ զի՞նչ օգուտ ՚ի գեղեցատիպ և ՚ի վայելչակազմ մատենից շարելոց մի առ միւսով՝ եթէ ամփոփեալքն ՚ի ներ-

քինս մատենից անխմնալի են ունողացն, ուրեմն և անկարող իսկ են լինել ըստ իմիք առիթ լուսաւորութեան նստելոցն 'ի խաւարի. բայց զսոյն զայս անտեղի պարծանս, զսոյն զայս մռայլ մնաց առ անհասկանալեօքն, իմա՛ զհին մեռեալ լեզու գրոց կարապետել՝ ասէ Ալիվիցկէյ՝ 'ի գալուստ դարու մեծի իմն քաղաքականութեան առ Հայս։ Իսկ մեք ասեմք և կնքեմք. դիւրին ևս է յարուցանել զմեռեալս 'ի գերեզմանաց քան թէ միջնորդութեամբ հնոյն լեզուի զնորն լուսաւորել զժողովուրդ. խաւարն լուսով փարատի և ոչ խաւարաւ, կեանք 'ի կենդանութենէ աղբերանայ և ոչ 'ի մեռելութենէ. իսկ որ 'ի հակառակն բերի 'ի կարծիս, խելակորոյս զնա ասել ոչ տարակուսիմք։ Sapienti sat!

*Τῶν καλῶν καὶ τιμίων τὴν εἴδησιν ὑπολαμβάνοντες, μᾶλλον δ' ἑτέραν ἑτέρας ἢ κατα ἀκρίβειαν, ἢ τῷ βελτιόνων τε καὶ θαυμασιοτέρων εἶναι, δὶ ἀμφότερα ταῦτα τὴν τῆς ψυχῆς ἱστορίαν εὐλόγως ἂν ἐν πρώτοις τιθείημεν. δοκεῖ δὲ καὶ πρὸς ἀλήθειαν ἅπασαν ἡ γνῶσις αὐτῆς μεγάλα συμβάλλεθαὶ. μάλιστα δὲ πρὸς τὴν φύσιν. ἔστι γὰρ οἷον ἀρχὴ τῶν ζώων.*

Արիստոտէլեայ յաղագս Հոգւոյ գիրք Ա՟։

« What a piece of work is the man : How noble in reason ! How infinite in faculties ! In form and moving how express and admirable ! In action , how like an angel ! In apprehension, how like a God ! The beauty of the world ! The paragon of animals ».

HAMLET A. II. Sc. 2.

Վաղ ուրեմն, մինչ դեռ մարդիկ ոչ յայլ ինչ ուշոր էին ուղղեցուցանել զճիգն մտաց, բայց 'ի նիւթականս և 'ի հայթայթումն կարևորագունիցն պիտոյից՝ մղի էն մնունդ, հանդերձ, պատսպարութիւն 'ի վնասակար ազդեցութեանց եղանակի, յափշտակող գազանաց և այլոց նմանեաց, այն վաղ ուրեմն հանդիսացան յաշխարհի անհատք ոմանք՝ որք զգլխաւոր նիւթ մտածելեացն իւրեանց առեալ 'ի մարդոյս՝ զհետ ձգեցան քննել զոր 'ի նմա յատկութիւնս, կարողութիւնս և զօրութիւնս, ուստի պատուասիրեալ եղեն մականուամբս իմաստուն, զո՛ր օրինակ Թալէս և Սողոն առ Յոյնս։ Այս քննութիւն անձին յաճախեալ օր քան զօր՝ խելամուտ արար զմարդիկ՝ թէ քանի՛ կարևոր այն իցէ և ծանրակշիռ՝ ըստ որում ծանօթարար բնութեան մարդոյ, տրամադրութեանց նորին և որ 'ի նոցունց լրութիւն վերաբերեալ ընդունակութեանց, այլև վախճանին առ որ կարգեալ է մարդ յաշխարհի աստ, և յուսոյն՝ որք տարեալ հանեն զնա ըստ սահման կենցաղոյս 'ի յաւիտենականութիւն անդր։

Մի միայն նախապատճառ համօրէն իմացական մերոյս գոյութեան է հոգի․ 'ի հետաքննութեանց հոգւոյ, 'ի խուզարկութենէ զանա-

զան կարողութեանց նորա, 'ի բաղդատութենէ անտի միայն առ միւսն, նոյն և 'ի թևակոխութեանց մերոց զբացատրութեամբ նոցին յառաջանայ գիտութիւնս՝ ասացեալ Հոգեբանութիւն, որ առ յոյնս Պսիխօլօգիա լսի և իբր 'ի բազում առ Եւրոպացիս։ Սատարութեամբ փորձոյ և եթ լինի մեզ չափել զազդեցութիւնս տպաւորեալս առ 'ի հոգւոյ որ 'ի մեզ յինքեանս և որ յայլս· այսպէս միայն ճանաչի առ 'ի մէնջ հոգի, վասն զի որպէսն նորա ըստ ինքեան անմատչելի է մերում տեսութեան։ Եւ զի առ 'ի գիտել զնա, կարօտիմք հարցաքննելոյ զփորձն մանաւանդ, զհետ գայ լինել Հոգեբանութեան գիտութիւն ինչ հիմնացեալ 'ի փորձս, որոյ վասն սովոր է կոչել փորձական Հոգեբանութիւն։

Այս գիտութիւն ընդարձակ է յոյժ, վասն զի քննէ զբանական հոգի մարդոյս 'ի համօրէն պաշտամունս նորա և 'ի տպաւորութիւնս, յամ հանգամանս նորա և յորպիսութիւնս՝ որք տարբերին կերպարանին ըստ դաստիարակութեան, ըստ ընդունակութեանց, ըստ կարողութեան կամ թուլութեան մարմնոյ, ըստ սեռի, ըստ կրօնի և ըստ տնտեսութեան օրինաց 'ի տէրութիւնս · և ոչ չափ ինչ· այլև հասանէ նմա խուզարկ լինել ներքին ախտից և իմացուածոց մարդոյ, կրից նորա և գործոց, խորհրդոց մտացն, յօժարութեանց և խօսից։ Մանրախուզիւ 'ի ճառ հանդիսանալ զասացեալս էր ապաքէն ըստ կէտ մերոյս նպատակի արշաւել· ուստի շատանամք աստանօր անցանել ընդ կարևորագոյն գիտելիսն՝ որոց ծանօթանալ պարտականութիւն է իւրաքանչիւր անձին կրթելոյ, որոյ առեալ առնի նախաճաշակ զօգտընծայ գիտութեանս՝ ինքնին թևակոխեսցէ յե՛ս խորամուխ ուսումնականութիւն սորա։

Սատարոյք մեզ յուսումն Հոգեբանութեան պէսպէս որականան· նախապատիւն յաղբերականսն՝ յորոց պա՛րտ է մեզ հանել զծանօթութիւնսն, ամփոփի 'ի ներքս 'ի մեզ՝ զննելով մեր զանձինս ճշդիւ և խնամով· յոր պա՛րտ է յարել և զառ 'ի մէնջ խուզմունս այլոց անձանց, միանգամայն և հարցաքննել զմատեանս հեղինակաց՝ որոց հաւատարմութեամբ և փորձով նկարագրեալ է զմարդ 'ի բազմօրինակ հանգամանս կենաց։ Սմին իրի պատմութիւն 'ի հասարակի և արժանահաւատ վարքագրութիւնք 'ի մասնաւորի բազում օժանդակեն հոգեբանին։ Ոչինչ նուազ օգնեն նմա առանձին այլևայլ

որպիսութիւնք հոգւոյ, բե՛ր առել զառանցելոյն մտօք, զքնաշրջիկ ախտացելոց և նմանեաց: Բայց անկ է հոգեբանին 'ի զննողութիւնս իւր խոյս տալ յամենայն 'ի կանխակալ վարկածից և ընթանալ մեծաւ ըստ կարի ճարտարամտութեամբ, առ 'ի զերծ լինել 'ի խաբանաց. չէ՛ ներեալ նմա վստահիլ մինչ 'ի սպառ յիւրն 'ի սեփական կարծիս, եթէ չունիցի առաջի աչաց անհակառակելի իրողութիւնս, այլ պա՛րտ է նմ անձնապահ գոլ յիւրաքանչիւր միականի տեսութենէ և կենցաղակցութեամբ ընդ մարդիկ յոր և իցէ վիճակէ հայթայթել իւր զընդհանուր մարդագիտութիւն: Մեծ են առ հասարակ դժուարութիւնքն՝ որ ընդառաջ պատահին հոգւոյն խուզարկուի, բայց ոչինչ զօրեն ընդդէմ կալ հաստատուն կամաց և անպարտասելի ժրագլխութեան:

Չէ՛ մեր կարողութիւն արտաքին զգայարանօք զննել զհոգի ո՟պ ինչ մի 'ի զգալեաց անտի, այլ ներքին զգայարանօք միայն. և այն ևս գործ է յաւէտ. վասն զի մինչ դեռ 'ի խոյզ ելանէ հոգի, պարտի և ինքն 'ի ներքս անկանիլ խուզարկութեան, ապա ուրեմն է համանգամայն զննող և զննելի. թո՛ղ զայս. տեսիլք իմանալի բնութեան, որ է՝ կենաց հոգւոյ քան զտեսիլս տարրական աշխարհի թռչո՛ւն են և անցաւոր և ոչ զօրեն երկրորդիլ հեշտեաւ, ուստի դժուարանայ խուզարկուն ըմբռնել զնոսա: Որ մանաւանդ խափան լինի զննողականն հանճարոյ՝ է ախտ կրից որով կարի իմն ամբոխեալ և պաշարեալ բանականին հոգւոյ՝ անձեռնհաս գտանի 'ի դատ և 'ի կշիռ զօրպէսն իւր մատուցանել: Ոչ այլօրինակ բայց եթէ 'ի տեղի տալ կրից հնարաւոր է 'ի քննութիւն գալ անձին իւրոյ. թէպէտ՝ 'ի լինել այսր, բնաւորեալ է դարձեալ մեկուսի կալ պատշաճաւորն լուսափայլութիւն, ըստ որում հոգի 'ի հակառակամարտին իւր ընդ կրից՝ կարի իմն յածեալ զայլովք առարկայիւք ոչ ժամանէ ապա տալ անձին զհամարս իւրոյն որպիսութեան, բայց ընդ աղօտ յոյժ: Այլև չէ՛ արժան մեզ վարկանիլ զանձինս անսայթաքելիս ամենևին 'ի խուզելն զայլոցն հոգւոյ որպիսութիւնս, վասն զի զիւրին ինչ է խաբիլ մեզ՝ որ անկարողքս եմք խորամուխ 'ի ներքինս մարդոյ լինել. բազում ա՛յն է, զի դատելով զբոյս բարուց այլոց՝ խոտորիմք 'ի ճշմարտութենէ, վասն զի ախորժելով և նկատմամբ այլպէս զանձինս ցուցանեն մարդիկ՝ քան զոր են ստուգա-

թեամբ . թո՛ղ զի մեք խակ դաւաճանեմք զանձինս՝ մինչ կամք են դատ առնել ուրոյն մերում:

Ահաւասիկ են գլխաւոր դժուարութիւնքն՝ որոց կայ մեզ յաղթել, զորս և յաղթահարեալ միանգամ՝ ժամանեսցուք եւս քան զեւս խելամտել թէ քանի՛ արդեօք լիցէ գիտութիւն մարդկային հոգւոյ և օգտընծայ իւրաքանչիւր ումեք: Ուսումն հոգեբանութեան տածէ զմիտս, պարարէ զսիրտ և կորովի յոյժ բերէ զմտածողական զօրութիւն և զխուզողական հանճար: Այս ուրեմն հանդիսանան որ 'ի մարդումս բազմօրինակ բնատուր ընդունակութիւնք, կարողութիւնք և առաւելութիւնք՝ որովք նոյն տարբերի յայլոց կենդանեաց: Հոգեբանութիւն ծանօթս և գիտունս գործէ զմեզ հակամիտութեանց, սրտից, ախտից, վարուց և սովորութեանց մարդկան. սովին և այսու լինի մեզ խնամել զբովանդակ յարգ և զվերին խորհուրդ մարդկեղէն կենդանութեան: Հիմունք փորձական հոգեբանութեան են՝ յորոց վերայ խարսխեալ հաստատին դաստիարակութիւն մարդկութեանս, քաղաքագիտութիւն, հմտութիւն կառավարութեան համօրէն, իմաստասիրութիւն 'ի հասարակի. կարևոր է սա և անհրաժարելի ամենայն ումեք՝ յոր կոչումն և կոչեալ իցէ, կարևոր առաւել ամենեցուն՝ եթէ կամ է ունել զանձն առ կրթեալս և բանագէտս ըստ իմիք: Բայց զմեծապէս և զյաւէտ ընդարձակ գիտութիւն սորա պահանջեն մանաւանդ թէ դաստիարակ մանկանց, ուսուցիչ ժողովրդեան, օրէնսդիր ազգաց, բժշկական և իրաւաբան, որք առանց սորայս ձեռն տալոյ չեն 'ի կարի պաշտել զպաշտօն իւրեանց, բայց թերակատար յոյժ: Զգլխաւոր վարդապետութիւնս փորձական հոգեբանութեան մա՛րթ է աւանդել յառաջիկայ հնգեակ հատուածս. սոքա են. ա. ընդհանուր խուզարկութիւնք Հոգւոյ և Լծակցութեան նորա ընդ մարմնոյ. բ. յաղագս Զգայականութեան. գ. վասն Մտաց կամ Հանճարոյ. դ. յաղագս Ախտականին. ե. վասն Յանկականին:

## 5

### ա. Ընդհանուր յարաբերութիւն հոգւոյ և ազդեցութեան նորա ընդ մարմնոյ.

'Ի սկզբանէ անտի սովորութիւն եղև բաշխել զմարդ 'ի մարմին և 'ի հոգի. հոգին՝ միջնորդելով արտաքին զգայութեանց՝ առեալ զտպաւորութիւնս յառարկայից անտի տարրական աշխարհի, ընդունակ է վերածել զայնս 'ի յիշողութիւն՝ հարուստ լինել ժամանակաց 'ի վերայ անցելոց։ Այս է նախապատճառ իմանալի զգայութեան հանօրէն, էակն՝ որ խորհի 'ի մեզ, դատէ և ուղղէ ըստ հաճոյս զգործականութիւն մեր բովանդակ. յերևել սորա 'ի յայտնութիւն մտանէ կենդանութիւն մեր. 'ի խոյս տալ սորա կապեալ է մահ. սորայս սատարելովն յառաջ գան շարժութիւնք մեր. բարեմնութիւն և ամնութիւն աղբերական ատուի. յաղդեցութիւն սորա կախեալ կայ ներքին կենդանութիւն, առողջութիւն և զկապակցութիւն նոյն ինքն մտաց. հաճութիւն և տհաճութիւն ընդ անձին իւր, ցաւ և հեշտութիւն միանգամայն զգայնան ատոր, վասն զի սա է՝ որ խորշի յանախորժիցն և զհետ լինի ախորժականացն։ Ըստ այսմ է հոգի ներքին, կարևոր, բաւական և անիմանալի իմն պատճառ ազդեցութեանց 'ի մեզ և զմեօք նկատելոց։ Տպաւորութիւնքս այսոքիկ 'ի յայտ գան տարբեր իմն եղանակաւ, որոյ վասն և ենթադրեմք այլևայլ կարողութիւնս՝ որք զի մարդութեամբ, ջանիւք և մտադրութեամբ առ մեծապէս աճումն են հնարաւորեալ, կարեն նկատել աստանօր իբրև ընդունակութիւնս ամփոփեալս 'ի մարդ։ Ունիմք ակնարկել 'ի մարմին որպէս 'ի գործարան հոգւոյ, ըստ որում կենաւ և սերտ կցորդի սա ընդ առաջնոյն։ Գիտութիւն արտաքնոց՝ նպաստելով գործարանաց զգայութեան և ջղաց մարմնոյ՝ հասանէ առ հոգի, որպէս և սա ինքն կամելով ազդել յարտաքինս, ներգործէ զխարդ և յօժարի՝ 'ի մկանս, յոսկերս, 'ի յօդուածս և 'ի ջիղս մարմնոյ նոյն և շարժէ զնոսա։

Մարմին մարդոյ է ինչ մի գործարանական, որ է՝ զուգադրեալ յայլևայլ մասանց՝ ո՛չ առանց փոխանակի ախտաղնելոց յիրեարս, այլ եղելոց փոխանակս ըստ ինքեանց կամ միջնորդս պահպանութեան բոլորին։ Իւրաքանչիւր մի 'ի մասանց ասոր է որ ներգործէ 'ի ձեռն միւսոյ և է որ պաշտէ զմիւսն։ Աճումն մարմնոյ չէ մեքենայաբար՝ մի 'ի

վերայ միոյ բարդելով, զո՛ր օրինակ դիզանան լերինք աւազակոյտք յերեսաց մրրկի, այլ ըստ ճիշդ և սահմանափակ օրինաց, 'ի ներքուստ արտաքս, սեփականելով մարմնոյ զնիւթս և 'ի կիր զայնս արկանելով 'ի պէտս ուրոյն կազմածոց և վախճանից։ Հոգի օժանդակեալ 'ի ջղաց ընդունի իմացուածս և պատկերագիրս իրաց և տպաւորեալ 'ի մարմին շարժէ զնա։ Ջիղք բովանդակ եղանին յուղղոյ իբրու 'ի հասարակաց աղբերականէ ելեանց և 'ի ուղխիւ ծաւալին ընդ ամենայն մասունս մարմնոյ՝ արձակեալ յանհամար նրբաթելս կապակցեալս ընդ միմեանց 'ի ձեւն համախտական ատացեալ ջղին։ Զգացմունք առ 'ի ջղաց ներգործեալք՝ կէս մի ախորժ են և կէս մի անախորժ, որ և մատնեն առաջի հոգւոյ իբրև ցաւ կամ հեշտութիւն։ Որ ինչ մասունք մարմնոյ զուրկ են 'ի ջղաց, նոյն և անզգայ տեսանին յամենայնի, որպէս հերք և եղնգունք. իսկ սմին հակառակ յորս է գտանել ջիղս բազում յոյժ, են նոքա և զգալի յաւէտ, բե՛ր առել զծայրս մատանց։

Մարմին առանց հոգւոյ մեռեալ է. ուրեմն հոգի է միայնակ պատճառ կենդանութեան, սկիզբն կենսագործող նիւթոյն։ Հոգի է՝ որ ազդէ յուղեղն և 'ի ջիղս բովանդակ՝ որոց գրգռելով զմկունս՝ շարժեն զյօդուածս և զանդամս մարմնոյ։ Լծակցութիւն մարմնոյ և հոգւոյ յա՛յտ է 'ի հանապազօրեայ փորձոյ. մարմին քաջառողջ և կորովի կրէ յինքեան հոգի զուարթ. զօրէն հակառակին՝ տխրամիտ և զանդաղկոտ գործէ զհոգի մարմին տկար և ախտաժէտ։ 'Ի նուազել ուղղոյ նուազի և բանն կամ բառնի 'ի բաց. սա՛կ 'ի մարմնոյ յառաջ գայ բերումն առ մնունդ, առ ջերմութիւն և առ շարժումն։ Քանի՛ կարգաւորիչ զարձեալ է ներգործութիւն առոյգ և զուարթ հոգւոյ 'ի մարմնի. աւետիք ուրախութեան, գործ ազնուական, ճշմարտութիւն ինչ զտեալ բազմատաժան խուզողութեամբ՝ ընծայեն մարմնոյ նոր իմն զօրութիւն, նոր իմն կենդանութիւն՝ 'ի յայտնութիւն եկեալ արտաքութեամբ 'ի շարժուածս, այլակերպութեամբ 'ի դէմս և շուտափոյթ զարկաւ բազկի։ Որչափ ազդոյ է յայտնութիւն հոգւոյ 'ի հասարակի, նոյնչափ անլթար և մերկապարանոց յառաջ մատչին կերպարանք երեսաց և գլխոյ. մինչդեռ կեամք 'ի կենցաղս յայմիկ, ո՛չ այլազգ բաւեմք տեսանել զհոգի՝ բայց եթէ միջնորդաւ մարմնոյ։ 'Ի խոկել մահու զգաշնակցութիւն

հոգւոյ ընդ մարմնոյ, վերջնոյ և նորուն գործակցութիւն 'ի զգալի աշխարհիս։

Այլ թէ զիարդ հոգի և մարմին 'ի լծակցութեան իւրեանց յաստիս ներգործեն յիրեարս, զայդ 'ի գիտել անկարանամք. վարկածք և կշռադատութիւնք ամէն իրի արարեալք ցայսօր՝ չեն անկ փորձական հոգեբանութեան։

## Բ. Յաղագս Զգայականութեան.

Զգայականութիւն իմանամք զկարողութիւն մարդոյ նկարագրել 'ի միտս զառարկայս 'ի ձեւն տպաւորութեանց. որ է կրկին. արտաքին և ներքին, վասն զի փոփոխութիւնք նկատեալք 'ի հոգի մեր, կէս մի յառաջ գան 'ի զգայութենէ անտի արտաքին առարկայից որք տարբեր են 'ի մէնջ, և կէս մի են նոյն ինքն իմացուած ներքին մերոյս ոգւոյութեան։

Անընդմիջական նկարագիրք առարկայից՝ միջնորդելով կրկին այսր զգայականութեան՝ յանդիման եղեալք հոգւոյ՝ տան զգայական տեսութիւնս. 'ի սոցունց համարի են նկարագիրք աչաց, հոտոտելեաց, լսելեաց և այլն, ընդ որս չէ արժան շփոթել զնկարագիրս կամ զտեսութիւնս երևակայականին՝ զներգործեալս առ 'ի յիրաց բացակայից՝ որք ոչինչ տպաւորեն 'ի զգայարանս, բա՛ց առեալ զնկարագիր աշխարհի միանգամ եւեթ առ 'ի մէնջ տեսելոյ. սոյին վասն պահանջի՝ զի այնք՝ որ ունին շօշափել զզգայութիւն՝ լինեն առընթերակաց, որպէս զի կարիցէ զգալի առարկայն կամ մատչել յանընդմիջական հաղորդակցութիւն ընդ հոգւոյ կամ թէ՝ 'ի մէջ անկանելով այլոյ ինչ նուրբ նիւթոյ՝ հասանել առ զգայութիւն. զոր օրինակ 'ի ձեւն օդոյ մատչին 'ի ռնգունս մեր իրք հոտոտելիք։

Այժմ դառնամք առ կարողութիւնս նկատել զոր արտաքոյ մերոյս անձին է աշխարհ և զորս 'ի մեզ գոյանան փոփոխութիւնք. նախ առաջին ելցուք 'ի Ճառ զարտաքին զգայութենէ՝ որ բաշխի 'ի հնգեակ ազգս զգայականութեան, այք են շօշափութիւն, Ճաշակ, հոտոտումն, լսողութիւն և տեսութիւն։ Իւրաքանչիւր մի 'ի սոցունց յայտնեցանէ 'ի մեզ որոշ որոշ իմացութիւնս՝ որ առեալ միանգամայն՝ չեն բայց տարբեր չափ և կշիռ միոյ ընդհանուր զգայութեան՝ յոր և նման եօթնեակ գունոյն յառաջ

եկելոց 'ի զանազան բեկբեկմանց միոյ և եթ ողխտակափայլ շառաւիղի լուսոյ: Մարմին է նրբու վերլուծիչ ապակի (*) ընդհանուր զգայութեան հոգւոյ · լսելն , տեսանելն , ճաշակելն և նմանիք են միայն այլևայլ բեկբեկմունք միոյ ճառագայթի լուսոյ զվերլուծիչ ապակեաւն: Են մեր սմանք զգայարանք՝ այնպէս սրակացեալք մինչև զօրել արտաքին իրաց շօշափիլ առ 'ի նոցանէ: Անբացատրելի ցայսօր մնայ մեզ թէ յինչ պատճառաց հոգի զաւ 'ի միջէ անդամոյ ընկալեալ տպաւորութիւնն ոչինչ զգայ յուղեղն , որ է տիրապէս բնակարան զգայականին· բեր առել· խոցեալ ուրուք զձեռն իւր , ինչ ոչ զգայ յուղեղն, այլ 'ի ձեռնն միայն: Հնար է դնել գործական և հոյեցական զգայարանս· յառաջինս սակի են հոտոտելիք, շօշափելիք և ճաշակելիք· 'ի յետինս՝ տեսանելիք և լսելիք: Շօշափելիք տան մեզ գիտել զչափ և զկշիռ խառնուածոյ և խառնուածոյ թեան մարմնոյ, ուստի են բնական իմն զգայութիւն , մինչ հոտոտելիք և ճաշակելիք ծանօթս մեզ բերեն զքիմիական զուգադրութիւն տարրականաց, որոյ վասն մարթին առել քիմիական ըզգայութիւնք:

Բեր անցցուք կրկին համառօտիւ ընդ մի մի 'ի տարբեր զգայութեանց այսի: Շօշափումն լինի՝ անընդմիջաբար մեղմ կամ սաստիկ տպաւորելով առարկայի իրիք 'ի մարմին · որ հանդիպի յամենայն մասունս մարմնոյ, 'ի ջղաւէտսն մանաւանդ: Առաւել նուրբ է շօշափումն 'ի ծայրս մատանց , ըստ որում են աղբերք շօշափական զգայութեն· սորայս օգնականութեամբ գամք յըմբռնումն որակութեանց իրաց , որպիսի են կերպարանք առարկայից , կարծրութիւն կամ փափկութիւն , ողորկութիւն կամ անողորկութիւն , դադար կամ շարժութիւն , մեծութիւն կամ փոքրութիւն և այլ որ ընդ սոքօք բերին: 'Ի ձեռն ջղայց լեզուի և քմաց լինի ճաշակելն · զրգռիչ մասունք կերակրոց և ըմպելեաց շփելով զնուրբ պտկունս

(*) Այսպէս և մեք ըստ այլոց հաւանեցաք առել 'ի հայումս զոր առ Եւրոպէացիս պրիսմա ըսի · ձայն յունական πρίσμα, որ է մարմին եռակուսի՝ ձևացեալ իբրև սիւն եռանկիւն, թափանցիկ նիւթով, սովորաբար ապակեայ· գործի սրով բնախօսք փորձս փորձեն զօրակութեան լուսոյ և գունոց:

լեզուի ներգործեն զճաշակացն բազմազանութիւն · այսու տարբերեմք զքաղցրն 'ի դառնէ, զաղին 'ի թթուոյ և այլն որ ըստ կարգի։ Մերձաւոր յարակից ճաշակին է հոտոտումն· երկոքին սոքա աջակցին միմեանց 'ի խտիր առնելն ընդ ախորժականս և ընդ անախորժս, ընդ վնասակարս և ընդ օգտաւէտս, և միօրինակ հրապուրեալ լինին յառարկայից, քանզի որպէս թուեցին մասունք աղային, իւղային և ծծմբային մարմնոց շօշափելով զջիղս ռնգաց, ազդեն զհոտոտումն, յար և նման պատճառեն զճաշակ՝ շօշափելով զջիղս լեզուի։ Ազդեցութիւն հոտոց բուռն լինի երբեմն · տալ զօրէն ծնանիլ նուաղումն սրտի, գօսանալ անդամոց և մահ իսկ։ Ջերմացն հարեալ օդոյ՝ առեալ բերէ զշառաչիւն ձայնից յականջս մեր, որով լինի լսելն· լսելիք են մի յառաւել նուրբ և սուր զգայարանաց և տեւեն 'ի մարդ տակաւին, մինչ 'ի վաղուցհետէ բարձեալ է ընդունակութիւն այլոց զգայութեանց· զոր օրինակ 'ի թալկացման անդ լսելի է գրեթէ իւրաքանչիւր ձայն, մինչ շօշափելիք, ճաշակելիք և տեսանելիք անգործ կան։ Շառաչիւնք և ձայնք բազմօրինակաբար բերին յականջս մեր· իբրև սուլումն, շչիւն, սօսափիւն, քրթմնջիւն և նուագ՝ գոյացեալք մանաւանդ 'ի բարձրութենէ և 'ի խորութենէ ձայնից։ Գործարանք տեսանելեաց են աչք· քանի՛ բազմազանութիւն առարկայից, քանի՛ հոյակապ տեսարանս 'ի բնութեան, քանի՛ հիացումն մտաց ներգործէ այն այս կարողութիւն· սա է՝ որով լինի մեզ ըմբռնել զնկարագիրս գունոց, լուսոյ, ստուերի, արշալուսոյ, մերձակայութեան և հեռաւորութեան, բարձրութեան և խորութեան, կերպարանաց, քանակութեան, շարժման և նմանեաց։ Պաշտօն տեսութեան՝ որչափ ինչ առ 'ի բացատրութիւն հնարաւոր՝ կատարի օրինակ զայս· լոյսն կամ նիւթ լուսոյ է մարմին ինչ նուրբ յոյժ, հեղանուտ և տարածուն անհնարին երագութեամբ· սոյն սա հատանելով անցանելով զհեռաւոր ճանապարհ իւր յարեգականէ անտի մինչև ցերկիր, որ է՝ քան միլիոն մղոնս գերմանացիս, հասանէ առ մեզ 'ի րոպէս ութ· 'ի փայլուն երկնային մարմնոյ անտի նիւթ լուսոյ աղբերացեալ տարածանի ճառագայթաբար 'ի վերայ ամենայն մասանց երկրի և մակերևութից մարմնոց, ուստի՝ բացարձակեալ շառաւիղաց լուսոյ 'ի ձև անկիւնաւոր ցոլացմանց, միջնորդութեամբ աչաց ժամանեն 'ի ցանցատեսակ տացեալ

ջղային թաղանթն և զուգախառնեալ ատամնօք 'ի մի վայր՝ հընարաւորեն զնկարագիր տեսանելի առարկային, որով անիմանալի իմն կատարի գործ տեսութեան։ Այսպիսի պատկերագիրք իրաց նկարին 'ի ջղաթաղանթ աչաց խոտորնակ կային, բայց ոչինչ ընդհատ երևին մեզ ուղիղ, վասն զի պատկերք մարմնոյ 'ի ջղամաշկի անդ չեն՝ բայց ուրուականք նոցին (*)։ 'Ի ձեռն հնդեակ արտաքին զգայարանացս ուսանիմք ճանաչել զիրս որ 'ի տարածութեան, նոյն և բաւական եմք ժամանել 'ի պատկանաւոր ծանօթութիւն նիւթական աշխարհի։

Ցուցուք 'ի նախաճառեալն զծանօթաբանութիւնս զայսոսիկ. իւրաքանչիւր ումեք տուեալ է ընդունակութիւն նկատել զառարկայս արտաքին աշխարհի․ բայց որչափ նուրբ են զգայութիւնք և վարժ, նոյնչափ ազդոյ տեսանի նկատողականն զօրութիւն․ զնոյն իմն փոխադարձաբար։ Ազդեցութեան արտաքին զգայութեանց զոյգ և կշիռ երևի գործարանացն որակութեան, թուլութեան կամ ուժգնութեան տպաւորութեանցն և զխտակցութեան հոգւոյ իւրոյն զաղափարի։ Այանց զուգապատշաճ որպիսութեան գործարանաց յանհնարինն է պատկանաւոր զգացումն․ զոր օրինակ կոյրն 'ի բնէ անկարող է նկարագրել մտօք զառարկայս՝ զոր հաւատոյ ծանուցեալ է մեր 'ի ձեռն տեսականին զօրութեան․ յար և նմին անբաւական է համրն մատչել յըմբռնումն ձայնից, ըստ որում պակասի նմա յանկաւոր կազմութիւն լսողականացն գործարանաց․ բայց այսոքիկ լինին այժմ և յայնժամ, երբ զգայութիւնն չիցէ բարձեալ յամենայնի, այլ նուազեալ միայն․ որ հանդիպի 'ի նուաղել ջղաց ցաւագարութեամբ իւիք, 'ի խախտել լծակցութեան ջղաց ընդ ուղեղն կամ յարատաւորել ոմանց մասանց ուղղոյ․ թող զայս․ միջնորդք (լսելոյ՝ օդն, տեսանելոյ՝ լոյսն) յորոց 'ի ձեռն հրապուրին զգայութիւնք, կարող են 'ի մէջ ածել զանազան խաբանս, որպէս այլեայլ բեկբեկմունք ճառաւիղաց լուսոյ և անդրէն բաղխումն ճառաչման ձայնից առ 'ի փոփոխմանէ հողմոց պատճառեալ։

---

(*) Բազում ինչ մարթ էր ճառել զլուսոյ․ բայց մեք շատացեալ ատամնօք որովք հայլին 'ի նպատակ մեր, զառաւելադոյնն՝ որ չէ տեղւոյս՝ բնախօսականն թողումք հանդիսի։

Ներգործեալն յառարկայէ իմեքէ տպաւորութիւն պարտի լինել ոչ կարի սաստիկ · եթէ ոչ · 'ի վերայ բերէ թմրութիւն · այլեւ ոչ կարի թոյլ · ապա թէ ոչ · չմարթի շօշափիլ առ 'ի զգայականէն · պարտ է հոգւոյ ուշի ուշով միտ դնել տպաւորութեանն' եթէ գիտակցին լինել կամիցի անձին իւրում · այսպէս վասն պահանջի հարկաւ, զի տպաւորութիւնն իցէ ոչ կարի թուլան եւ անցաւոր, այլ զկայ առցէ առ վայր մի, առ 'ի յանդիման մատչել հոգւոյ։ Իւրաքանչիւր զգայութիւն պէտս ունի սրանալոյ 'ի ձեռն վարժութեան, որ թէ քանի՛ նպաստէ կատարելութեան հոգւոյ, հիացման արժանի է · 'ի պակասել միոյ զգայութեան բոլորովին, կամ 'ի նուազել նորա մինչեւ յոյժ, սովոր են եւս քան զեւս կորովանալ այլք եւ նրբանալ ոչ փոքր ինչ · զոր օրինակ կոյրն ցայնչափ հնարաւոր է զիւրն քաջացուցանել զշօշափելիս, մինչեւ կարել խտիր առնել ընդ տարբեր գոյնս ասուեղինաց · կարի՛ նուրբ են լսելիք կուրաց · սոքա լսեն բազում ինչ որ անլսելի են այլոց։ Թէ քանի՛ քաջակորով բերէ զզգայութիւնս կանխաժամանակեայ մարդկէն զնոսա, է տեսանել յամենասուր զգայարանաց առ վայրենաբնակ ազգիս' որ 'ի մանկական տիոց անտի մարզութեամբ։ Նախկին զարթնու 'ի մարդն զգայութիւն շօշափելեաց, ապա հոտոտելեաց եւ ճաշակելեաց, հուսկ յետոյ տեսանելեաց եւ լսելեաց։ Երկոքին վերջինքս կարօտ գոն երկարաժամանակեայ կրթութեան առ 'ի հասանել 'ի ծայր լրութեան · բայց է՛ եւ սոցա առաւել ծանրագոյնն պաշտօն, ըստ որում բարձր 'ի գլուխ պանծան 'ի բնաւս Հոգւոյ' սատարելով երեւակայականն զօրութեան' կարող է հեշտեաւ եւս պատկերացուցանել ինքեան զտպաւորութիւնս իւր եւ զզգայութիւնս, որով ժամանէ առ յաւէտ կարեւոր տեսութիւն։

Կարողութիւն հոգւոյ յանդիման կացուցանել ինքեան զոր 'ի նմա եղեալ յեղափոխութիւնս' իմանամք զներքին զգայութիւն, որոյ միջնորդաւ ժամանէ հոգի յըմբռնումն իմացութեանց իւրոց, առաջադրութեանց, յօժարութեանց, դատմանց եւ կրից։ Սա ասի նմանապէս Ինքնազգայութիւն · 'ի սորայս համարի են ամենայն զգացմունք քաջառողջութեան եւ վատառողջութեան, ըստ որում ծնանին 'ի հաւասարութենէ կամ յանհաւասարութենէ գործարանական զօրութեանց մերոց։ Մեծ այն բազմութիւն ախտական կրից անկանի առ հասարակ 'ի ներքին զգայութիւն որոյ բնակարան' ոչ ուսու-

ցանէ փորձն՝ ամփոփել յուղեղն, ուր իւրաքանչիւր զգայութիւնք պարտին պատկերանալ իբրու 'ի հայելւոջ և ներգործել զներքին տեսութիւն։

Մինչդեռ զօրէ մարդ նկարագրել մտօք, մինչդեռ ներգործեն 'ի նմա ախտք և յօժարութիւնք, ունի նա Գիտակցութիւն, որ սովոր է դադարել 'ի ժամ քնոյ և սաստիկ թալկացման. այն աս բաշխի ա. 'ի գիտակցութիւն արտաքին իրաց՝ եղելոց 'ի տարածութեան. բ. յիմացութիւն անձին կամ 'ի գիտակցութիւն յեղափոխութեանց հոգւոյն որպիսութեան 'ի ժամանակի. գ. 'ի գիտակցութիւն անձին, որ է բացայայտ որոշումն մտածողական մերոյս անձին յայլոց իրաց, կամ նկարագրելն մտօք՝ թէ մեք իսկ եմք՝ որ խորհիմք, զգամք և կամիմք։

Մարդս միայն վայելէ գիտակցութիւն անձին. երկոքին առաջինքն տեսանին և յանասունս։ Յեղափոխութիւնք հոգւոյ խիտ առ խիտ յաջորդելով միմեանց՝ որ սովոր է հանդիպել 'ի յուզմունս կրից և 'ի զբօսանս մտաց՝ ոչ զօրեն զգացեալ լինել պայծառապէս. և հոգին իսկ անբաւական գտանի որոշել զնոսա. այս տեսանի և յայնժամ, մինչ տպաւորութիւնք առ վաստակեալ մարմնով, առ թուլութեամբ ջղաց և նմանեօք՝ ոչ ներգործեն 'ի ներքին զգայութիւն, ըստ որում պարտ և պատշաճ է։

## Երևակայական զօրութիւն

իմանամք զկարողութիւն կէս մի վերակենդանեցուցանել զնախնի պատկերագիրս մտաց և առանց ակնյանդիման տեսութեան, և կէս մի ստեղծանել նորանոր կերպարանս և նկարագիրս և հանդիպեցուցանել զայնս հոգւոյ. ուստի կրկին տեսանի երևակայութիւն. վերստեղծիչ և ստեղծիչ։ 'Ի վերստեղծիչ երևակայութեան համարի է կարողութիւն նկարագրել մտօք զոր ինչ երբեմն զգացեալ է մեր և որք այժմ չեն 'ի մէջ. զոր օրինակ լինի մեզ վերածել 'ի միտս զկերպարանս աշխարհի ինչ միանգամ ևեթ տեսելոյ, իբրու թէ առաջի կայցէ իրօք. այսպիսի նկարագիրք մտաց առին տեսութիւնք երևակայական կարողութեան։ Մինչ պատկերք երևակայութեան զուգադրեալ ըստ հաճոյս՝ համակարգին 'ի մի բովը, յայնժամ գոյ բանաստեղծական զօրութիւն որ անկ է ստեղծիչն երևակայութեան։

'Ի զուգակցութենէ ուրոյն ուրոյն յատկութեանց, կարողութեանց և կատարելութեանց 'ի վեր երևելն գաղափարք՝ զորս ուր ուրեմն, կամ ո՛չ ուրեք է գտանել յիրականն աշխարհի։ Կամելով բանաստեղծին երկասիրել ինչ մի գերապանծ՝ պարտի կենդանի և բեղմնաւոր երևակայութեան զուգորդել զառողջ դատողականութիւն. Ճարտարապետ երաժիշտ 'ի հնարելն յօրինել եղանակ ինչ 'ի չափ և 'ի կշիռ լարից նուագարանի՝ վերակոչէ զներդաշնակութիւն ձայնից և երգոց լըրու 'ի խորոց սրտի 'ի գործարան անդր իւրոյն լսողականի, ո՛պ զի ոչ ևս այլ պէտք լիցեն նմ անդրէն զայնս նկարել 'ի լարս նիւթական նուագարանի, բաց որում զխորն նուագածութիւն հնչեցուցանէ յերևակայութեան անդ։ Կարողութիւն 'ի ձեռն երևակայութեան վերածել 'ի հոգի զապաւորութիւնս ազդեալս երբեմն յառարկայից՝ չէ նոյն յամ դէպս. առաւել հեշտին է վերստին նորոգել զնկարագիրս տեսութեան, ապա զլսելեաց և զշօշափելեաց, բայց դժուարին արդեօք՝ կրկնել երևակայութեամբ զպատկերագիրս հոտոտելեաց և ճաշակելեաց. զո՛ր օրինակ. քան զհամ կերակրոյ 'ի վաղուցհետէ ճաշակելոյ դիւրին է վերստեղծել մտօք զգեղեցիկ կերպարանս ուրուք՝ զառ 'ի մենջ տեսեալս երբեմն. սմին հանգոյն ոչ միապ՟ հանապազ ազդէ երևակայութիւն. օրինակ իմն. 'ի խաւարի կամ 'ի գիշերի զուարթ է և կենդանի քան 'ի տուընջեան, այլ նինջէ զրէթէ բոլորովին, մինչ զբաղեցուցեալ է հոգի առ 'ի յարտաքին զգայութեանց։ Թուլութիւն կամ կորովութիւն երևակայականին կախի զորպիսութենէ մարմնոյ 'ի հասարակի և յորպիսութենէ ուղղոյ 'ի մասնաւորի. վասն զի որչափ զօրաւոր է ուղեղ, այնչափ և բո՛ւռն են աշխոյժք երևակայութեան. զնոյն իմն փոխադարձաբար. թո՛ղ զայս. երևակայութիւն այլևայլ է ըստ այլևայլ հասակաց. յերիտասարդ տիոց՝ ժիր և՛ս տեսանի երևակայութիւն քան 'ի ծեր թոյլ և զառամեալ. և ո՛չ չափ ինչ. այլև խառնուած մարմնոյ ազդել դիտէ յերևակայութիւն՝ որ ըստ պէսպիսութեան նորա տարբեր իմն տեսականոյ. 'ի պարտասել կենդանական ոգեաց խափանի երևակայութիւն, 'ի վտանգել գործարանաց մարմնոյ բազում այն է՝ զի եղծանի մինչ 'ի սպառ։ Կամք հոգւոյ զրեթէ հանապազ պատճառ են տեսութեանց երևակայականին, թէպէտ ոչ ծնանին երբեմն յանդէտս և զանխուլ, նա՛ երբեմն և յակամայս.

ո՞պ՝ բերեալ հոգւոյ 'ի նկարագրութիւ աշխարհի տեսելոյ միանգամ, զան հատանեն 'ի վերայ այլ պատկերագիրք և 'ի բաց վանեն զեղեալսն յառաջագոյն, կամ թէ ընդխառնին 'ի նոսա. ահա տեսանեմք զերևակայութիւն ներգործել է որ զոյգ ընդ կամաց և է որ ակուսի անտի. յուշկամաց հոգւոյ ազդէ երևակայութիւն, իբրև առաղետալն անցիւք զբաղեալ է կարևոր պատկերագրօք. այո յոժար էր նա խոյս տալ 'ի տխրականացն, բայց անկարող գտանի, վասն զի իբր յակամայս կալանաւորեալ է 'ի տրտմականնէն: Տեսութիւնք երևակայական կարողութեան զհետ երթան հաստատուն օրինաց, զորս ասեմք Օրէնս լծակցութեան գաղափարաց. այսոքիկ օրէնք կշիռ և կանոն ուանդելով մտածողական մերումս զօրութեան 'ի բովանդակի՝ կարևոր են յոյժ և մեծարգոյ, վասն զի նոցայն առաջնորդելով վերահասու լինիմք բազում յոյժ իրողութեանց 'ի հոգեբանական հանդէսի. զգաղափարաց լծակցութիւն մարթ է բացատրել երկուքումբք առաջինկոյ օրինօքս որք են. գոլն համաժամանակեայ և յաջորդութիւն. երկրորդ՝ նմանութիւն և ընդդիմադրութիւն: Այլ 'ի պատկանաւոր լուսաբանութիւն երկուց այսոցիկ չասացի առել այսչափ. տեսութիւնք հոգւոյ եղեալ առ մեզ միանգամայն կամ թէ հուպ ընդ հուպ զկնեալս փոխանորդելով, յարուցանեն մի զայլ. վասն զի յարծարծանել երևակայութեան զմին, 'ի միտս անկանի և միւսն, բե՛ր առել զանդէն առ նմին պատկերանալն մեզ համգամանաց ծանօթ ինչ աշխարհի, իբրև վերստին տեսանեմք զայն կամ նկարագրեմք երևակայութեամբ միայն. յոր և նման մտաբերեալ մեր 'ի ծանօթ ոք, յուշ լինի մեզ և նորուն բնաւորութիւն. նկատելով մօք զբոլորն, յառաջ մատչին և նկարագիրք առանձնութեանց նորա. ընդ ձեռնարկելն 'ի գործ ինչ՝ յանդիման ելանեն մեզ նորուն հետևանք. երկրորդ՝ նկարագիրք մտաց յարակցս գոլով միմեանց՝ զարթուցանեն մի զմիւս. բայց հանդիպի երբեմն և այս ինչ, զի պատկերագիրք ոմանք ներգործեն զուգզակի ներհականան իրքեանց. օրինակ իմն. 'ի խօթութեան բազում այն է, զի մտածեմք զառողջութենէ, 'ի մանկութեան՝ զծերութենէ, 'ի յաջողումն՝ զձախորդութենէ. որչափ մեծ է նմանակցութեն գաղափարաց, նոյնչափ հեշտին է լծակցութիւն նոցա և զուգախառնութիւն, ո՞պ տեսեալ մեր զոք նմանակից այլում,

մտաբերեմք անգէն անդ 'ի սոյն։ Բայց ըստ երկոցունց այսոցիկ օրինաց ոչ միշտ բաւանդակեմք զննել ճշդիւ զընթացս գաղափարաց, քանզի փոխանցումն միոյ յայլ լինի յաճախ յանակնկալս և աննկատելի եւս, կամ զի աղօտ միջնագաղափարք բազում սայթաքեալ սահին 'ի տեսութենէ մերմէ։ Ընթացք կամ լծակցութիւն ինչ գաղափարաց ստէպ ստէպ նկատեալ առ ումեք՝ տան մեզ խմաստասիրել անտարակոյս զնորայն բնաւորութիւն և զօրաւոր մտածութեան. օրինակ իմն. որ սիրէ զբոյցս արկանել զարծաթոյ, զհարըստութենէ, զարտաքին շքոյ առ հասարակ, նա յայտ արար զիւրն յայնպիսիս հակամէտ բերումն. դարձեալ՝ որ սովոր է միշտ խօսել զանձնէ և զիւրոցն, նա ցոյցս բերէ զիւրոյն անձնասիրութեան. ուստի մարդագէտն ոք պէտս յոյժ ունի յաւելուլ զմիտս 'ի զնացս գաղափարաց, եթէ խելամուտ լինել կամիցի բնաւորութեան ուրուք. սապէս ոչ դանդաղեալ նորա յերիւրել զանձն յայլս, զգաղափարս իւր 'ի գաղափարս այլոց՝ ճանապարհ հորդեսցէ ճշմարտապէսն ճանաչելոյ զնոսա։ Գաղափարք ոմանք հիմնացեալք 'ի մրրկալի կարծիս և 'ի կանխակալ ծանօթութիւնս՝ առիթս տան ինչ ինչ առանձնաւորութեանց 'ի մարդիկ. զո՛ր օրինակ տեսանեմք զբազումս, զի քան զամենայն 'ի կենցաղս յայսմիկ վերադասեն զարծաթ և զաւագութիւն՝ ըստ որում համարին յերկուս յայսոսիկ բովանդակել երջանկութիւն կենաց։ Այսպիսի մոլար տեսութիւն սովոր է ազդեցանել 'ի դաստիարակութենէ մանկականին տիոց. աստ ուրեմն ոչ միանգամ տպաւորին 'ի հոգի անհիմն վարկածք՝ զորս դիւրեթէ ոչ ևս այլ կարողութիւն է արմատախիլ առնել. ո՛ է՝ որոյ չիցէ լուեալ զանմիտ երկիւղէ անոի 'ի ցնորից որոյ սկզբունք արմատացան 'ի սիրտ երեխայից յանձն եղելոց առասպելապատում ստնտուաց և անխոհեմ 'ի տարազ պաժողութեան խնամակալաց. այսու բացատրելի է զնկատեալն առ ոմանս խորշումն յինչ ինչ աւարկոյից՝ առանց զպատճառս երկիւղին մեկնաբանել զօրելոյ. 'ի սոցունց սակի են և բուռն այն տպաւորութիւնք զոր ազդեն 'ի սիրտ պատկերագիրք ոմանք, իբր զի լծորդին նոցա երկրորդական գաղափարք բազում ուք զարթնուն համանգամայն առ 'ի ահընկէցս ներգործել. բե՛ր առել զմտածութիւն մահու, դժոխոց, յաւիտենականութեան և նմանեաց։ Ըստ այսմ որչափ ազդոյ կամ թոյլ

բստանի գործականութիւն երեւակայութեան և որչափ պարունակ և կենդանի այն իցէ, նոյնչափ և տարբեր լի ըստ անուանակոչութեանցն, վասն զի ասի նա բացարձակ կամ անձուկ, հարուստ, բեղմնաւոր կամ աղքատ, ուժգին կամ թոյլ, պայծառ կամ աղօտ, հրաբորբոք կամ սառն, ժիր կամ դանդաղ, դրդուելի կամ անդրդելի։ Այս կարողութիւն ոչ փոքունս արդիւնաւորել գիտէ 'ի հանդիսի գիտութեանց և արուեստից, այլև ոչ սակաւ նպաստէ կատարելագործութեան ճանաչողականին. սովաւ շարժին կամք 'ի գործ՝ ախորժ կամ անախորժ պատկերագրօք անդր ձգտեցուցեալ. սովաւ հնարաւոր լինի հոգի ոլանալ անցանել գաղափարէ 'ի գաղափար. սա լոկ է՝ որ կարողս գործէ զմեզ բազում յարակից նկարագիրս սահմանել ըստ նմանակցութեանց նոցին կամ բաշխել ըստ ազգս և ըստ տեսակս. երեւակայական զօրութիւն ոչ միայն քան զարտաքին զգայութիւնս ճոխ է և ընդարձակ, այլ բաւէ ըմբռնել շատ քան զնոսա, այն զի միով ևեթ հայեցիւք ընդգրկէ զամենայն՝ զոր հեռազհեալ առընկալեալ իցէ այլոց զգայութեանց. է սա մայր գեղեցիկ հմտութեանց. ուրանօր ոգք բարդաւաճեալ ելին 'ի ծագ կատարելութեան, անդանօր տեսանի և երեւակայութիւն աշխոյժ, հրացայտ և ստեղծիչ, բե՛ր ասել առ Յոյնս։

Երեւակայական զօրութիւն թէպէտ և վարժութեամբ զօրէ կարողանալ մինչև յոյժ, բայց չէ՛ համարձակ սաստկանալ ըստ չափ, այլ պարտի կալ միշտ ընդ լծով բանի. առ ընտրութեամբ գիտութեան կամ արուեստի իրէ հարկ է մեծ դնել նորուն բերման, վասն զի նա՛ է մանաւանդ զարթուցիչն գաղափարաց, առ որս տրամադրեալ է հոգի, ա՛պ և նա լոկ է յաւէտ՝ որ զմարդս պատրաստ գործէ և յաջողակ 'ի պատողել զայլևայլ գիտութեամբք։ Զամենս առանձին ուղղութիւնս հոգւոյ՝ որոց 'ի զննին ելանել առաջի կայ մեզ, մարթ է լուսաբանել ըստ խրաց ինչ ազդեցութեամբ երեւակայականին և օրինօք լծակցութեան գաղափարաց։

Եկեսցո՛ւք այժմ 'ի քննութիւն ուրոյն ուրոյն ուղղութեանց հոգւոյ՝ որոց սակի են՝ Արթնութիւն, Երազ, Քնաշրջիկնութիւն, Մոլութիւն և Ուշաբարձութիւն։

## Ր. ԲՆՈՒԹԻՒՆ

իմանամք զորպիսութիւն հոգւոյ՝ յորում մարդ՝ սատարելով արտաքին զգայութեանց՝ ընդունի յինքն իմացուածս և գիտակից լինի նոցա, յորում և բանն զոյգ ընդ գործականութեան իւրաքանչիւր կարողութեանց կենդանականին համարձակ է ազդել ըստ հաճոյս կամաց՝ զանցեալն և զներկայն ընդգրկելով միանգամայն։ 'Ի հանապազորդել յարթնութեան առ վայր մի՝ վաստակին, թուլանան ջիղք և ուղեղ. յայնժամ առ սակաւ սակաւ գլորի մարդ 'ի քուն՝ յորպիսութիւնն այն՝ որ հակակայի արթնութեան և չէ այլ գիտակից ոչ անցելոյն և ոչ առաջիկային. այս բարձումն գիտակցութեան սովոր է յառաջ գալ հետզհետէ. վասն զի նախկին 'ի վերայ հասանէ թմրութիւն, ապա նիրհումն, հուսկ յետոյ քուն. իբրև պարտասեալ ոգիք նորոգեալ լինին են վերստին, յաջորդէ թեթև նիրհումն, ուստի սակաւ առ սակաւ զուարթացեալ նոցին վերբերին 'ի նոր լինի գիտակցութիւն անձին. 'ի խանգարել գործականութեան կենաց ցաւագարութեամբ իւիք՝ զօրէն ծնանել որպիսութիւնք քնանմանք, զորս խնամով որոշելի է 'ի քնոյ. սմին նման կարէ հոգի այնպէս ընկղմել 'ի խորս մտածութեանց, մինչև կորուսանել զգիտակցութիւն որոց զնովաւ յածին, և անկանել իբրու զքնով արթնութեան։ Տեսցուք զփոփոխութիւնսն, որք գոյանան 'ի մարմնի 'ի ժամ քնոյ. յարթնութեան անդ տեսանի ազատ և անարգել գործականութիւն զգայութեանց և կամաւոր շարժուածոց, իսկ ընդհակառակն՝ մինչ 'ի քուն է մարմին՝ դադարի զգայութիւն և կամաւոր շարժութիւնք մարմնոյ երևին լինել անգործս յամենայնի. 'ի քուն մտեալ մարդոյ, մարմին նորա զհետ կրթի օրինաց տարրականին ծանրութեան, և գլորի 'ի խոնարհ իբրև մարմին անկենդան՝ որոյ չիցէ նեցուկ հաստատութեան. բայց նմին ոչ ամենայն պաշտամունք կենդանութեան, վասն զի յարատևեն թնդիւն սրտի, տրամաբաշխութիւն հիւթոց, պարբերութիւն արեան, գործականութիւն ստամոքսի և աղեաց և շնչառութիւն. մերձաւորագոյն պատճառ քնոյ է պակասութիւն կենսական զօրութեան և նուազումն ազդեցութեան ուղղոյ. բայց կարեն ներգործել զքուն և այնպիսի իրք որ սաստիկս դրդուեն և ջեռուցանեն զուղեղն, բե՛ր ասել արբեցուցիչ ըմպելիս և որ այլ այսպիսիք։

## Երազ.

'Ի պահու նիրհման՝ որ է նախ կամ անմիջոց յետոյ քան զխորին քուն՝ ըստ նախակարգելոցն օրինաց երեւակայական զօրութեան յանդիման լինին մտաց խառն ի՛մն կարգաւ շարք պատկերագրաց՝ զորս ասեմք երազս կամ տեսիլս: Երեւակայութիւն արթուն կայ հանապազ եւ ազդէ յայնժամ եւս՝ երբ վայելէ մարմին յանխռովն խաղաղութեան, միայն թէ ո՛չ միշտ բաւական եմք յուշ ածել զնկարագիրս՝ սթափեալ 'ի քնոյ: Երազք երազեալք յառաւօտու սովոր են պայծառ եւս առաջի մատչիլ մերում գիտակցութեան. զընթացս գաղափարաց յերազի անդ քննել յամենայնի գո՛րծ է ապաքէն. բայց սակայն չե՛ն իսկ արտականոն ամենեւին: Երազք աղբերանան 'ի պատկերագրաց անտի՝ զորովք սակաւ մի յառաջ քան զգալն 'ի քուն յածէին միտք, կամ յայնպիսեաց՝ որք յարթնութեան անդ գրաւեալ էին զմտադրութիւն մեր. Թո՛ղ զայս. Թոյլ ըմբռնմունք արտաքին իրողութեանց 'ի թեթեւ նիրհման անդ, ո՛րպէս են դղրդումն, դոփիւն, զրոյցք, աղմուկ, երգ եւ նմանիք՝ զօրեն ներգործել երազս. ո՛չ ընդհատ ինչ՝ մարմնաւոր պատճառք, յորոց սակի են յարձակումն յաճախեալ արեան 'ի գլուխ, նիւթք դժուարամարսք եւ ծանրաբեռնիչք ստամոքսի եւ որովայնի: Նոյն ինքն ազգք ազգք որպիսութեանց մարմնոյ եւ երեւակայութեան պատճառեն աղօտ կամ լուսափայլ, շատ կամ սակաւ երազս. եւ տեսի է՝ զի ոմանց երազոց քաջ եւս յուշ լինիմք քան այլոց:

'Ի լինել տեսլեանց այնչափ կենդանի եւ պայծառագոյն, մինչեւ գրեթէ կրթիլ մարմնոյ հոգւոյն պատկերագրաց՝ ծնանի քնաշրջիկն ունակութիւն. ախտացեալն այսու բովանդակապէս՝ երեւի լինել ընդ իշխանութեամբ բանի, վասն զի կատարէ զամենայն գործս՝ որ տան մեզ եզրակացուցանել զայդ. զո՛ր օրինակ առանց անկանելոյ ելանէ 'ի վայրս վտանգաւորս յոյժ, զգուշեաւ 'ի բաց ընթանայ զամենայնիւ որ խոչընդակն է ոտից նորա, ցուցանէ զանխրական պաշտամունս իւր մեծաւ ըստ կարի խնամով, խօսի պատշաճապէս, գրէ եւ անդրէն դառնայ յանկողին իւր. բայց սթափեալ 'ի քնոյ գիտէ եւ ո՛չինչ զոր ընդ նմա անցեալն իցէ: Պատճառք իրողութեանս չե՛ են լուսափայլ. բայց հաւանական է աղբերանալ այսր 'ի խառնուա-

ծոյ մարմնոյ , 'ի բուռն կենդանութեանն երևակայութեան , դուցէ նոյնպէս և յառանձին որակութեանն մարմնոյ · քանզի վաղանդաւոր յոյժ է այս ուրախութիւն, որոյն վասն 'ի մէջ բերեալ են զանազան խափանարար այնմ հնարս՝ որոց սակս են պարզումն խոնաւացուցեալ թաղեաց առ մահճաւ քնաշրջիկ ախտացելոց և արթնացուցանելն զնոսա առ ժամայն, մինչ յարուցեալ յանկողնոյ՝ թափառելն կամիցին։

## Սովորութիւն

իմանամք զսովորութիւն՝ յորում ազդելով ուժգին զգայութեանց և ախտից՝ երևակայեալ իրք ոմանք համարին իսկականս· երևակայականն զօրութիւն բացընկեցիկ արարեալ զլուծ բանի, այլև յաղթահարեալ զդատողականն՝ անդարձ զնոսա կացուցանէ, որով լինի ապաքէն զոչ նկատեալն իրօք և զբնաւ իսկ անհնարաւորն անկանել ընդ տեսութեամբ՝ ունիլ առ եղեալն իսկապէս։ Զմոլութիւն մարթ է տեսանել կրկին , իբրև հայեցական և գործական · որոց առաջինն հիմնանոյ 'ի խոստաբանոց հաւատս որ յանհեթեթս և յանկարելիս ըստ առողջ բանի · իսկ երկրորդն զհետ լինի զալ յառաջարկութիւն գործոց որ յանհնարինն են ամենևին, կամ ընդդէմ արդարութեան տեսանին անամբոխին դատողականութեն· մոլութիւն սովոր է լինել յամառ և կամակոր, որով տարբերի 'ի մատյն հիւսութենէ որ անցաւոր է և ներէ բանի 'ի գործ հանդիսանալ· 'ի սորայս համարի է հայրենասիրութիւն յափշտակութեամբ մտաց, այն՝ որ զօրութիւն մեծ լծորդել գիտէ իւրոյն մեծագործութեանց· ուստի հոգևազգեաց ունակութիւնն է միայն մերին աստիճան յափըշտակութեան մտաց, կենդանի իմն զգայութիւն հեշտութեան՝ իբրև պատկերագրեալ լինին երևակայութեամբ որ ճշմարիտքն են, գեղեցիկք և լաւք։

Բազում ազգք են մոլութեան· առաւել սովորականն 'ի սոսա է մոլակրօնութիւն , այս է՝ կոյր նախանձաւորութիւն հաւատոյ՝ որ կատաղութեամբ և հալածանօք բերի առ այլակրօնս· այսմ մոլութեան յատուկ են ախտաւոր տեսութիւնք Աստուծոյ և զնորայն առընչութեանց առ մարդ· զառածեալքն այսու ո՛չ գործեն ըստ բանաւոր փառաց, այլ ըստ կրօնապաշտական ախտից իւրեանց, հաւա-

տան յանհնարաւորս, ընդունին անընդմիջական ազդեցութիւնս , զյայտնութիւն գերաշխարհիկ էակաց և որ այլ այսպիսիք. մոլեկրօնն առեղծանէ. ինքն զատուած է, զոր և բառ չափու ստուգութեան խորին երևակայականի զանազան ինն կերպարանս. վասն զի ընծայէ Աստուծոյ մարդկօրէն ակարութիւնս և առ աչս յերևոյթ բարկութեան Ցեսան մասուցանէ. զանձն 'ի տարապայման անձկանս՝ այսու հաճոյանալ նմա կարծելով. յայսմ խեղաթիւր տեսութենէ ծածայինք և կրօնապաշտականաց յառաջ եկին անմիտ այլանդակութիւնք և հերձուածք 'ի քրիստոնէութեան, զորոց բան արկանել չէ տեղւոյս, այլ պատմութեան անցից անցելոց ընդ քննեաւ եկեղեցւոյ Ռոմայն որոշի հաստատել խորով որ 'ի մատուցածին զօրութիւն բնութեան. յայտ հանդերձ է գերաշխարհն, ամենակարողն, ամենայնին՝ որ զուշակէ յընթացից առեղաց. վերամբին ոչ յաւանդ այնու զոր 'ի հարազատիցն ուսանէ նկարագիր, այլ խնդրէ 'ի նմա աստուածոս և կեղծիս. գերամբին ասեմ է յառաջ կրթել բառ չափ՝ մինչ զնա լինել անտանել նմա որ և է գեղեցիկ և վերամբարձ ասաքնոյս, ոչ զօրէ խաղաղանալ միրամին. և չառ եռ այն է, զի անսնալ ուրեք շուք ինչ գեղեցկութեան՝ համարի զայլ անդանօր ինչ մի չքնաղ և չնաշխարհիկ խակութեանցն. այս ազգ մոլութեան փոխանցէ յանխն յանդրնական ինն մեղկասրտութիւն, որով փարակեալքն առ նոյն ինքն փառաց և ասխարական անցիւք կեղծաւորեն զանձինս անսարօրինաբս մինչ 'ի սպառ , ուրեմն չեն իսկ հողխազդեաց Ճշմարտապէս։

Գրեթէ ամենայն մոլութիւն ծնանի յանդուգութենէ բանի և երևակայութեան, ըստ որում առաջինն՝ կարի թոյլ, իսկ երկրորդն՝ կարի սաստիկ. ուստի ընդհատ յառաջածու են այսմ զատախարակութիւն մոլորակ, կեցութիւն զատարկապորտ, ջերդ հրապարակաւ և թոյլ, անսակրութիւն, անպատար գործակաւութիւն երևակայութեան, զանգանիլն զ'չեա անմիտ նախապատիւ զաղափարաց և այլն. առ զերծ պահելոյ զանձն 'ի մոլութենէ, այլև 'ի հասարակն՝ առ շաղապելոյ զգործական կեանս 'ի ժանիս սանձարձակ բռնութեան երևակայականին՝ պարտ է վաղ ուրեմն ունակտնալ ինքնամասծութեան և հաստահել այնպիսեաց՝ որք առաւել քան զերևակայութիւն պաշտեն զբան. 'ի փրկութեան գեղ և զարման որոց ակտ-

նին անձնամատոյց լինել մոլութեան՝ կարեն պաշտել ծառք և երկ-ծառութիւն՝ եւթն քաղաքապաշտանք իցեն և զեղծեցուցիչք։

## ՄՈԼՈՒԹԻՒՆ.

Մ՝ոլութիւն աճեալ և զարգացեալ 'ի չափ հասակի՝ առ փոքր փոքր փոխանցէ յաշխարհածութիւն կամ 'ի ցնորումն մտաց որ կէս մի անցաւոր է, և կէս մի անդարձելի. աշխարհածութիւն զանազան լինի ըստ տեսակաց ըստ այլևայլ պատճառաց, որ է՝ ըստ խառնուածոց մարմնոյ և ըստ սովորութեանց՝ որոց մխճակել է անհնարին. երբեմն լինի զօրանալ սոա յանկարծ մինչև զխելսն 'ի բաց բառնել բանի. այս օրինակ ախտացեալքն առին ցնորախաբհութիւնք՝ որոց անձինք կոչին մոլեգնեալք՝ երբև պատկերագիրք խօթացելոյն երևակայութեան կցորդին ընդ կրից՝ յուզելոց անընդհատ կեալ՝ ախտամէտք՝ մինչ ընկղմեալ 'ի ներքս յիմարանս զեղերին 'ի լռիկ և 'ի տրտում վարանս խորհրդածութեանց։ Զաղզս այդ ախտաւորութեանց հոգւոյ մի ըստ միոջէ առաջի դնել առաւել ոչ անօգուտ ճշմարտութիւն բանից պաշտպանել հերքմանցն առել մեզ այսչափ. ընդհանուր նշանացայց խանգարման հոգւոյ է բարձումն բանի. առ զի կեալ 'ի բանէ որ ոչ են այլ ինչ. զուարթա կենաց 'ի խորս անդ մտացն զխառնութեան. իւրաքանչիւր կեանք փակէ ընդ իւրեա զօրէնս անձնապահութեան՝ որ է առ կենդանիս այդումն բնութեան, իսկ առ մարդիկ՝ բան. բայց պարունակութիւն կենաց մարդոյ ճոխագոյն է քան զանասնոցն. ասա կոյ միայն պահպանել զկենդանութիւն արտաքոյ բնական, իսկ մարդոյս՝ զներքոյ բնական. այս ներքին կենդանութիւն է նոյն ինքն անձնաւորութիւն, խմաստականութիւն և ազատութիւն, այն՝ յորոց բառնել 'ի բաց՝ զաղաղէժ կործանել մարդ 'ի խոնարհ քան զանասունս. պահպանութիւն անձնական կենդանութեանս է միայն գործ և վաստակ մարդոյ. սուտ արդարանալ առնել. կեանք մարդոյ է վաստակ իւր. բայց այս վաստակ հնարաւոր լինի միայն՝ մինչ զեռ մարդ հաղորդ է բանի, վասն զի առ է արծարծանողն անձնական կենաց. 'ի վերանալ բանի ոչ են այլ ընդունակ է մարդ կենացս այսմիկ, ըստ որում անազատ է. և այս անազատութիւն յայտարար է կորուսեան բանի 'ի հասարակի և իւրաքանչիւր խանգարման հոգւոյ 'ի մասնաւորի թէ. խանգարեալն

հոգւով և անագման խորհրդով են համանգամայն զուրկ 'ի բանէ՝ զոյգ քաջաբարբառ քարոզեն իբրև ընդ մի բերան յաւէտ նախնի դարք հնութեան մինչև ցաւուրս մեր. այլ որ հայի 'ի նախապատճառ որպիսութեանս ըստ խուռն բազմօրինակ հանգամանաց, զայսմանէ տարաձայնեն կարծիք. յաւէտ բազումք համարին աղբերանալ սորա 'ի բնական պատճառաց, ուստի և յանձն առնեն խնամարկութեան բժշկաց. այլք 'ի մէջ բերեն զառաջինկայ պատճառս՝ այք են փխտիլ ջղաց, խցանիլ աղեաց 'ի յերկարաձիգ անընդհատ նստողութենէ և որ այլ այսպիսիք՝ զոր օրինակ ճաշակումն թունաւորեալ կերակրոց և ըմպելեաց, խածումն առ 'ի կատաղի շանց, տենդք սաստկահարուածք՝ յորս հանդիպի սուղ ինչ ցնորականութիւն, ուստի և զառանցանք. բայց սոքա են նիւթական պատճառք. 'ի համարի հոգեճառականաց են սաստիկ ախտ բարկութեան, վրէժխնդրութեան, ամբարհաւաճութեան, չափազանց և յերկարատև ճգնողութիւն մտածողականին, մանաւանդ երբ կամք լցեն իմանալ ինչ մի յանիմանալեաց անտի, կամ թէ տարապայման զբօսեցուցանելն երևակայութեան միով կամ բազում պատկերագրօք որք ցայնչափ կալանաւորեն զհոգի մինչև ոչ ևս այլ զօրել նորա մեկուսի կալ անտի։ 'Ի հասարակի նկատել լինին երկեակ ազգ խանգարման հոգւոյ. է զի հոգի զչետ կրթի բուռն յորձանաց նկարագրին մինչև անկարանալ ունել զայն 'ի կարգի և 'ի բանի, և է զի այնչափ խարասոյզ ընկղմի 'ի լոկ պատկերագիր մի, մինչ զի չէ այլ հնարաւոր ելանել անտի. յերկուսին իսկ դէպս վտանգի ազատութիւն հոգւոյ կամ մտածողականին, ուստի յառաջ գայ ասացեալն արտակենտրոն և համակենտրոն ուշաբարձութիւն. յորոց յառաջինն միտեալ են մանաւանդ որք ախտակիրք՝ անիշխանք անձանց իւրեանց որ և անտանին 'ի մանկութենէ անփոյթ արարին զդաստիարակութիւն սրտից, որոյ վասն վրիպեցան առ յապայս 'ի բաւիղ խաբէութեանց և եղջերուաքաղից. այսպիսեաց հասանէ յիմարանալ 'ի վախճանի. զորին հակառակն որք 'ի սկզբանէ անտի բնաւորեցան խորամուխ լինել 'ի ներքս յինքեանս և տալ զանձինս 'ի լոկ մտայածութիւնս՝ հակամիտեալ են առաւել 'ի համակենտրոնն, որ է գոլն ցնորախորհուրդ, որում և յատուկ են անչափ ասացեալ գաղափարքն. բայց սակայն ցնորամիտն 'ի խելագարութեան խուռն ըստ իւրաց

ինչ առ երջանիկս ունի զանձն իւր, քանզի զուածեալ է 'ի մոլար տեսութիւնս՝ վարկանելով զինքն անհատ ոք վերին և արժանաւոր քան զոր էն սոուզգայէս. այսպիսիք առ Եւրոպացիս մօնօմանիք լսին, որ է՝ ինքնամոլք.

Իբրև մարդս՝ որոյ պարտականութիւն է զամենայն աւուրս կենդանութեան իւրոյ կալ ընդ իշխանութեամբ բանի՝ զարտուղեալ է 'ի սմանէ. այլ և մինչ պատկերագրական կարողութիւն նորա յափշտակեալ է յինքն զգաւազան իշխանութեան, հարկ 'ի վերայ կայ այլոց ձեռն տալ ընկերին վերստանալ զկորուսեալն ազատութիւն. այսինքն պարտ է դարձուցանել զնա առ բան. բայց մի է և մի ճանապարհն՝ որպէս ասէ Հէյնրօթ հոգեբան գերմանացի 'որ վերլուծին տանի զմարդ յաշխարհ բանի և ազատութեան, որ և նոյն է զոր սովոր է գնալ մարդ իբրև քաղաքացի այսր աշխարհի՝ առանց յաջ և յահեակ խոտորելոյ. խմ զչափ և կշիռ դնել անձին. այն և այս չափաւորութեամբ անձին լինի պահպանել մարդոյ զբանականութիւն իւր և զազատութիւն, որպէս ընդհակառակն՝ սանձակոտոր բերմամբ անկեալ 'ի ստրկութիւն՝ զրկի 'ի բանէ. ըստ այսմ՝ որ ախտացեալն է զանտ անազատութեան, կարօտ դոյ պատաքուստ սանձահարութեան և օտարին առաջնորդութեան ցայն վայր՝ մինչև կրկին ստացեալ չափու և պայմանի՝ կարող իցէ ինքնօրէն 'ի չափու զանձն ունել. Թող զմարմնաւոր հնարս զայսոսիկ, չէ արժան երբէք անփոյթ լինել 'ի զբօսեցուցանել և 'ի խորշեցուցանել զհոգի յիւրոցն նկարագրաց և յանշարժ տացեալ զաղափարացն։

## Յիշողութիւն.

Այսու իմանամք զկարողութիւն գիտակից լինելոյ նկարագրի իմիք՝ միանգամ կամ յաճախ 'ի մեզ եղելոյ. է սա իբրու պահարան ամենայն տպաւորութեանց, ձայնից և նշանաց՝ է որ ստացելոց արտաքոյ և է որ արծարծելոց 'ի բանէ անտի. Նոյն և շտեմարան իմն 'ի պէտս ապագայից կամ մատեան ինչ յորում արձանագրեմք զհամօրէն առ 'ի մէնջ զգացեալ տպաւորութիւնս 'ի տեսութիւն և 'ի կիրառութիւն առաջիկայից. յիշողականն թուի ակնակառոյց իմն ստանել՝ մինչև հոգի յանդիմանակաց եղեալ նմա՝ վերծանիցէ զառ յինքենէ արձանագրեալսն անդ և 'ի մտացն վերածիցէ զգիտակցու-

թիւն։ Հոտոտելով, տեսանելով, ճաշակելով և շօշափելով մեր ինչ
մի 'ի նկատելոցն առ 'ի մէնջ միանգամ կամ ստէպ, մարթիմք՝
սպասաւորելով յիշողականին՝ քանիցս և կամ իցէ գիտակից լինել
այսմ կրկնման, այլև յաւէլ լինել՝ թէ ուր, զիարդ և երբ նոյն նըկա-
րագիր շօշափեալ իցէ առ 'ի մերոյս իմացուածոյ· ամին նման գի-
տակից լինիմք պատկերագրաց, գաղափարաց և տպաւորութեանց՝ ազ-
դելոց 'ի մեզ երբեմն առ 'ի յերևակայութենէ։ 'Ի յիշողականէն
տարբերելի է զուշաբերականն զօրութիւն· հայեցումն հոգւոյ այն՝
որով խնդրի է կենդանագործել կամ լրացուցանել զնախապատու
նկարագիր մի 'ի ձեռն երկրորդականացն նորա· օրինակ իմն· 'ի կամել
մեր ուշաբերել զերբեմն զանցս ինչ՝ ըստ որում անցեալ են խոկ-
ութեամբ, պարտիմք յարուցանել 'ի միտ ոչ միայն զյաւէտ զգլխա-
ւոր հանգամանս նորա, այլ և զուգախառնել անդր զերկրորդականս
ամենայն, զշաղկեալս ընդ նմա, որպիսի են տեղի, ժամանակ, ան-
ձինք ըստ իւրաքանչիւր տարազու գործառնութեան։ Այլ յիշողա-
կանաւն բան է զբաղմութենէ զխաելեացն, զքանակութենէ պատկե-
րագրաց և ըմբռնմանց· պահել ինչ 'ի յիշողութեան, չէ ապաքէն
միշտ և հանապազ գիտակից այնմ լինել, այլ միայն զերբեմն նորո-
գել զտպաւորութիւնն, մինչ տուեալ իցէ այդմ առիթ։ Ուշա-
բերութիւն կամ զերբեմն ճանաչումն նախկին նկարագրի մասց կէս
մի պայծառ է, և կէս մի աղօտ՝ ըստ չափու յիշատակարանացն· օրի-
նակ զայս · տեսեալ մեր առարկայ ինչ՝ զոր կարծեմք տեսեալ 'ի
մէնջ երբեմն՝ խնամով 'ի քննութիւն մատուցանեմք զամենայն ա-
ռանձնութիւնս նորա՝ որով առ փոքր փոքր լուսափայլ ևս բերի
ուշածութիւն։ Զյիշողականութիւն մարթ է բաշխել յերիս, որ է՝
յընտիր, 'ի հասարակ և 'ի թոյլ· դիւր և հեշտին ըմբռնելն
յատուկ է ընտիր յիշողականութեան· են ոմանք որք կարեն ճառս
լուեալս ուրեք՝ բան առ բան կրկնել անդէն· այլք՝ որոց չէ բայց
յիշողականութիւն միջակ՝ է որ ըմբռնեն յամր և պահեն զըմբռ-
նեալն յերկար, և է որ ուսանին հեշտեաւ, բայց 'ի մոռացօնս լինին
ուսելոյն՝ վաղվաղակի · ըստ ազգ ազգ յաջողակութեանց յիշողա-
կանին, որպիսի են յիշելութիւնք անուանց, իրաց, թուոց, ձայնից,
լեզուի, ժամանակի և տեղւոյ, այլևայլ լի նա· յայս միտս խոհր է
ընդ յիշողականութիւն որ հայի 'ի բանս և ընդ յիշողականութիւն

որ հոյի 'ի բառս, ըստ որում ըմբռնեալ լինին կամ պատկերագիրք բանից կամ նշանակք նոցա՝ բառք. երկոքինս զուգախառնեալ տեսանին երբեմն. 'ի հասարակի նախապատիւ է առաջինն քան ըզվերջինն. քերթողութիւն ցուցանէ անձուկ ինչ լծակցութիւն ընդ գործարանական կազմածի ուղղոյ, վասն զի 'ի մխալ, 'ի խախտիլ կամ 'ի խօթանալ սորա սովոր է քերթողականութիւն թուլանալ, խափանիլ և կամ բնաւ իսկ բառնիլ . զոր օրինակ մի ոմն յունելոց պատաշեալ վտանգաւոր արկածի՝ այնպէս եղև մասթափ, մինչև հարկաւորիլ վերստին ուսանիլ զընթերցանութիւն և զգրութիւն . այլ ոմն հարեալ զօսութեամբ մարմնոյ 'ի մասացօնս եղև անգէտ անցելոց 'ի վերջին քառեակ ամս կենաց իւրոց մինչ զի ոչ ևս այլ զօրէր մտաբերել 'ի մին մի անուն: Այլն զունակ սովոր է քերթողականութիւն առ սուղ կամ յերկար միջոցս խափանիլ կամ հարըստահարիլ 'ի ձեռն ուժգին յուզմանց ցանկականին . երբեմն հանդիպի մոռանալ զանուն բառս կամ շփոթել զմի ընդ միւս, որպէս փոխանակ ասելոյ մարդ՝ արտասանեմք լեառն. ընդոր քերթողականութիւն վկայէ զբնական յաջողակութենէ , բայց և միջակին կարէ մարզութեամբ կրթանալ յոյժ և կատարելագործիլ մեծապէս , մանաւանդ երբ առաջնորդեն աստանօր կարգ և ոճ. օրինակ իմն . կամելով մեր 'ի միտ առնուլ ձայն ինչ կամ տաղաչափութիւն , պիտոյ է մեզ նախկին ընդգրկել զառաջարկութիւն իւրն բովանդակ՝ որում զհետ գնացեալ իցէ հեղինակն. զքերթողութիւն արժան է վարժել 'ի մանկութեան մանաւանդ, լծորդելով այնմ և զմտացն վարժութիւն. վասն զի լոկ տպաւորեն 'ի քերթողութեան առնուլ բառս և հատուկտոր նկարագիրս իրաց սպանանէ զհոգի և միտս մինչև յոյժ. 'ի ժողովելն զգաղափարս և զգիտութիւնս առ հասարակ պէտք են յաւէտ միտ դնել կարևորացն, որպէս զի զօրեսցեն ապա կալ և մնալ անծախապէս 'ի գանձարանի քերթողութեան:

## Երևակայական զօրութիւն

իմանամք զկարողութիւն 'ի ձեռն ներքին և արտաքին զգայարանաց ընդունիլ տպաւորութիւնս, մանաւանդ և գիտակից լինել նոցա. խայտաճամուկ և բազմադէմ այն իրողութիւնք՝ սատարելով զգայութեանց՝ մատուցեալք առ միտս մեր, լծակցին 'ի մի պատկե-

բաղխը ընդ ձեւն երեւակայականին․ զո՛ր օրինակ ’ի նկատելն մեր չինուած ինչ՝ մեռ գնեմք զանազան մասանց նորա՝ զորս զուգախառնեալ ’ի մի բոլոր՝ կազմեմք ’ի հոգւոջ զպատկերագիր չինուածոյն։ Իմանալն և ազդ լինելն կատարին գրեթէ համանգամայն, կամ թէ յաջորդեն մի զմիով արագապէս․ բայց իբրեւ զանազան առարկայք շտապ տագնապաւ փոխանորդեն զմիմեանս, ոչ լինի մեզ ստանալ և ոչ մի ինչ նկարագիր պայծառ․ որպէս ընդգրկեալ մեր միով եւեթ հայեցիւք չորս պատկերաց ’ի դահլճի ինչ, գիտեմք այո՛ զլինել նոցա պատկերս, բայց թէ զի՛նչ նկարագիրք միոյ միոյ ’ի պատկերացն իցեն՝ անգիտանամք․ ընդ ներգործելն ’ի հոգի բազում յոյժ տպաւորութեանց միանգամայն՝ մարթիմք իբրու ընտրել անուն զմի կամ զոմանս ’ի մասնաւորի և ուղղել անդր զազդաւական զօրութիւն մեր․ այսու ընդունի հոգին պայծառ ինչ նկարագիր ոչ զտպաւորութեանցն ’ի բովանդակի, այլ զմիոյ կամ զոմանց ուրոյն։ Զկարողութիւնս զայս կոչեմք զգայական մտադրութիւն․ այսինքն է ամփոփելն հոգւոյ զամենայն հայեցմունս իւր ’ի մի կամ յոմանս վայրս առանձինն․ բազում աստիճանք են մտադրութեան․ ’ի կենդանի երեւակայութենէ սովոր է ցան և ցիր սփռիլ, ’ի սաստիկ ցաւոց՝ բառնիլ ’ի բաց յամենայնի, իսկ ’ի միակերպութենէ կամ ’ի յաճախ կրկնութենէ վաղածանօթ նկարագրաց՝ վատթարիլ և տաղտկանալ մինչեւ յոյժ։ Բայց սակայն յանհոգ և ’ի չարաչար կիրառութենէ մտադրութեան կարեն ծնանիլ մեծամեծ վրիպակք․ զորօրինակ․ գոլով մեր ’ի ժողովի ընկերաց և կամելով ունկն մատուցանել համանգամայն բազում որ զտարբեր առարկայից զրուցատրութեանց, անկարող գտցուք ստանալ պարզ և որոշ նկարագիր իրիք, այլ ընդ հակառակն լիցի մեզ խառնել ’ի միմեանս զխօսակցութիւնս զանազան անձանց․ ուստի չէ արժան զմտադրութիւն իւր թափառեցուցանել ընդ այլեւայլ առարկայս և ոչ իսկ բեւեռել զայն կարի յերկար ’ի մէն մի․ վասն զի երկոքին իսկ խափանեն զյառաջանդութիւն մտածութեանն։ Պա՛րտ է առ հասարակ խոյս առնել ընդ կարեւորս և ընդ երկրորդականս և յաւել զմտադրութիւն յառաջինսն․ օրինակ իմն․ եթէ ունկնդիր ատենաբանի ուրուք անտեսել զիմաստս բանից խօսողին յածիցէ զմիտս զարտաքինովք նորա, նա յայս տրար ապաքէն զչարաչար ուղղեցուցանելն իւրոյ մտադրու-

թեան։ Բայց 'ի զգայական մտադրութենէ տար է հոգւոյ զգայական ինչ խորհրդականութիւն, քանզի կարող է նա 'ի ձեռն զգայարանաց բացորոշել երկու այլեայլ իրս որպէս կենդանիս և մարդիկ, աղ և շաքար, բայց առանց զօրելոյ մատչիլ 'ի պայծառապէս ըմբռնումն նոցա. կանուխ այս զարթնու զգայութիւնս այս որ հասարակ է և կենդանեաց. վաղ ուրեմն ձկոլն երեխայք յիւրաքանչիւր փայլուն և շողշողուն առարկայս որոշելով զնա յորոց ենն խաղալիք և նուազ են անկանին ընդ տեսութեամբ, թէպէտ և չեն բաւական ըմբռնել զայնս պարզապէս։ 'Ի համօրէն սորին կամ զգայական ճանաչութեանց հոգւոյ են աչմ նախակարգեալքդ առ 'ի մէնջ։ Եկեսցուք այժմ վերնագունիցն 'ի քննութիւն։

## Դ. Յաղագս վերնագունին ճանաչողականին կամ մտաց՝ ընդարձակագոյն տեսութեամբ.

Ներքին կենդանութիւն մարդոյ, որ է՝ հոգի էապէս տարբերի 'ի կենդանեացն, որոց թէպէտ են զօրութիւնք ճանաչողականք՝ բայց ստորինք աստիճանաւ. զգայութիւնք, կարողութիւն երեւակայական և այլ ինչ վերայեն յիշելութեան տեսանին յիրաւի և 'ի նոսա, բայց պակասէ նոցա յամենայնի վերնագոյն այն կարողութիւն որով լինի մարդոյ ժամանել առ ընդհանուր ծանօթութիւնս, բայց կենդանեաց՝ և ոչ բնաւ. զգայարանք, երեւակայութիւն և զգայականութիւն առհասարակ ընձեռեն մեզ ուրոյն ուրոյն նկարագիրս զորս ըմբռնեալ մտաց ընդհանրապէս՝ առաջարկէ և եզրակացուցանէ յառաջարկութեանց անտի։ Զգայականութիւն է կարողութիւն նկատելոյ, իսկ միտք՝ ընդունակութիւն խորհելոյ. զվերին զայս կարողութիւն ճանաչողական, կամ՝ առեալ ընդարձակաբար՝ զմիտս մարթ է երրեակ տեսանել. իբրեւ միտս անձուկ առմամբ, իբրեւ զօրութիւն դատողական և իբրեւ բան։ Կարողութիւն յառանձին պատկերագրաց անտի կազմակերպել ընդհանուր ըմբռնմունս իմանամք զմիտս. զոր օրինակ նկարագրելով 'ի մեզ բազում կենդանիս ուրոյն ուրոյն՝ մատչիմք 'ի սեռական ըմբռնումն կենդանեաց 'ի բովանդակի. լծակցութիւն պէսպէս ըմբռնմանց ընդ իրեարս լինի միջնորդութեամբ դատողականին. որպէս՝ գթած է Աստուած. անմահ է հոգի. հանելն 'ի բազում առաջարկութեանց ինչ մի նոր

անկ է գործականութեան բանի . ասաւ յառաջագոյն ասացեալքն բանաւոր եզրակացութիւնք կամ հաւաքաբանութիւնք, որպէս. ամենայն մարդ է մահկանացու. պետրոս է մարդ, ուրեմն պետրոս է մահկանացու :

Մինք, դատողական զօրութիւն և բան Թէպէտ և 'ի հասարակ կենցաղս սովոր են առանց խորհրդութեան վարիլ անուամբս միտք կամ ձայնիւս բան, բայց խուզարկելով Ճշդիւ և խնամով տեսցուք՝ Թէ իւրաքանչիւր մի յերից ասացեալ յայտնութեանցդ Ճանաչողականին կարողութեան որոշին յիրերաց. միտն 'ի ձեւն փորձոյ կերպարանէ ընդհանուր ըմբռնմունս՝ բաղդատելով զմի իր առ միւս և բացորոշելով զորս 'ի նոսա հասարակաց ծանուցարարս. այս բացորոշեալ ծանօթարարք առեալ համանդամայն՝ ձեւացուցանեն զընդհանուր ըմբռնումն սեռի կամ տեսակի իրաց. օրինակ իմն. իւրաքանչիւր կենդանեաց հասարակ են մարմին և հոգի, այլ ոչ կերպարանք, մեծութիւն, գոյն, զօրութիւն, հասակ և որ այլ այսպիսիք. միտն զուգախառնեալ պէսպէս տեսութիւնս 'ի մի նկարագիր՝ վերածէ յըմբռնումն ինչ յաւէտ կամ նուազ պայծառ զպատկերագիր մի որ փակէ ընդ իւրեւ զայլ բազումս։ Նոյն իսկ ըմբռնմունք զանազանին 'ի միմեանց յոյժ . վասն զի ոմանք պարփակելով յինքեանս շատ քան զայլս, ասեն վերնագոյնք, կէսք պարունակելով սակաւ քան զառաջինսն՝ կոչին ստորինք. զոր օրինակ՝ ըմբռնումն կենդանեաց ընդարձակ է քան զչորքոտանեաց և սորայս դարձեալ՝ ընդարձակ քան զըղջաց. Թող զայս. ըմբռնումն է զի պարզ է և է զի բաղադրեալ. վերջինս հանդիպի մինչ զառարկայիւ իւիք մարթ է զանազանել բազում յատարարս, որպիսի են գոյն, մեծութիւն, ստուարութիւն, ամրութիւն և նմանիք. զորս հակառակն նկարագիր կարգաւ գունոյ յանդիման առնէ մեկին ինչ ըմբռնումն միայն, ըստ որում չիք որոշել 'ի նմա զանազան ծանօթարարս. այլև ըմբռնմունք պայծառ են կամ աղօտ, լուսափայլ կամ խառն։ Պիտանութեամբ մտաց լուսաւոր, Ճիշդ, կարգաւոր և տեւական բերի ծանօթութիւն մեր, վասն զի վերլուծանելով մեր զառանձին պատկերագիրս՝ գիտակցեմք զնոսա, ուստի և զօրեմք դասել զհասարակայն որ 'ի նոսա և զատուցանել անտի զպատահականս և զփոփոխականս. միտն է նըմանապէս՝ որոյ միջնորդելովն փակեմք ընդ հաստատուն սահմանօք պէսպէս նկարագիրս և առարկայս։

Դատողականն բաղդատելով զբաղում ըմբռնմունս մի առ միւս՝ է որ լծակցէ զնոսա և է որ տարորոշէ 'ի միմեանց. օրինակ իմն. մարմինն է մահկանացու. հոգին է անմահ. մի յըմբռնմանց առնի, այն է՝ մարմին զորմէ ստորոգի ինչ, առ ենթակայ. այն որ ստորոգի զնմանէ, այսինքն՝ մահկանացու, կոչի ստորոգեալ. յայս յաւելու շաղկապող բառն՝ է. Դատողականին պէսպէս են աստիճանք կատարելութեան. մի՝ նկատելով զպարունակութիւն նորա. զոր օրինակ այր աշխարհատես և մարդագէտ յոյժ՝ ուղիղ քան զայլ կարէ դատել իրս բազումս. երկրորդ՝ նկատելով զնրբութիւնն որով լինի իմանալ զմանր մանր զանազանութիւնս իրաց և գտանել զզաղտնածածուկ որ 'ի նոսին յատկութիւնս. երրորդ՝ նկատելով զճշդութիւնն՝ իբրև քաջապատշաճ է դատաստանն և անվթար. չորրորդ՝ նկատելով զաջողակութիւնն՝ երբ առանց մեծի աշխատութեան զօրէ դատողականն բացորոշել զիրս խառնափնդորս յանմնայնի. ուղիղ դատողականութիւն է՝ որ առաջնորդէ մեզ առ ճշմարտութիւն, առ բարին, առ օգտակարն, առ գեղեցիկն, որ և լուսափայլութիւն մեծ տայ մերոց ճանաչմանց. դատողականութիւն թէև անհաւասար իմն բաշխեալ որդւոց մարդկան՝ 'ի մեծապէս աճումն է բնաւորեալ՝ սատարութեամբ մարզից վարժութեան. սորայս առանձին տեսակք են որամտութիւն, խորամտութիւն և բանագիտ միտ. առաջինն առհմանի 'ի կարողութիւն խորամուխ լինելոյ 'ի թագուն յատկութիւնս, յերկրորդական յայտարարս և 'ի ներքին լծակցութիւն իրաց. խորամտութիւն որոշի մեծագոյն իմն կորովութեամբ դատողականին 'ի բովանդակ չորակարգս ըմբռնմանց. բանագիտ միտ չէ բայց խաղանման ինչ բաղդատութիւն միոյ իրի առ միւս, ուրեմն կարողութիւն ինչ ըմբռնել զպատահական և զարտաքին զգալի նմանակցութիւնս և զանազանութիւնս իրաց, միանգամայն և 'ի յայտնութիւն ածել զնոցին ընդ իրեարս լծակցութիւն. ուստի կարօտ գոյ սա կենդանի և հարուստ երևակայութեան և 'ի մասնէ բնատուր է, իսկ 'ի մասնէ արուեստակեալ, թեթև կամ ծանր, ուժգին կամ թոյլ, անալի կամ կծանողական։

Պաշտօն բանի է եզրակացուցանելն. ապա ուրեմն նախապատւին է 'ի կարողութիւնս ճանաչողականին. հետևեցուցանելն զճշմարտութիւն կամ զստութիւն առաջարկութեան իրիք յայլոց բազմաց՝

տալ եզրակացութիւն․ բանաւոր եզրակացութիւն լինի արարեալ ոճով՝ բաղկանալ յերից առաջարկութեանց, որք են․ Ընդհանուր կանոն կամ Վերադիր, Ստորադիր և Եզրադիր՝ որոյ ճշմարտութիւն բացորոշի 'ի ձեւոյն երկոցունց նախադրացն․ օրինակ իմն․ եզրական էակք չեն ամենակարող․ մարդիկ են եզրական էակք, ուրեմն մարդիկ չեն ամենակարող։ Առաջինն 'ի դրութեանցս յայտնի բացայայտէ զընդհանուր կանոն լինել, երկրորդն ստորադէ՝ թէ առարկայ լինի փակի ընդ այսու ընդհանուր կանոնաւ․ իսկ երրորդն հետեւցուցեալ լինի յերկուց նախընթացից անտի․ զատուցութիւն առաջարկութեան իւրք յանդիման կացուցանելով 'ի ձեւոյն եզրակացութեանց, այս ուրեմն և փաստից՝ ապացուցանեմք միանգամայն և զճշմարիտն․ ապացոյց մի կարօտ դոյ հաստատութեան փաստից, որոց կարեւորագոյնն մանաւանդ է փաստն գլխաւոր․ անվաստակելի գործականութիւն բանի առաջնորդէ մարդոյ առ այնպիսի ընդհանուր, լուսափայլ և ստոյգ միտս, մինչ զի առ 'ի խելամանել նոցա չիցեն այլ պէտք բացատրութեանց, ուրեմն և ոչ իսկ տեղի կայցէ տարակուսի ընդ նոցայն հաւաստութիւն․ այսպիսի միտք ասին սկզբունք։ Կատարելութիւն բանի յանդիման մատչի նաեւ յառաջիկայ յատկութիւնս․ նախ՝ զի իցէ պարունակ, այսինքն 'ի բազում հանդէսս ճանաչողութեան հնարաւոր դառնալ 'ի հասարակէն առ մասնաւորն․ երկրորդ՝ զի իցէ նուրբ, այսինքն կարող 'ի ցուցակութիւն ածել զանազանեալ որ 'ի մէջ հասարակին և մասնաւորի լծակցութիւնս․ երրորդ՝ զի իցէ հաստահիմն, այն է՝ իշխան առաջի դնել զկախումն մասնաւորին 'ի հասարակէն, չորրորդ՝ զի իցէ դիւրաշարժ, որ է՝ պաշտել զպաշտօն իւր առանց մեծի ճգնողութեան և ծախուց ժամանակի։ Այսքիկ յատկութիւնք լուսափայլ յայտ բերեն զդատողութիւնս մեր․ ընդհանուր ծանօթութիւն ստոյգ մերաբերի առ Հոգեբանութիւն, իսկ մասնաւորն անկ է Բանականին․ 'ի պիտուութեան վերնագունին ճանաչողականի խնդիր է մտադրութեան որ ընդդիմադրաբար ընդ զգայականին՝ տալ իմացական մտադրութիւն, այսինքն զօրութիւն լինել զոր ունի հոգի 'ի կիր արկանել առ կազմակերպութեամբ, առ բաղդատութեամբ և առ ամփապահութեամբ ըմբռնմանցն, մինչ կամ է նորա մատչել 'ի պայծառ ճանաչութիւն նոցա։ Այս կարողութիւն է որ անսայթաքելի ամե-

նեւյն կացուցանէ զհոգի. այն առ ընդունակ է մարդութեանն կատարելագործիլ մեծապէս, որպէս զի՝ առանց զօրելոյ զգալի առաջաւորութեանց յաջ և յահեակ զնա խոտորեցուցանել, հնարաւոր է միջոցս ձիգս և անվաստակելի լինի ուղղեցուցանել զձիգն հոգւոյ յառաջակայ մի. անհաստատութիւն, պղերգութիւն, անբաւականութիւն և անօրութիւն մտադրութեան են արտաքն՝ գլխաւորեալ նախճառելոցդ կատարելութեանց. 'ի պակասութենէ խմացական մտադրութեան յառաջանայ միտումն առ չար պատալճիւս, որ է սովորական ախտ բազմաց, ըստ որում թերակատար և աղօտ ըմբռնմունս համարին կատարեալս կամ պայծառս և զճշմարտանմանս գրեն 'ի հաւատս. ուստի հարկ է կանուխ ուրեմն սովորեցուցանել զմանկն յինքնամտածութիւն և ոչ դատել ինչ վճռաբար առանց լիուլի վերահասու լինելոյ իրին։

Այլ 'ի կարել բացատրել ընդհանուր ըմբռնմունս՝ զորովք առաջի կայ մտաց պատաղել, կարօտ գոմք սմանց նշանաց՝ առ որ պաշտին բառք մանաւանդ. ըստ այսմ խմացութիւն մտաց կապեալ է 'ի նշանս և այսր աղագաւ առ այլ եւս նշանակական գիտութիւն՝ որոյ ընդգրկմարեալն զգալի խմացութիւն՝ գիտութիւն տեսողական որ յատուկն է մանկան. վասն զի լեզու է որով հետզհետէ զարգանայ միտն և բառք են որովք ձեռնարկէ երեխայ բացատրել զնկարագիրս իւր. կցորդութեամբ բառից ընդ իրեարս գոյանայ լեզուն՝ որ որչափ ճոխ է և բարդաւաճ, այնչափ և քաջ նպաստէ զարգացման խմանալի կրթութեան. է սա ոչ միայն գլխաւոր զօրավիգն մտաց և յիշողականութեան, այլև կարեւորագոյն միջնորդ խմացութեանց, խորհրդոց և խոկմանց մարդկան. քան զայս ստորակարգ են այլ ամենայն տեսակք հաղորդակցութեան, որպէս նշանախօսութիւն որ 'ի մասնէ բնական է և 'ի մասնէ արուեստական. 'ի բնական նշանաց համարի են լացք, ծիծաղ, աղաղակ, փոփոխութիւնք 'ի նկարագիրս դիմաց, ակնարկի առնելն, շարժմունք ձեռաց որոց բազմօրինակութեամբ կարեն բացատրիլ պէսպէս խմացութիւնք, խորհուրդք և ցանկութիւնք. օրինակ իմն. զանազան շարժութեամբք ձեռաց բաւական եմք սպառնալ, զգուշացուցանել, հայցել, ախտակցիլ, այպն առնել և այլն. յարուեստականացն մասին են նկարք կամ դրօշուածք (պատկերախօսութիւն), նշանատառք և բառք։

Բազում յոյժ խորհուրդս մտաց հնար է արտայայտել քաջապատշաճ 'ի ձեռն բարբառոյ . այն առ զուգադրելի 'ի բազմաց յօդաւոր ձայնից որք ըստ ինքեանց նշանակեն ինչ ոչ , այլ պաշտին իբրև կամաւոր նշանակք իմացութեանց և ըմբռնմանց· սորայս դերազանցութիւն քան զայլ ամենայն ազգս յայտարարութեան խորհրդոց հաստատի յայս ինչ մանաւանդ· անբաւ այն բազմութիւն և պէսպիսութիւն յօդաւոր ձայնից ընդունակ է բացադրել և որոշել զայնչափ իսկ անբաւ քանակութիւն խորհրդոց· բնական նշանք համօրէն պաշտեալք 'ի թարգմանս մերոց իմացութեանց ոչ զօրեն արտայայտել, այլ զառաջինկայ ինչ ախտ, որպիսի են հայցուած, իղձ, երկիւղ, խանդրհութիւն և նմանիք, զորս հակառակն ընդունական է լեզու անցելոց և ապագայից համանգամայն · զայս հմտութիւն մարթ է ուսանիլ և հրահանգութեամբ անաղարտելի իմն տպաւորել 'ի յիշողութեան· բայց զի՞ տարբեր տեսակաւորի նոյն իսկ ձայնն · բարձրութեամբ և խորութեամբ սորա, թուլացուցանելով կամ սաստկացուցանելով զայս բացատրեմք զայդ ընդ բառից զուժգնութիւն կամ զմեղմութիւն իմացութեանց մերոց· ձայն խօսից է հաւատարիմ և հաւաստի գուշակ արդարութեան մերում սրտի· ուրանօր այլ ամենայն նշանք վերջանան ազդել, ներգործէ տակաւին բարբառն , բեր առել 'ի գիշերի և 'ի խաւարի: Անկարել մարդկան 'ի հակամիտութենէ անտի և 'ի հարկէ հաղորդել զայլս խորհրդոց իւրեանց որպէս և զինքեանս այլոց՝ Ճարտարեցին զլեզու զոր առ 'ի ուսանիլ պարգևեալ էր նոցա բնութիւն գործարանս՝ առ այդ վախճան կարգեալս առանձինն· անդէն 'ի սկզբանն հարկ էր բովանդակել լեզուի 'ի բառս յայտարարս կարևորագունից եւեթ պիտոյից և յաւէտ սովորականաց առարկայից տարրական աշխարհի· որոյ վասն չքաւոր էր յոյժ· բայց ըստ զարգանալ կարողութեանց Ճանաչողականին հետզհետէ ընդարձակեցաւ քանակութիւն ըմբռնմանց, ուստի Ճոխացաւ լեզուն զիւրն ընդլայնեալ զպարունակութիւն: Ըստ չափու բաժանելոյ մարդկան յայլեայլ ազգս, ըստ չափու հեռանալոյ նոցա 'ի միմեանց, նովին համեմատութեամբ կերպարանափոխ եղև լեզու նոցա· զոր օրինակ յառաջացան օր քան զօր ազգք ազգք լեզուաց· Թէպէտ իւրաքանչիւր մի 'ի նոցանէ՝ որչափ և տարբեր 'ի միմեանց իցեն, ունի ինչ ինչ հասարակաց և կարևոր յատկութիւնս· առ 'ի

նշանակել զբանս հնարաւորեցին մարդիկ զգիրս, այլ գիւտ գրոց յառաջ խաղաց աստիճան առ աստիճան. առաւել հնագոյ՚քն տեսանելին դրօշուածք, յորոց սո՛յն են նուիրական գիրք Եգիպտացւոց, որոց վախճան էր ոչ թէ զու նկարագիրս առարկայից զորոց ցոյցս այնք բերէին, այլ որք նմանագրէին զայլ յատկութիւնս։ Առ Մինեացիս գտանեմք վանկագիրս, բայց կատարեալքն յաւէտ կան և մնան նշանագիրք. միջնորդելով սոցունց՝ որոց թիւ չանցանէ անդր քան զքսան և չորս առ Եւրոպացիս՝ զօրեմք նշանակել զանբաւ բազմութիւն ձայնից։ Նշանագիրք յառաջացան վերլուծութեամբ իւրաքանչիւր վանկից ՚ի պարզ մասունս իւրեանց. ընթերցանութիւն և գրութիւն տաւից այնչափ հեշտին է մինչ զի երեխայք անգամ ուսանին զայդ. արագափոյթ ծաւալումն իմանալի հրահանգաց, նոյն ինքն յաճախեալ կենցաղակցութիւն ՚ի մէջ մարդկան, այլև ընդհանուր բարդաւաճանք գիտութեանց համօրէն ազգերացն ՚ի գիւտ նշանագրաց՝ որ անտարակոյս իմն է յաւէտ կարևորագոյնն և չնաշխարհիկ միանգամայն ՚ի հնարագիտութիւնս մարդկային հանճարոյ։ ՚Ի նորագոյն ժամանակս հնարեալ եղեն նշանալեզուք բազումք, որպիսի են մատնալեզու խլից և համրաց, նշանացոյցք հեռագրաց, նաւուց և որ ևս այլք ՚ի նոյն կարգին։ Որ և է բարդաւաճութիւն և կատարելութիւն իրիք լեզուի, չէ բաւական տակաւին պարագրել յինքեան զբովանդակութիւն մարդկեղէն խորհրդոց, վասն զի պակասեն դեռ ևս անուանակոչութիւնք բազում յոյժ իրաց, որպիսութեանց հոգւոյ, իմացութեանց և մանր մանր որ ՚ի նոսին զանազանութեանց. թո՛ղ զայս. ոմանք ՚ի բառից յոգնանշանք են, կէսք՝ անճիշդք, այլք դարձեալ՝ համանշանք։

Լեզու՝ տեսեալ ինքնօրէն՝ է ոչ թէ միայն մի ՚ի կարևորագունիցն նշանաց որք տարբերեն զմարդ յանասնոց, այլև մի յառաւել ծանրակշիռ և արժանի մտադրութեան խնդրոց ՚ի հոգեբանական հանդիսի. սորայս անբաւ խորութիւն և լի սքանչելեօք խորհուրդ յայն սակս ոչ ստորակայի մերում քննութեան և ծանօթութեան, զի ամփոփութիւնն՝ համապազօրեայ կիրառութեամբ նորին բթեցուցանէ զաչս մեր առ այդ, յոր և նման բազումք ՚ի մարդկանէ առ տեսութեամբ կազմածոյ աշխարհի՝ վասն այն ոչինչ գիտեն և զգան յանձինս ՚ի զմայլեցուցիչ հեշտութենէ անտի զոր սովոր է յարու-

ցանել մտախոհն աշխարհագննութեն, զի ոչ զառաջին նուազն տեսանեն զնոյն․ բայց զորլին հակառակն արք մտածողք զհրաշակերտութիւն լեզուի համարեցան երկրորդ զկնի կենացն սքանչելագործութեն, կամ՝ որպս Հերդեր յիւրում մատենի մակագրեալ Ideen zur Philosophie der Geschichte der Menschheit, գիրք Թ․ գլ․ Բ․ գեղեցիկս հընչե-ցուցանէ՝ ամենամեծն 'ի հրաշս արարչագործութեան աշխարհի, թող զկենդանի էակացն ստեղծումն։ Նոյն այր սիրալիս խօսի անդր եւ․ »եթէ մի ոք առաջի դիցէ մեզ առակ ինչ այսպիսի․ զիարդ պարտ իցէ զնկարագիրս աչաց եւ զամենայն իմացութիւնս ակնակս զգայարանաց մերոց ոչ թէ միայն կապել 'ի ձայնս, այլ եւ զձայնս զայսոսիկ ընծա-ծին իմն զօրութեամբ այնպէս արտասանել յունկն ընկերին, զի եղիցին յայտարարք մտաց եւ զարթուցիչք խորհրդոց, զանգիրս զայս՝ չէք տարակոյս՝ թէ գրէաք ծնունդ մտաց առն խելագարի՝ որոյ զիրս անհաւասարս մինչ 'ի սպառ շփոթելով ընդ իրեարս՝ կամք էին յեղաշրջել զգոյն 'ի ձայն, զձայն յիմաստ, զիմաստ 'ի շօշա-չեան նկարիչ․ բայց զայս խնդիր լուծեալ է Աստուած գործով եւ արդեամբք․ հաղագ բերանոյ մերոյ լինի պատկեր աշխարհի, յա-րացոյց մերոց խորհրդոց եւ զգացմանց 'ի հոգւոջ ընկերին․ 'ի շարժ-ման սակաւ ինչ օդոյ կախի ամենայն զոր ինչ երբեւիցէ յաշխարհի մարդն՝ մարդավայելչապէս խորհեցան, կամեցան, գործեցին եւ գոր-ծելոց են, վասն զի մեք ամենեքին թափառական վարէաք տակաւին 'ի խորս անտառաց՝ եթէ չէր փչեալ 'ի մեզ այն այս շունչ աստուա-ծային, որպէս զի յածիցի զշրթամբք մերովք իբրեւ ձայն իմն թովիչ․ վասն որոյ բովանդակ պատմութիւն մարդկութեանս եւ որ 'ի նմայն գանձք աւանդութեանց եւ քաղաքագործութեան ազգաց չեն հնարա-ւորեալ բայց միայն վերլուծութեամբ աստուածային առակիս։ Զի՞ք մարդոյ գաղափար առ որ պակասէ նմա բառ․ տեսութիւն ամենայն՝ որ եւ է նորին տպաւորութիւն, կայ եւ մնայ մռայլ ինչ զգայութիւն՝ մինչեւ հնարեալ հոգւոյ նշան ինչ ծանօթարար, միջնորդաւ բառի զուգաւորիցէ զնոյն ընդ յիշողականին, ընդ վերստին յիշելու-թեան եւ ընդ մտացն։ Բան առանց լեզուի է ինչ մի անգիտ յաշ-խարհի աստ․ նոյն Ճառ է զկրից սրտին, զամենայն հակամիտութեանց մարդկայինս ընկերութեան․ լեզու է միայն՝ որ արար զմարդն՝ մարդ, վասն զի չափ եւ կապար դնելով բուռն յորձանաց կրից նորա՝

կարող նմա ընդ ձեռն բառից բանաւոր արձանս յիշատակաց։ Ոչ քնար Ամփիոնի շինեաց զքաղաքս, ոչ կախարդական ինչ դաւազան բազխեալ յեղափոխեաց զանապատս 'ի շէնս. լեզու է ապաքէն՝ որ հրաշագործեաց զայդ ամենայն, լեզու՝ զմեծն ասեմ 'ի միաբանողս մարդկան։ »

Այժմ խնդիր 'ի մէջ եկանէ թէ իւ իցէ կարողութիւն ընդ քանի մի հազար ձայնիւք և հնչմամբք պարագրել զբոլոր մարդկութիւնս և զընութիւն անեզրական. այլև թէ ուստի՛ իցէ շարժեալն օդոյ՝ որ հասեալ յականջս Թմբկաց իբրև զձայն՝ այս զօրութիւն իջանելոյ 'ի խորս հոգւոյ և յարուցանելոյ 'ի նմին՝ յար և նման հողմոյ յերեսս ջուրց՝ է որ մեղմիկ ծածանմունս և է որ սաստիկ ծփանս ալեաց. կրկին դարձեալ՝ թէ իւ բաւական իցէ բանաստեղծ ոք կամ ատենաբան՝ վառեալ 'ի լեզու առեղծուածոց իւրոյ երևակայութեան՝ այնպէս դրդել զհիմունս որտի մերոյ, մինչև ըստ հաճոյից նորա ծիծաղիմք կամ լամք, սիրեմք և ատեմք, գործեմք և դադարիմք. զայսոսիկ և զոր այլ այսպիսի խնդիրք՝ ցորչափ ինչ 'ի հասարակի լուծանելի են մարդկեղէն հանճարոյ՝ զօրէ յայտնաբանել Հոգեբանութիւն ցբաւ հաւանականութեամբ։ Զնոյն ինքն ըմբռնումն լեզուի՝ առեալ ակրապէս՝ մարթ է հոգեբանաբար միայն բացադրել և իմանալ։

Ամենայն կենդանեաց տուեալ է կարողութիւն 'ի ձեռն շարժողութեանց բացայայտել զներքին որպիսութիւն կենաց , կարողութիւն ինչ յայտնողական, լեզու ընդհանրապէս, այն է՝ բարբառ 'ի ձեռն շարժուածոց, որպիսի են երեսաց, աչաց և այլն. թող զայս. ոմանց կենդանեաց է հնարաւորութիւն ծանօթս տալ զներքին որպիսութենէ իւրեանց 'ի դուրս կացուցեալ շառաչեցուցանելով զօդն. այս կարողութիւն ասի ձայնարկութիւն՝ որ հանդիպի յայն կենդանիս միայն որք շնչեն 'ի ձեռն թոքոյ և որք կարեն ընդունիլ յինքեանս քանակութիւն օդոյ զկարևորեալն առ այդ վախճան. այն է 'ի կաթընկեր կենդանիս, 'ի թռչունս և յերկակենցաղս. բայց մարդոյ միայն յատուկ է լեզու՝ խօսելով ճշդապէս, այսինքն կարողութիւն որով լինի նմա զօդն՝ անցեալ 'ի թոքոյ ընդ շնչափողն և ընդ խուչակն՝ 'ի ձեռն զանազան կայից և շարժուածոց բերանոյն գործարանաց (որպիսի են լեզու , ատամունք , կոկորդ և շրթունք ) յեղանակել բազմօրինակաբար, կամ թէ զհանապազորդութիւն ձայնի՝ որ միա–

տարազ շարունակութեամբ առանց տարբերելի ինչ մասանց ունել յարաձգիլ՝ ընդհատել և մանաւորել. այս ընդհատութիւն ձայնի առի յօդաւորութիւն կամ անդամաբաշխութիւն ձայնի որ է արգասիք ինքնագործականութեան, ազատութեան, խորհրդածութեան և կամաց հոգւոյ, որ՝ ոչ միայն առ 'ի յայտնել զխորհուրդս իւր և զզգացմունս, այլև առ 'ի նկարագրել զնոսա՝ նկատմամբ և ախորժելով անդամ անդամ չարակապէ զձայնս կամ զհնչիւնս առ 'ի կազմել ինչ մի ամբողջ, և ըստ կամաց եղելէ զձայնն, մինչ հասեալ իցէ իւրում նպատակին: Աստի ինքնին զհետ գայ՝ թէ լեզուն պատշաճի մարդոյ միայն, վասն զի սոյն այս խորհրդաբար կիրառութիւն գործարանաց լեզուին առ որոշեալ ինչ վախճան՝ ենթադրէ ոչ միայն զմիտումն նկարագրաց 'ի հասարակի, այլև զվերնագոյն կարողութիւնս ճանաչողական, մերացուցանողական և քննողական, կամ ըզկարողութիւն մտածողական՝ առեալ 'ի բաց, որ իբրև բան՝ վայել է միայն մարդոյ: Այս լուսափայլ ևս առաջի հանդիպանց յայտ ինչ, զի թերադրութեամբ բնութեան 'ի դուրս հնչեցուցեալ ձայնք որ 'ի կենդանիս զգայութեանց չեն, բայց լոկ ներգործութիւնք զգայութեանց և ծնանին յոչ կամաց ամենևին, այլ և չանցանեն ըստ սահման այսր անձնական վիճակի զգայութեան, մինչ 'ի հակառակն՝ լեզու մարդկային բնական է զինչ աշխարհ մասց պարագրել յինքեան և նկարագրել այլոց. միանգամայն ասացից. սակ մի տեսութիւն լեզուի իբրև զուգախառնութիւն յօդաւոր ձայնից առ 'ի բացատրել զներքինս մեր՝ ապացուցանէ թէ լեզու է առանձնաշնորհութիւն իմն առեալ մարդկութեանս, և անձուկ յոյժ լծակից է ընդ բանի. ևս և՝ թէ առանց զօրայս ճանաչելոյ զէութիւն չմարթի ոչ իմանալ զմիտս և ոչ բնաւ իսկ գիտակցել: Ըստ այսմ ամենևին անպատշաճ է ընծայել կենդանեաց զլեզու. յայտնի զաղղիացին Դիւփօն դը Նէմուր (Dupont de Nemours) համարի իմացեալ կատարելապէս մետասան բառս ագռաւուց, եօթն և տասն՝ հաւուց, երեսուն և երիս՝ շանց, չորեքտասան՝ կատուաց, քսան և երկուս եզանց և կովուց և զեղու ագռաւուց, որպէս զի հաւանեցու յառեան հանել ամեն իւր բառարան ինչ. ո՞չ. կարի՛ է թեթևամտութիւնք և թեթևամտութեանց թեթևամտութիւն. Journal politique, 1803 եր. 651.

Լեզու և բան վերաբերին մի առ միւս, հնարաւորեն մի զմիւս և ենթադրեն մի զայլ և ներգործեն յիրեարս անդրադարձութեամբ. լծակցութիւն ինչ՝ զոր և Պղատոն ('ի Ճառն մակադրեալ Թէէտէ-տէտոս) որոշակի արտայայտեաց՝ կոչելով զմտածելն զրոյց հոգւոյ ընդ ինք ինքեան 'ի ներքինս իւր, իսկ զբանս՝ արտաքուստ ճանա-չելի պատկերս խորհրդոց. աստի հնար է բացատրել զնոյնութիւն կամ զյարակցութիւն ձայնից որ 'ի բազում լեզուս պաշտին առ 'ի նշանակել զերկոսին կարողութիւնս զայսոսիկ. բե՛ր առել 'ի յունա-կանն՝ λόγος, λέγειν, διαλέγεσθαι, 'ի լատինականն՝ ratio, oratio; 'ի գաղղիականն՝ entendre, entendement, 'ի գերմանականն՝ Vernunft, vernehmen, 'ի հայումն՝ բան՝ որ ամենեին հաւասարի յունականին λόγος. Մտածելն, այս է՝ ճանաչելն իմանալի եղանակաւ 'ի ձեւն ըմբռնմանց, դատողութեանց և եզրակացութեանց՝ անհնարին է առանց լեզուի, վասն զի՝ ոչ միջնորդելով բառից՝ անկարող լինիմք զխորհուրդս մեր կալ մի ամփոփ և ժողով ունել (ըստ որում զգալի նկարագիրք անընդդիմանալի իմն զրաւեն յինքեանս զխառն'ցութիւն մեր, տարագիր զայլս ամենայն հանելով, և ըստ որում չէք ինչ օգուտ յանկայումն և 'ի փախստական խորհրդոց), և կալ մի պահպանել անկորուստ (քանզի յիշողականն բաւէ միայն պահպանել յինքեան զգալեաց նկատելի նկարագիրս կամ որ ընծայեցին են ասցանց անըզ-գալի նկարագիրք. այսուհետև վասն և խորհուրդք մեր ցայն վայր միայն զօրէին ունել 'ի հոգւոջ, ցոր վայր զխառնկից էաք նոցա, ուրեմն և մտածութիւն մեր պարտէր միշտ նոր 'ի նորոյ սկսանել), որպէս զարձեալ՝ անմարթ էր զայլս հաղորդեցուցանել մերոյն խորհրդոց, ապա և չէր իսկ զարգացուցանել և կատարելագործել զբանն, վասն զի առ պարգեւեալ է մարդոյ իբրև ընդունակութիւն միայն, զոր առ 'ի հրահանգել և կրթավարեցուցանել՝ անհրաժեշտ է արտ զմեզ օգնա-կանութեան և գործակցութեան սոցին։ Զանձուկ զայս կապակցու-թիւն լեզուի և բանի վկայութեամբ հաստատեն և անուրանալի այն իրողութիւնք 'ի վերայ աշխարհի՝ թէ առ իւրաքանչիւր ազգս բան և լեզու միշտ աջակից միմեանց գտան, թէ բարգաւաճանք կամ նուազութիւն քաղաքական կարգաց անհրաժեշտ իմն պատկերանէ իբրև 'ի հայելւոջ 'ի լեզուի անդ, և թէ անդստին 'ի սկզբանց զոյգ ինչ խաղք յետական յայտնի գործարանս ամենայն գիտութեանց

5*

յեղափոխէ զազգ ինչ ընդունակ 'ի ժողովուրդ մի այլ և անլուծանելի իմն կապեալ 'ի ստորին աստիճան լուսաւորութեան. բե՛ր ասել զՉինացիս որք միայն առ դժուարութեան ուսանելոյ զ 80,000 նշանագիրս լեզուի իւրեանց՝ հարկաւորին կալ և մնալ մշտապէս 'ի հազարամեան ժամանակաց հետէ 'ի մի և նոյն վիճակի լուսաւորութեան։ Եւ ոչ չափ միայն. այլև լեզու, խորհուրդք մտաց և բարք ազգին 'ի միմեանս փոխաբերութեամբ իմն որ արժանի է ուշադրութեան . բովանդակ բնաւորութիւն և առանձին ոգի այլև այլ ազգաց երկրի (որոց տարբերութիւն իսկ չէ այլուստեք յառաջացեալ տիրապէս, եթէ ոչ 'ի լեզուէ անտի, որ է միայնակ հաւանական խորոց ընդ ազգս) մերկանդամ ամենեւին կենդանագրի 'ի նոցայն լեզուի, որ պատկերացուցանէ յինքեան որպէս թէ զհամօրէն իմանալի գծագրութիւն ազգային երեսաց , 'ի լեզուի ասեմ յորս ի ձեւս տպաւորեալ պահի ոչ միայն եղանակ գործառնութեան և ճանաչողութեան ազգաց 'ի հանդէսի գիտութեանց և արուեստից, այլև եղանակ զգալոյ և գործելոյ նոցա՝ մինչ բան է զերկիւղածութենէ, զառաքինութենէ և զարդարութենէ . սոյն այս ազգային հարազատութիւն 'ի յայտ մատչի է զի 'ի ճոխութեան և 'ի բեղմնաւորութեան անդ բառից , 'ի բաղդատութեան նոցին ընդ միմեանս , 'ի կակղութեան կամ 'ի խոշորութեան ձայնից զուգադրութեան 'ի հասարակի , և է զի յորիշ որիշ ոճս ասից, 'ի դարձուածս բանից և յառանձնաւորութիւնս՝ մինչև յեղանակ խօսից իւրաքանչիւր անհատի անդր , որպէս զի արդարանայ ամենայնիւ ասելն յունական առածին . Նշանացոյց բնաւորութեան՝ բանք մարդոյ (ἤθους χαρακτήρ ἐστι τ᾽ ἀνθρώπου λόγος), կամ ասելն Լէյբնիցի՝ թէ Լեզու է հայելի հոգւոյ և կամ առածն Բիւֆոնի . Ոճն է նոյն ինքն մարդն (Le style c'est l'homme).

'Ի նախաճառելոցդ ինքնին բացերևի ծանրակշիռ յարգ և կարեւորութիւն հիմնապէսն ուսումնասիրութեան լեզուաց՝ տեսելոց 'ի հասարակի իբրև իրագործութիւն ինչ 'ի կեանս ողջոյն մարդկութեան, կամ՝ խօսելով այլապէս՝ իբրև ուսումնասիրութիւն իմաստասիրական կամ ընդհանուր լեզուաբանութեան , զոր և պա՛րտ է միշտ լծորդել ընդ մասնականին լեզուի իւիք (*) , առ որ՝ ըստ

(*) Քաջ ասէ Հէրդըր գերմանացի յիւրն Սոփրոն՝ թէ պարտա-

բնութեան իւրն՝ նախապատիւ քան զամենայն ընտրելի էր լեզու մայրենի՝ գանձ այնպիսի քան զոր չիք ինչ նուիրական և մեծակշիռ վասն ազգի իւրաքանչիւր. ուստի խռովեցուցիչ և անագորոյն միանգամայն է բառնալ յաղթողաց 'ի պարտելոցն ազգաց զորոցն լեզու հայրենական, կամ առ սակաւ սակաւ բնաջինջ զնոյն առնել. ոճ արդարև սատանայական որով 'ի հնումն արդէն վարեցան Հռովմէացիք, որով և 'ի նորումս բռնաւորն Նապոլէոն փորձ փորձէր առ Գերմանացիս ընթանալ (*)։ Բայց ուսումն քերականութեն իւրաքանչիւր՝ թէ ընդհանուր իցէ և թէ մասնական, ենթադրէ զուսումն Բանականին. վասն զի խօսելն չէ այլ՝ եթէ ոչ 'ի ցուցակութիւն ածելն մտածութիւն, և ընդհանրապէս՝ ամենայն քերականական ձևք բառից զոյգ և կշիռ ելանեն ձևոց դատողութեան. սապէս միութեան ըմբռնմանն համեմատի միութիւն բառին. բաղադրութիւն միոյ և եթ բառի 'ի բազում վանկից նշանակեալ լինի չեշտիւ, որ է՝ արտասանելով զմի 'ի վանկից ('ի հայումս զվերջինն միշտ, իսկ՝ իբր 'ի բազումս առ Եւրոպացիս՝ զյաւէտ յարակիցն գոյական կամ ար-

---

կանութիւն է մարդոյ ուսանել քերականութիւն ինչ՝ որ է իմաստասիրութիւն լեզուի, իսկ լեզու է բովանդակութիւն ըմբռնմանց մարդոյ. սորին վասն՝ որչափ կատարեալ և բարդաւաճ է լեզու ուստի ուսանի ոք զքերականութիւն որ է տրամաբանութիւն և փիլիսոփայութիւն մարդկային բանի, նոյնչափ իսկ հիմնապէս ուսանի զայն և ստանայ իւր անտի գաղափար ոճոյ և կարգի, ճշդութեան և պայծառութեան ըմբռնմանց յիւրաքանչիւր հանդէսս գիտութեանց, լեզուաց և հմտութեանց. նա որոյ 'ի կեանս իւր չիք ուսեալ քերականութիւն ինչ՝ ոչ ուսանի բնաւ գրել կամ խօսել ճշդապէս, գտնեայ վստահութեամբ՝ ոչ երբէք. այնպիսին մնայր յայսկոյս և յայնկոյս՝ չունելով 'ի ձեռին զառաջնորդականն լար 'ի մեծի լաբիւրինթոսի անդ բառից և խորհրդոց։

(*) Մայրենի լեզուք՝ գեղեցիկս բարբառի Ժան Պաւլ գերմանացի՝ են սիրտք ազգաց, պահպանիչք և շարժարանք սրտի, կենդանութեան, միութեան և ջերմութեան. զայն զայս սիրտ 'ի բաց հատանել յոր և է ազգէ նոյն է որպէս թէ ոք մեռուցեալ զկենդանին 'ի մամուլս ճնշիցէ։

մատական անուան) ոսկաւ մի յերկար կամ ուղ, այսինքն չեշտելով։ Գոյականն պաշտի առ 'ի նշանակել զէնթակայն 'ի բանի կամ զըմբռնումն ինչ սեռական. յոգն և թուական անունն ցուցանեն զորքանութիւն կամ զբովանդակութիւն սեռական ըմբռնման. Նըշանակք ստորոգելոյն են ածականն և մակբայն՝ է որ ընդլայնելով զբովանդակութիւն սեռական ըմբռնմանն և է որ բացայայտելով զյատկութիւն ինչ յաւելեալ առ ըմբռնումն ստորոգելոյն։ Առ 'ի շաղկապ 'ի մէջ նկարագրաց 'ի բանի՝ պաշտի էական բայն. միւս այլ բայք ցուցանեն զստորոգեալ ինչ՝ որ պարունակէ յի՛քեան զյարակցութիւն պատճառի և հետևանաց կամ զգուգախառնութիւն ստորոգելոյն և զշաղկապին 'ի մի բոլոր։ Երկրորդական որոշմունք 'ի բանի բացայայտին 'ի ձեռն նախդրաց և հոլովից ըստ զանազան խոնարհմանց, որ է 'ի ձեռն այնպիսի ձայնից որ նշանակեն զյարաբերութիւն ըմբռնման ստորոգելոյ իրիք առ ըմբռնումն էնթակային որ առ այդու ոչ մտածեալ լինի իբրև էնթակայ բանի, այլ որ արբանեկէ ևեթ առ 'ի ճշգագոյն որոշումն ստորոգելոյն։ 'Ի քննութենէ հոլովից 'ի բաց հանեմք զուղղականն և զլրացուցական նորին զկոչական, որոց յարգ ոչ այնչափ մեծ է 'ի հանդիսի բաղդատութեան, որչափ 'ի տրամաբանական և 'ի ճարտասանական կարգի. վասն զի իբրև սկզբունք և հիմունք ձևակերպութեան բանի ոչ հնարաւորեն այնք քերականական ինչ տեսութիւնս որպէս հանդիպի յայլ կազմուած և հաղորդակից իրերաց որպիսութիւնս. վասն որոյ ուղղական և կոչական հոլովք անընդունակ են բաղդատութեան որ է էութիւն հոլովոց 'ի համաձայնութեան։ Սեռական հոլովն յերկրորդական որոշմունս բանի նշանակէ զէնթակայ որ և լցէ ստորոգելոյ. Հայցականն յերկրորդական որոշմունս փոխադարձ ներգործութեան բացայայտէ զանմիջաբար կախելութիւն, որպէս դարձեալ Տրականն՝ զկախելութիւն 'ի ձեռն բաղադրական առընչութեան։ Խօսելով յաւէտ պարզապէս՝ մարթ էր զերիս առացեալ հոլովդ լուսաբանել և այսպէս. միջնորդաբար ներգործական հոլով է հոլովն կախման՝ որ մտածեալ լինի իբրև արտաբղխումն կամ ծագումն ինչ, ուստի առ սեռական (կոչմեալ ըստ յունականին γενική), իբր հոլով սերողական. մինչ գոյական անունն եդեալ յուղղական հոլով՝ մտածեալ լինի ինքնորէն և անմիջաբար ներգործական, առեալ զներպարանս

տեսականի՝ յայն սակս (ուրեմն միջնորդաբար) տեսեալ լինի իբրև ներգործական, զի այլ ինչ մի խորհեալ լինի կախ 'ի նմանէ՝ է որ արտաբղխելով անտի և է որ վերաբերելով անդր 'ի հասարակի· օրինակ իմն· լոյս արեգական· այսինքն լոյսն՝ որ բղխի յարեգականէ կամ որ յատուկն է նմա· աչս տեսանօղ արեգակն մտածեալ լինի ներգործական կամ ինքնիշխան՝ վասն այն՝ զի լոյսն բղխի անտի, ապա ուրեմն և արեգականն ներգործականութիւն հնարաւորեալ դնի առ 'ի լուսոյն՝ անտի բղխելոյ։ Հոլովք պատճառաւորութեան նոյնպէս կրկին տեսանին· անընդմիջական հոլով պատճառաւորութեան է՝ որ նշանակէ զանխառն իրագործութիւն միոյ յայլմէ, որպէս զի իրագործեալն անուն զպատճառ իւրոյ սահմանաւորութեան ունի արտաքոյ իւր ինքեան յայլում սահմանողի· ուստի և առի պատճառական ( αἰτιατική )· զոր օրինակ · հարկանեմ զայրն, յորում բառս այր մտածեալ լինի իբրև ենթակայ անմիջական իմոյս գործողութեան, ապա ուրեմն է ենթակայ իրագործեալ և պատճառաւորեալ առ յինէն։ Միջնորդական կամ բացառական հոլով պատճառաւորութեան է հոլովն սոսկ վերաբերութեան, որ մտածեալ լինի իբրև անցումն ինչ 'ի միոյ առ միւս, իմա՛ տրականն (δοτική)՝ իբր տուողական կամ փոխաբերական· որպէս· օգնեմ բարեկամիս · որ է՝ օգնական լինիմ ակնարկութեամբ 'ի բարեկամս, որպէս զի օգնականութիւն իմ փոխաբերի 'ի նոյն անդր · զորոյ հակառակն՝ հարկանեմ զայրն՝ նշանակէ գործողութիւն ինչ անմիջաբար փոխանցեալ յենթակայ ինչ այլ, որպէս զի սա պատճառաւորեալ առ 'ի գործողութենէ անտի՝ փոխադրի 'ի վիճակ կրաւորական։ Ապա ուրեմն հայցական հոլովն նշանակէ զանընդմիջական ինչ փոխանցութիւն, որ է՝ ազդեցութիւն 'ի միւս այլ· 'ի սորին հակառակէ՝ ցուցանէ տրականն միջնորդական ինչ փոխանցութիւն որ է սոսկ վերաբերութիւն առ միւս այլ կամ յօգուտ և կամ 'ի վնաս նորին։

Միւս այլ իմն ձև տրականի է հոլովն Բացառական որ կամ բացատրէ զուսան կամ զորպէսն ներգործութեան և կամ զմիջնորդութիւն սոսկ եւեթ 'ի հասարակի, որպէս զի կախեալն և միջնորդեալն յայլմէ չէ՝ որպէս 'ի տրականին՝ առարկոյ, այլ նոյն ինքն ենթակայ· զոր օրինակ· լցայք 'ի բարութեանց քոց՝ տէր· լցաք ողորմութեամբ քով· յորս մեք՝ որ ընդունիմք՝ մտածեալ լինիմք իբրև կա-

խեալը զաւարկայէ մերոյս լինելոյ. ապա ուրեմն միջնորդեալն կամ պատճառաւորեալն է նոյն ինքն ենթակայն. զորրին հակառակն՝ ոճս այս. օգնեմ ընկերիս՝ ցուցանէ թէ միջնորդեալն և իմով օգնականութեամբ պատճառաւորեալն է առարկայն, ընկերն իմ: Այս հոլով յատուկ է լատինական լեզուի միայն և ամենևին պակասի առ Յոյնս, որք զայս թերութիւն լցուցանեն 'ի ձեռն նախդրաց, այլոց հոլովոց և կամ առանձին վերջաւորութեամբք բառից: Այն այս բացառական լատինացւոց մեծապարունակ է քան զհայկականս մեր, վասն զի փակէ յինքեան զբացառական և զգործիական հոլովս մեր միանգամայն, որ և 'ի հայումս յաճախակի փոխանորդեն մի զմիւս: Գործիական ասացեալ հոլով հայոց երևի եղեալ առ զինի քերականս, վասն զի 'ի հին քերականութեան ոչ լինի այդմ յիշատակութիւն: 'Ի սանսքրիտեան ամենակիրթ և 'ի ճոխ լեզուի գտանին երեք ձևք յատարարք բացառական հոլովոյ, կամ՝ որպէս մեզ թուի՝ զանազան հայեցուածք բացառականին, որպէս առ Հայս բացառական և գործիական հոլովք առեալք միանգամայն՝ հաւասարին միումն բացառականի լատինացւոց:

Նոյն զուգակշռութիւն տեսանի և 'ի ժամանակս բայից. ձև ժամանակի առելոյ պարզապէս՝ է ներկայն որ է միութիւն և սկիզբն կազմութեան ամենայն ժամանակաց, ուրեմն ենթադրէ նոյնպէս զայլ ամենայն ձևս ժամանակի, և դարձեալ՝ յիւրաքանչիւր ձև առանձին՝ որպէս յանցեալն նոյն և յապառնին՝ յանդիման կացուցանէ զէական ներգործութիւնս իւր: Վասն զի ներկայ գործողութիւնն մերածեալ իբրև լրացեալ և կատարեալ՝ ծնանի զանցեալն, իսկ մերածեալ իբրև լրանալոց կամ հնարաւոր 'ի կատարումն՝ զապառնին. բայց կրկին դարձեալ՝ իւրաքանչիւր մի 'ի ձևոց սոսկ՝ տեսեալ ինքնօրէն՝ է պարզ, այսինքն միութիւն երկուց հակառակաց. վասն զի անցեալն՝ նկատեալ պարզաբար և անխառնօրէն՝ է ներկայ անցելոյն, ուստի իրաւամբք ասացեալ առ ստոյիկեան փիլիսոփայս ներկայ կատարեալ τέλειος ἐνεστώς. օրինակ իմն. գրեալ եմ՝ վերաբերեալ առ ժամանակն՝ է ներկայ, իսկ վերաբերեալ առ գործողութիւնն՝ կատարեալ. ձևս այս եթէ վերլուծանիցի՝ նշանակէ. եմ այն որոյ զգործողութիւն գրելոյ է աւարտեալ. ուստի առ լատինացիս vixit, մեռեալ է. fuit, չէ այլ ևս: Դարձեալ՝ սոյն այս ներ-

կայ անցելոյ՝ ըստ որում ներկայ՝ կարծէ յինքենէ զդիմադրութիւն երկուցունցս՝ անցելոյն և ապառնւոյ. վասն զի անցեալն, կամ՝ խօսելով Ճշդապէս՝ ներկայ անցելոյն յանդիման լինի նախ՝ իբրև կատարեալ անցելոյ՝ 'ի գերակատարիս գ ր ե ա լ էի, յորում անցեալն (էի) և կատարեալն (գրեալ) բացայայտին միանգամայն. երկրորդ՝ իբրև ապառնի անցելոյ յանկատարին անդ՝ գ ր է ի՝ որ է. մտադրեալ էի (անցեալ) առ 'ի գրել (ապառնի), կամ թէ. սկսայ զգործողութիւն գրելոյ (անցեալ) զոր աւարտելոցն էի (ապառնի):

Նոյնպէս դարձեալ ընդդիմադրին միմեանց անցեալն և ապառնին՝ յապառնի ժամանակին: Պարզ և անխառն ապառնին, որ է ներկայ ապառնի՝ է. գ ր ե լ ո ց եմ sum scripturus. անցեալ ապառնի՝ գրեալ եղէց, scripsero, ἔσομαι γεγραφώς. իսկ ապառնի հանդերձեալ՝ որ չէ պարծածական առ հայս՝ գ ր ե լ ո ց եղէց, scripturus ero, γράψων ἔσομαι.

Այժմ ամենայն ուրեք տեսեալ լինի կախումն ընդհանուր քերականութեան (զորս դիտութիւն ենթադրէ դարձեալ իւրաքանչիւր մասնական) 'ի Բանականէն, որ և ինքն չէ այլ՝ եթէ ոչ մասն Հոգեբանութեան և առանց սորայս օգնականութեան ոչ կարէ իմացեալ լինիլ ըստ պատշաճին. յաւել առ այս և զայն, թէ բաղում այլ՝ ընդհանուր լեզուաբանութեան պատկանաւոր խնդիրս մարթ է միայն լուծանել 'ի հոգեբանականն հանդիսի. զոր օրինակ՝ թէ ո՞ր աղագաւ մարդիկ 'ի հասարակի խօսին և ոչ լռեն. այլև՝ թէ ընդէ՞ր 'ի խօսս իւրեանց իբր 'ի բաղումս վարին ըստ լի նշանօք (ձայնիւք) և ոչ այլովք. խնդիր կարևոր յոյժ և բազմադէմ. այն ինքն է՝ յաղագս ծագման լեզուաց և լծակցութեան առաջին կամ արմատական բառից ընդ ձայնս անձնական զգացմանց և ընդ օրինակումն առարկայից: Յաղագս մեծախորհուրդ յատկութեան և կազմութեան լեզուի հերիքացի ասել համառօտիւք այսչափ:

Եկեսցուք այժմ 'ի քննութիւն ոմանց տեսակաց վերնագունին Ճանաչողականի, որք չեն զուգահաւասար յամենեսին. ոցունց սակի են կ ա ր ո ղ ո ւ թ ի ւ ն Ն ա խ ա տ ե ս ա կ ա ն և ասացեալն Ոգի (genius): Բաղդատելով զառաջակայս ընդ անցեալսն, այլև կշռելով զորպիսութիւն այժմեան իրաց ընդ փորձս արարեալս յառաջագոյն՝ ընդունակ եմք ցրաւ իմն հաւանականութեամբ նախատեսանել զհանդերձեալսն.

'ի սակս քննութեանց օդոյ հնար է գուշակել զապագայ եղանակն. 'ի տեսութենէ ներկայ քաղաքական իրողութեանց, 'ի բաղդատութենէ այժմեանց առ անցեալըն մարթ է հաւանականաբար յայտ եղբակացուցանել զոր գալոցն է, նոյն և կարապետել 'ի պատերազմ կամ 'ի խաղաղութիւն, 'ի յաջողութիւն կամ 'ի ձախորդութիւն. որպէս նկատելով զգիարդն ախտի, զպիտանութիւն ոմանց դեղոց, զխառնուած հիւանդին, զգլխաւոր յատկութիւն ցաւոյն և զայլ նմանիս, հնարաւոր եմք իմաստասիրել զյաջող կամ զանյաջող ելս խօթութեան. փորձք փորձելոց, ծանօթութիւն գործոց եղելոց յաւուրս մեր և յառաջինսն, այլև յիշողականութիւն կորովի, հանճար քաջախոյզ, սրամտութիւն, միտք նմանագիտ և ուղիղ դատողականութիւն մարթեն զօրաւոր և ազդու գործել զկարողութիւն նախատեսական. զայն զայս ընդունակութիւն գուշակելոյ զառաջիկայս մարթ է գնել և յանասունս, թէպէտ աղօտ է սա և ոչ ծնանի 'ի բանաւոր պատճառաց, այլ 'ի զգայութենէ երևելեաց և եթ՝ որ միջնորդութեամբ երևակայականին. օրինակ իմն. շուն հարեալ միանգամ գաւազանաւ՝ սովոր է խոյս տալ, մինչ լինի նմա տեսանել զոք 'ի վերայ վազել գաւազանաւ. բայց այսմ երևակայէ շունն՝ թէ որ միանգամ հանդիպեցաւն է, կարէ հանդիպիլ և միւս անգամ։

Թո՛ղ զնախակարգեալ կարողութիւնսդ՝ ընծայի մարդոյ և գուշակողական՝ որ է զօրել առանց բանաւոր և փորձական պատճառաց նախատեսանել զհանդերձեալս, բայց որում աղօտ լինի զգայութիւն ազդէ մեզ զօրպիսութիւն ապագայից, որպիսի են մահ, ձախորդութիւն, հրդեհ և սոցին նմանք։ Անհաւատալիքն են յորս կախին յաճախ բազումք 'ի մարդկանէ. և սուտ է զի հաւանեցան գնել զայս կարողութիւն հոգւոյ. են մեր ոչ սակաւ պատմութիւնք այսպիսիք՝ աղբերացեալք համօրէն այն 'ի խաբանաց երևակայութեան և 'ի հակամիտութեանց անտի յառասպելս և 'ի սնապաշտականս. յորվակի լինին սուտ և դիպուածով մանաւանդ՝ բայց որում կատարին որ կանխատացեալքն եղեն. յայլ դէպս զօրէն աւելս տալ կանխատացութեանց իրական պատճառք բանաւորք, կէս մի կամայ, և կէս մի անգիտութեամբ պահեալք 'ի լաւութեան, որով թուեցեալքն զարմանալիս՝ կորուսանեն զգեղեցկականութիւն իւրեանց. որպէս 'ի հասա-

բան կենցաղս շատախօսեն ոմանք զերազոց՝ ասելով թէ չար է երազդ և գուշակ ծանուց. 'ի հարցաքննելն զայն՝ լսելի լինին այս բացատրութիւնք բազում՝ աչընկէցք ամենեքին. բայց սուտ են ըստ որում նոյն ինքն երազն և առանց իրիք նախագուշակութեան որք հային յաւուրս առաջիկայս:

Բառիս Ոգի նշանակեմք լայնաբար զսահմանաւոր զուգակշիռ ձանաչողական զօրութեանց՝ եթէ սորինց՝ եթէ վերնագունից. օրինակ իմն. մինչ ասի ոք ունել զեւրն անձնական ոգի, առեալ լինի յայս միտս. բայց առաւել անձուկ առմամբ ոգի ասի իւրաքանչիւր ոք՝ յամենայնի աչողակ, յորում է տեսանել հանձար գործնական, դատողութիւն խորին, հաստահիմն և անըստգիւտ, իմացականութիւն նուրբ և սուր, մտադրութիւն շարունակ և անվատակելի, յիշողականութիւն քաջ, երևակայութիւն ազդոյ և ստեղծիչ, եզրակացութիւնս ուղիղս և լուսափայլս: Մեծութիւն հոգւոյ վերագրի այնմ որոյ է կարողութիւն ըմբռնել մեծամեծ գաղափարս և կշռել զնոսա յամենայնի, ընդգրկել բազում յօժ առարկայս, 'ի բաց հանել անտի զամենայն որ ինչ կարիցէ մնալ աղօտ և մթին, այլ և բացորոշել զոր 'ի նոսին տարբերութիւնք. Կորովութիւն հոգւոյ ասի ունել որ իշխան է զամենայն ձիգն մտաց իւրոց դիպեցուցանել հանապազ 'ի մի միայն առարկայ՝ ոչ թողացուցանելով արտաքին խափանարարաց զարտուղի զինքն վարել. Արագութիւն հոգւոյ տեսանի յայնոսիկ՝ որք բաւական են իբրու միով տեսութեամբ ընդգրկել չորս գաղափարաց և 'ի սուղ միջոցի զննել զնոսա բովանդակապէս. Հընաբաղեւտ հոգի իմանամք զայն որ 'ի լոյս հանէ նորանոր ձշմարտութիւնս և որոյ խորհուրդք մտաց ծնանին նորանոր ձարտարակերտս օգտընծայս. այսպիսին ըստ բովանդակ էութեան իւրում է արարիչ քան նմանող, իբր զի է նորա իւր առանձին ոձ գործելոյ և խորհելոյ, և 'ի նորայն զօրութենէ հոգւոյ 'ի վեր երևին նորանոր տեսութիւնք 'ի պէտս հանդերձելոցն մտածողաց: Ուր ուրեմն է տեսանել յայր մի զկատարելապէս զուգախառնութիւն համօրէն այսոցիկ աչողակութեանց . բայց 'ի հանդիպիլ այսր , նախամեծար այն զաւակ բաղդի սովոր է ասիլ ոգի տիեզերական . զայս անուանակոչութիւն վիճակեցին սակաւք ևեթ, որպէս Նիւտոնն անգղիացի (կեցեալ յամէ 1642 մինչև ցամն 1727) և Լէյբնից գերմանացի (կեցեալ

յամէ 1646 մինչև ցամն 1716)։ Տեղերական ոգի նշանաւոր է յիւրաքանչիւր հանդէս ուսմանց. ու ըմբռնէ յաջողապէս զոր և ըմբռնէ, ուսանի արագափոյթ և պահէ պինդ 'ի յիշողութեան զոր գիտութիւն և ուսանի։ Ամենայն ումեք է իւր արհեստ, ճարտարութիւն և գիտութիւն առանձին՝ յորում և յաջողակն է, կամ՝ զի տացից՝ ողխացեալ ամենեքին. զնորին հակառակն՝ ոգի տեղերական ընդունակ է ամենայն գիտութեանց՝ հաւասարաբար. քան զոր ողխացեալս ճշմարտապէս գտանեմք յաճախ որոց են առողջ միտք, դատողականութիւն և բան, ուրեմն կարողութիւնք ամենայն խելամուտ լինելոյ 'ի ճշմարիտն, ուղղութեամբ ըմբռնելոյ զառանձին իրողութիւնս և հեռևեցուցանելոյ անտի յանկաւոր եզրակացութիւնս։ Այսցիկ յատկութեանց ընդունական գործեն զմարդ բնութիւն և յաջողակ տրամադրութիւնք. բայց հնար է ջանիւք և անընդհատ հրահանգութեամբ ծաղկեցուցեալ հասուցանել զնոսա կարելին կատարելութեան։ Ոչ ամենեքեան դիմեցուցանեն զճանաչողական կարողութիւնս իւրեանց 'ի բազում հանդէսս իմացականութեան. յաւէտ բազում այն է, զի ըմբռնեն մարդիկ զմի ևեթ առարկայ՝ առ որ բերին նախապատիւ սիրով, կամ որում իբր թէ ծնեալքն են. յայս մի ինչ այնուհետև բոլորեալ ամփոփի ճանաչողական կարողութիւն համօրէն և յայս կոյս միայն ուղղի ամենայն ճիգն մտաց. ըստ զանազանութեան այդպիսի կենդրոնաց և ըստ բնորութեան առարկայիցն՝ յորս բերին միտք կամակար՝ զանազան լին և մտացն անուանակոչութիւնք, որպէս չափաբանական, քաղաքական, տեսական, իմաստասիրական, փորձական, մեքենայական և այլն։

## Դ̅. Յաղագս Ախորժանաց.

'Ի կարողութիւն զգալոյ հեշտութիւն կամ ցաւ սահմանի ախտականն. վասն զի իւրաքանչիւր ախտ է որ ախորժ է և է որ անախորժ, կամ՝ զի խօսեցայց ընդ Քանթի (գերմանացի իմաստասիրի ծաղկելոյ յընթացս ժը̅ դարու)՝ հաճոյութիւն կամ անհաճոյութիւն. այս կարողութիւն տարբերելի է խնամով յիմացութենէ, որ՝ արգանեկելով արտաքին զգայարանաց՝ զեկուցանէ մեզ զորպիսութիւն արտաքին աշխարհի, զորոյ ընդդէմ՝ ծանօթս տայ մեզ ախտականն զմերոյ անձնական որպիսութենէ, ոչ թէ գիտակիցս զմեզ առնելով,

այլ որչափ առ հեշտութիւն կամ առ ցաւ պատկանի։ Զխրաքանչիւր ախտի նկատեալ լինին առաջիկայ յատկութիւնքս. նախ՝ ինչ մի որ կայանայ 'ի նոյն ինքն հոգւոջ, այլ ոչ արտաքոյ նորա, ինչ մի անձնական և ոչ առարկայական, Թէպէտ և պատճառք նորուն զետեղիցին արտաքոյ հոգւոյն, որպէս ըմպելին որոյ վայելք հեշտացուցանեն զքիմս, կամ աշխարհն որոյ տեսութիւն դիւր եղև աչաց մերոց. երկրորդ՝ ախտն չէ նկարագիր, բայց ընկերանայ նկարագրլրաց. օրինակ զայս. նկարագրի մեծագործութեան իւիք որում ականատես եղեալք՝ զուգի ախտ մեծարանաց և զարմացման ընդ հեղինակն. երրորդ՝ նպատակ ախտի է պահպանել զախորժ որպիսութիւնս հոգւոյ կամ Թէ տարագիր հանել զանախորժսն. ախտն չէ յայտնութիւն զօրութեան կամաց, որպիսի են դրդումն, ձկտողութիւն, խորշումն կամ յօժարութիւն, այլ առակ է շարժել զկամս 'ի գործիականն, զոր օրինակ. ախտ հեշտութեան դրդէ որոնել և ապրապահեստ առնել զպատճառ նորա։ Ոչ յամենեսին նոյն պատկերագիրք յառաջ ածեն նոյն ախտս, այլ յոմանս՝ հաճոյականս, իսկ յոմանս՝ անհաճոյս, որ և ոչ միայն միշտ հաւասար, այլ յերկուրին յաւէտ 'ի բովանդակ տրամադրութիւն հոգւոյ, յարտաքին որպիսութիւն և 'ի հանգամանս անցնիւր անհատի առհասարակ։ Սաստկութիւն ախտի բնաւորեալ է յապաւիլ սովորութեամբ, կամ Թուլանայ՝ իբրև հրապուրիչքն նկարագիրք ազդեն յերկար յոյժ. ցորչափ յաճախ փոփոխեն զիրեարս առարկայք, այնչափ և տպաւորագոյն ընծային ախտք. ուքա բազմօրինակ յոյժ տեսականան՝ մինչ ախտից հակակայց լինի յաջորդել մի զմիով անմիջաբար. բեր առել զախտ յադեցութեան զինի սաստիկ սովու, զախտ վերստին առողջութեան զինի խօԹութեան։ Ախտք սովոր են նուազիլ, իբրև հաճոյութիւն և անհաճոյութիւն ներգործեն 'ի հոգի միանգամայն, նոյն և անգործ զմիմեանս կացուցանեն, և կամ՝ իբրև հուպ ընդ հուպ փոխանորդեն զիրեարս մինչև դերակշիռ հանդիսանալոյ է զի ախորժականաց և է զի անախորժից։ Ինչ մի զօրէ դիւր լինել տեսողականին, այլ անախորժ է ճաշակելեաց կամ բանի. օրինակ իմն. ծաղիկ մի դեղեցիկ է տեսանելով, բայց զզուելի ճաշակաւ. սոյնպէս հրայրեացք են աչաց տեսարան իմն հոյակապ, այլ հոգի մարդոյ վշտանայ անու. իսկ 'ի հակառակէն՝ մարԹի իմիք բարիք Թուել բանի, այլ ան-

հաճոյ լինել զգայութեանց, ըստ որում զգաստանայ մանաւ ՚ի վերայ կալեալ մարդասպանից: Այլոց խառն՝ որպէս դողդոջելն ընդ ահ և ընդ յոյս չէ ինչ այլ, եթէ ոչ արագափոյթ մի զմիով յաջորդութիւն ախորժականաց և անախորժից՝ զուգակշիռ լինելոց եղելոց: Զխմանալն հոգւոյ ոչ հեշտութիւն և ոչ ցաւ՝ այլ անխտրութիւն, բայց զբովանդակապէս անխտրութիւն հոգւոյ դուն ուրեք է տեսանել: Թէ զի՛արդ և ո՛րպէս գոյանան ախտք՝ զայդ ՚ի հետազօտել անկարանամք. անբացատրելի նոյնպէս մնան մեզ փոփոխութիւնքն որ յառաջ գան անտի ՚ի մերում մարմնի. յաւէտ մերձաւոր պատճառք սոցա բնաւորեալ են սակս ՚ի լոյս մատչել փորձով. բայց սակս հաստատեալ ունիմք այսչափ ինչ. իւրաքանչիւր ախտ չէ լոկ ոգեկան ինչ երևոյթ, այլ կցորդ միշտ մարմնաւոր յեղափոխութեանց. զախտս մարթ է բաժանել նախ՝ ՚ի գոյացեալս յմանց որպիսութեանց և փոփոխութեանց մարմնոյ՝ որոց սակի են նիւթական հեշտութիւն և ցաւ. երկրորդ՝ յայնպիսիս որոց զուգակցի երևակայութիւն խուռնքն պատկերագրօք. զոր օրինակ իբրև նկարագրեմք մտօք զառաջիկայ աղէտ ինչ. երրորդ՝ ՚ի համախմբութիւն՝ որ է ցաւիլն ընդ ձախորդութիւն ընկերին. չորրորդ՝ ՚ի տեսականս, այն է՝ ախորժելն զգեղեցիկ առարկայս և անհաճն լինել ընդ տգեղս. հինգերորդ՝ ՚ի մտաւորս կամ ՚ի բանականս յորոց համարի է հեշտութիւն սրտի առ տեսութեամբ նորանոր ճարտարակերտաց. վեցերորդ՝ ՚ի բարոյականս ուր ծագին ՚ի դատելոյ զբարոյական արժանաւորութիւն անձանց մերոց և զօտարին: Եկեսցո՛ւք այժմ ուրոյն ՚ի քննութիւն նախակարգելոցդ:

## Առաջնոր ախտք.

Կերակուրք կամ ըմպելիք յարուցանեն ՚ի մեզ կէս մի ախորժ, և կէս մի անախորժ ճաշակս. հաստատելիք չօշափելին է որ յանուշից և է որ ՚ի դառանց. լոյն ազդէ յաչս մեր պէսպէս ախտս. սաստկութիւն և չկափայլութիւն բոցոյ հարկանէ զտեսանելիս, մինչ գեղեցկութիւն կանաչութեան հեշտացուցանէ զնոսա. լսողականն ըզգայութիւն ներգործէ ՚ի մեզ զանազան տպաւորութիւնս, ըստ որում մեղմ կամ ուժգին, արագ կամ յամր նորին տեսանի գործակալութիւն. յայսպիսեաց սակի են այլև ախտք սովու և ծարաւոյ,

մեղմիկ շօշափումն ջղաց ախտականին, որպիսի են խաղտանք, մար֊ մաջ և շփումն, և գոյացեալքն 'ի սաստիկ դղրդմանէ կամ 'ի վնա֊ սահարութենէ անդամոց ախտք ցաւոց՝ որդունակ ծակոտումն, կիզումն, խղրատումն 'ի մարմնի և այլք։ Ախտից առողջութեան, զօրութեան և կորովութեան մարմնոյ ընդդիմադրին ախտք տկարու֊ թեան, պարտասութեան, վհատութեան և աշխատութեան. Ներհա֊ կանքն խոնջութեան, քնէածութեան և թուլութեան են զուարթու֊ թիւն, սթափութիւն և կազդուրումն կենսական ոգեաց. ջեռուցումն մարմնոյ և սառուցումն, պաղութիւն և ջերմութիւն 'ի մարմնի են նոյնպէս հակակոյ միմեանց ախտք։

## Ախտք երեւակայականք։

Եռակի մարթէ երեւակայութիւն առիթս տալ 'ի վեր երեւելոյ ախտից. նախ՝ առաջի աչաց կացուցանելով զանցեալսն. երկրորդ՝ յարուցանելով 'ի մեզ գաղափարս զհանդերձելոցն. երրորդ՝ երեւ արարիչ կարողութիւն ինքնաստեղծելով զանմանս գործս, հանդա֊ մանս և որպիսութիւնս։ Լծակցութեամբ գաղափարաց լինի յաճախ յետս դառնալ 'ի միտս մեր հին աւուրց ախտից ախորժականաց և անախորժից. բե՛ր ասել՝ վերստին յիշելութեամբ վայելելոյն առ 'ի մէնջ ուրախութեանց, յիշատակութեամբ հանգուցեալ բարեկամի ուրումն և նմանեաց։ Սոյնպէս նկարագիր ապագայ երջանկութեան կամ աղետից զօրէ տպաւորել 'ի մեզ հեշտալար կամ ցաւեցուցիչ ախտս, որպէս և հանգամանք և մտացածին ո՛պութիւնք յորս փոխա֊ դրեմք զանձինս՝ յառաջ ածեն ուրախութիւն, խնդմութիւն, պայ֊ ծառութիւն կամ տխրութիւն սրտի, զարհուրանս և երկիւղ։ Կարո֊ ղութիւն երեւակայական բազում յոյժ նպաստէ որ 'ի մեզն անդուլ հակառակամարտութեան ախորժականաց և անախորժից, այն՝ որ յաւէտ պահէ զկենդանութիւն մարդկեղէն յաշխարհի աստ։

## Համախտութիւն կամ ախտակցութիւն.

'Ի թռիչս երեւակայութեան փոխանցելով մեր զանձինս յորպիսու֊ թիւն ընկերին՝ յառաջ գայ համախտութիւն կամ ախտակցութիւն, որ կրկին տեսանի, ըստ որում՝ մասնակից գտանիմք կամ վշտաց և կամ ուրախութեան մերձաւորին. առաջինն առ կարեկցութիւն,

յետինս՝ ուրախակցութիւն։ Ընդունակութիւն տխրիս այլևայլ որակաց ըստ այլևայլ բնաւորութեան, խառնուածոյ մարմնոյ և դաստիարակութեան իւրաքանչիւր անհատի։ Համախտութիւն սովոր է երբեմն զարտուղի անկանիլ, որպէս այն՝ եթէ մի ոք երևակայեալ իւր անկենդան առարկայս իբրև կենդանիս և զգայունս՝ չարժիցի յախտ գորովոյ կամ անգթութեան առ նոսա, կամ թէ այնչափ լոկ տխրակից գտանիցի անասնոց որչափ մարդկան։ Ընդդիմադիր սմա հակախտութիւն՝ որ է՝ առանց որոշեալ ինչ պատճառի գարշիլն յիմեքէ, ՚ի կենդանի և յանկենդան արարածոց։ Գարշիլն յառաջ ածէ միշտ ոչհաճութիւն և հիմնանայ յաճախ ՚ի թաքուն լծակցութիւնս գաղափարաց։

## Տեսական ախտք.

՚Ի վեր քան զախտ զգայական է տեսականն որ հայի միայն յիրս կարգեալս ՚ի հաճել զմեզ ըստ ինքեանց և իւրեանց աղագաւ, այն է ՚ի գեղեցիկս, ուստի կոչի ախտ գեղեցկութեան. գեղեցիկն հաճէ և հաւանեցուցանէ զմիտս՝ ոչինչ խուզելով զօգուտ կամ ըզպիտանութիւն նորա, ապա ուրեմն առանց իրիք շահախնդրութեան. նմին հակառակ՝ ախորժականացն և եթ զհետ կրթի ախտ ըզգայական, ուստի և լծորդ է շահախնդրութեան։ Ախտ գեղեցկութեան յարակից է կիսով չափ յաւէտ ազնուական զգայութեանց տեսողականին և լսողականին, և կիսով չափ՝ նկարագրականն կարողութեան. սմին իրի հաճութիւն և ոչհաճութիւն դոյացեալք անտի՝ են ինչ մի հոգեղէն բնութեամբ. Ներքին իմացութիւն և ընդունակութիւն գեղեցկին՝ լծակցեալ ընդ միտս և ընդ դատողականին՝ տան ճաշակ ՚ի վերնագոյն միտս, կամ ընտրողականութիւն։ Կամելով դատել զլուկ ախորժականս՝ ոչ զօրեմք առնել դատաստան հասարակաց, ըստ որում դատումն մեր կախեալ է ՚ի զգայական տպաւորութիւնս, որ սովոր են ըստ զանազան անհատից զանազան լինն տեսականալ, որպէս հոտոտումն, շօշափութիւն, ախորժանք և այլն. բայց մինչ դատեմք զգեղեցիկն, այն է՝ մինչ ՚ի քննութիւն դամք իբրև ճաշակողնինս՝ սպասահարկելով մեզ վերնագունիցն կարողութեանց հոգւոյ՝ բաւեմք այս՛ իբրև հասարակաց զմերն համարել զդատաստան, ըստ որում աղբերացեալ ՚ի հաստատուն և ՚ի հարազատ սկզբանց անտի գե-

զեցկութեան. և ամենայն ոք՝ որոյ է կարողութիւն զատելոյ՝ պարտի միաբանիլ ընդ մեզ. օրինակ իմն. 'ի հետաքննելն դժնուած ինչ՝ մարթի ասել. գեղեցիկ է այդ, ըստ որում կանոնք ճարտարապետութեան պատշաճեալ եղեն տեսականին ախտի և հաստահիմն օրինաց որ և 'ի յայտնութիւն մատչին 'ի շինուածի յայդմիկ: Իմացութիւն ճաշակի և գեղեցկութեան յար և նման մտաց ընաւորեալ է, 'ի մեծապէս բարդաւաճութեան՝ զննութեամբ ընտիր ընտիր գաղափարաց յորոց սակս են մանաւանդ թէ առարկայք ճարտարութեանց, որպիսի են. Նախ՝ հմտութիւն բացատրելոյ զանսութիւնս երևակայութեան, որ փակէ ընդ իւրև զքանդակագործութիւն, զկենդանագրութիւն և ըզճարտարապետութիւն. երկրորդ՝ հմտութիւն արտայայտելոյ զխորհուրդս մտաց՝ որ սահմանի 'ի վայելչախօսութիւն, 'ի բանաստեղծութիւն և յերաժշտութիւն: Գեղեցիկն յանկուցանէ զմեզ յինքն, իսկ տգեղն 'ի բաց ստուցանէ յիւրմէ. բայց և տգեղք 'ի ներքոյ արտարեալ ճարտարապետական ձևոյն՝ կարեն ապաքէն զուգապատշաճ կերպարանիլ. դիւր է սրտի և հեշտարար՝ ազդեցութիւն ընտրողական ճաշակի՝ որ 'ի յայտնութիւն գայ ոչ միայն յարտաքինսն, որպէս 'ի շարժմունս մարմնոյ, 'ի զգեստս, 'ի տնտեսութեան մասնաւոր կենաց և 'ի նմանիս, այլև 'ի ներքինս անդ, 'ի բան և 'ի գիր, յիմանալին հաղորդակցութեան ընդ ընկերս: 'Ի սահման իմացական ախտից վերաբերի նմանապէս Վսեմն որ հաճէ զմիտս ոչ զուգապատշաճութեամբ ձևոց, այլ ահեղ իմն և ակնածելի մեծութեամբ, որ և յանդիման լինի մեզ է որ 'ի տարածութիւնս մարմնոց և է որ յազդեցութիւնս բնութեան. յառաջնոց համարի են վիթխարի լերինք, աչագնատեսիլ կոյտք քարաժայռից, սոսկալի վիհք և որ այլ սոցին նմանք. 'ի յետնոցն են դետնաշարժութիւնք, աշխարհաւեր ջրհեղեղք, ներգործականութիւն այրական ոգւոյ ուրումն և այլն. Առաւել քան զգեղեցիկն շարժէ զախտական կարողութիւն մեր վսեմն, վասն զի մերկապարանոց առաջի աչաց կացուցանելով զանօրութիւն մեր և զփոքրութիւն՝ յարուցանէ 'ի մեզ այն ահաձութիւն իմն, բայց միանգամայն և ձգտեցուցանէ զձիգն մտաց մերոց յըմբռնումն մեծին, նոյն և տարեալ ածէ զմեզ 'ի գիտակցութիւն ներքին մերոյս զօրութեան: Իմացութիւն գեղեցկին և ախտ վսեմականաց կամակար մօք բերին 'ի հաղորդակցութիւն ընդ այլս. սովիմբ

և հասարակացն զննութեամբ գեղեցկաց և վերամբարձից բնաւորեալ են այնք կորովանալ և բարգաւաճիլ։

Գլխաւոր աղբերակունք տեսական ախտից են տաղջնկայքս. Նկատումն չքնաղ և տգեղ տարրկայից, որոց տաղջնիքն ծնանին հեշտութիւն, իսկ վերջինքս՝ տհաճութիւն. Թող զայս. Իւրաքանչիւր զգալի տարրկայք՝ որոց քանակութիւն թուի յաճախ մի 'ի չհասանելեաց անտի մարդկեղէն իմացութեան, որպիսի են գետնաշարժութիւնք, հրաբուղխք, մրրիկ և փոթորիկ սաստկայոյզք, այլև զննութիւն հոյակապ տեսարանաց բնութեան 'ի հասարակի։ Խորհուրդք յառաջ եկեալք յայդպիսի ախտից՝ զմայլեցուցիչ են յոյժ և հոգեպարար ընծայլին, երբև լինի մեզ զուգակցել ընդ նոսա զմտածութիւն արարչին։ 'Ի տես նորոյ և մեծի տարրկայի իբրու թէ ընդլայնի երևակայութիւն մեր, այո՛ և արշաւեալ իսկ ըստ սահման իւր՝ զէնթակայն իւրոյ տեսութեան 'ի մի բովր բովանդակել ձգնի. բայց զոլով տարրկային անդր քան զչափ երևակայութեան՝ տայ անքանակելի տեսականութեամբ, որպիսի են յաւիտենականութիւն, անպարագրելի տարածութիւնք երկնից՝ յորս մոլորեալ ընդարմանան աչք մահկանացուաց։ Իւրաքանչիւր ականաւոր կատարելութիւն մտաց, իւրաքանչիւր իմաստութիւն յայտնի կացուցեալ 'ի քաջակչիւ և 'ի մեծապարունակ տաղջարկութիւնս, իւրաքանչիւր առաքինութիւն, իւրաքանչիւր զրկանք անձին յօգուտ մարդկութեանս, իւրաքանչիւր անշահախնդրութիւն՝ զորոց օրինակս յառաջ բերէ նկարագիր 'ի հայրենասէր քաջազունս անդ, իւրաքանչիւր առեմ' արիութիւն և վստահութիւն 'ի լաւն սովոր է յարուցանել 'ի մեզ տեսական ախտս. մեծագործութիւն ոչ մեռանի երբէք, այլ ներգործէ միշտ և հանապազ, վասն զի ազդուութեամբ օրինակին զօրէ ապաքէն և զկնի հազարամեայ ժամանակաց հանդիսացուցանել զսիրտ ազնիւ 'ի գործ ազնուական։ Չարագոյն արժանաւորութիւն և ազնուականութիւն մարդկային բնութեան ոչ այլազգ՝ բայց 'ի ձեռն տեսական ախտից զուգաւորի մերումս գիտակցութեան . սոքա իսկ են որոց միջնորդելովն սաանոյ հոգի նիւթ զմտածութեան, իսկ զօրութիւնք ցանկականին՝ նոր կին աշխոյժս կենդանարար։

## Ոլորտ որ առ Ճանաչողութեանն Հոգւոյ և Բանի.

Սոքա ամէն համառօտաբար և ակն Իմացական։ Տեսական այնան ըստ որում քննեալ եղև 'ի վեր անդր՝ հիմանց 'ի գեղեցիկս և 'ի ազեղս. այլ իմացականն որ շարժի ոչ արտաքին տարրկայիւք՝ այլ ներքին պատկերագրօք միայն՝ հաստատեալ է 'ի գաղափարս Ճշմարտին և սոյն։ Ի սա տրամադրութիւն հոգւոյ, ըստ որում՝ նկարագիրք, ըմբռնմունք և գաղափարք՝ որոց Ճշմարտութիւն ծանուցեալ է մեզ հաւատեաւ, յարուցանեն 'ի մեզ ախտ հեշտութեան, իսկ որք սուտքն են և մոլարք՝ տպաւորեն 'ի մեզ զախտ տհաճութեան. այսպիսի ազդաւ չէ՛ պարտ զերկոսին զայսոսիկ շփոթել ընդ միմեանս. տաղաչափութիւն կամ ատենաբանութիւն լինչ զօրէ հիացուցանել զմեզ գեղեցկապատշաճ խորով յարմարութեամբ, մինչ պարունակեալքն 'ի նմա՝ եթէ լիցին զարտուղի 'ի Ճշմարտութենէ և ըստ մերում Ճանաչողականի երևեսցին սուտ՝ գրգռեն 'ի մեզ տհաճութիւն. զնոյն հակառակն՝ մարթի Ճառ մի հաւանեցուցանել զմեզ որ 'ի նմայն բովանդակեալ Ճշմարտութեամբ, թէև արտաքին կերպարանք նորա լիցեն խիստ, խոշոր, այո և խորշեցուցիչ անգամ։ Լինելով մեր գիտակից մերում օր քան զօր 'ի լաւն յառաջադիմութեան, գոլով մեր վստահ 'ի մերն պիտանութիւն ընկերին որ առ 'ի մէնջ զանձեալքն գիտութեամբք, նոյն և նկատելով զառ 'ի մերոյս սրամտութենէ հանդիսացուցեալ Ճշմարտութիւնս՝ 'ի վեր երևի 'ի մեզ հեշտութիւն լինչ Ճանաչողական և իմացական. ո՛չ այսպէս ներգործեն տարակոյք, երկուանք և վրիպակք՝ որք նմին հակառակ՝ Ճնշելով զգործականութիւն մտաց յառաջ ածեն 'ի մեզ զտհաճութիւն, որ սովոր է հանդիպիլ և յմնժամ, երբ համօրէն ջանք և վաստակք մեր 'ի գիւտ, 'ի ձեռնարկութիւն և 'ի պաշտպանութիւն Ճշմարտութեան լինին ունայնացեալ տեսանին. ոչ նուազ լինչ՝ անապաշտութիւն և կանխակալ սովորութիւնք ապիրատից ոմանց արանց զբարեբար լոյս իմացականն պայծառացուցութեան հարստահարողաց, որպէս դարձեալ՝ արգելք և խոչընդակք՝ նկատմամբ և խորհրդով ընդդէմ յարուցեալք Ճշմարտութեան՝ զդածել գիտեն զմիտս մեր անհնարին տխրութեամբ։

## Բարոյական ոճոյ։

Բարոյականապէս լաւն է հիմն՝ յորոյ վերայ հաստատեալ խարս-խին ախտքս այսոքիկ · վասն զի գոլով մեր ՚ի ներքանց բարիս՝ պարտական եմք յորդել զառաքինութիւն ստուգութեամբ և ՚ի բաց կալ ՚ի յանցաւորութենէ· եթէ զինչ բարի իցէ կամ չար, արդար կամ անիրաւ, զայդ վճռել կայ բանի և չէք տատանօր պաշտօն ախտի՝ որ ազդեցանց ՚ի ճանաչողութենէ եղելոյ ՚ի մեզ ազդեցութեամբ բանի։ Այսոն իբրև ներգործարան ազդէ ՚ի կամս և դիմեցուցանէ զնա ՚ի գործս՝ բարոյականապէս բարիս · ոչ զգայականութիւնն, այլ բանն պարտի իշխանանալ ՚ի վերայ մեր · սորայս հանդարտաշ և անհրաժարելի պատուէրք հրամանի են՝ որոց ունիմք զհետ երթալ։ Իբրև դերակատար ինչ բարի հարկ ՚ի վերայ կայ մեզ յորդել զառաքինութիւն իւր ներքեան աղաղաւ, զի նա է՝ որ հաղորդէ զմեզ ճշմարիտ երանութեան։ Խնդիր բանի՝ զի գործիցեմք առաքինութեամբ՝ ասի Օրէնք մաքուր բարոյականութեան· ամենայն որ համաձայնի այսմ՝ է օրինաւոր, իսկ որ ոչն համաձայնի՝ օրէնընդդէմ: յայնժամ միայն բաւէ մարդ լինել առաքինի՝ երբ ՚ի նմա յարուցեալ իցէ բան· յառաջ քան զզարթնուլ բանի չէ նա ոչ բարոյապէս բարի և ոչ բարոյապէս չար· երեխայ սովեալ՝ թելադրութեամբ բնութեան՝ ձգի յոր և իցէ կերակուր տեսեալ առ ՚ի նմանէ՝ ոչ զօրելով զմտաւ ածել՝ եթէ իրաւ կամ անիրաւ այն իցէ։

Բարոյական ախտք համօրէն առ այսոսիկ վախճանս կարգին· նախ՝ գործեա՛ ըստ այնմիկ կանոնաց և սկզբանց՝ զորս կամիս զի եղիցին հասարակաց օրէնք քեզ և այլոց· երկրորդ՝ վարեա՛յ առ բանական էակս ամենայն, որպէս առ անձն քո, նոյնպէս և առ այլս, ոչ իբրև առ հնարս սահմանեալս առ որ և է վախճան, այլ իբրև առ վախճանս ըստ ներքեանց· երրորդ՝ գործեա՛ ըստ այնմիկ սկզբանց զորս մարթ էր քեզ՝ եթէ էիր օրէնդիր հասարակաց՝ կարգել ՚ի թագաւորութեան բանաւոր արարածոց· եթէ իշխէաք մտօք վկայել զանձանց գործոցս զոլ ա՛յսպէս, ունէաք այս զգալ յանձինս մեր զերանական ինչ հեշտութիւն ներհաճութեան · եթէ ո՛չ · հարկանեն զմեզ խայթք խղճի մտաց։ Դատելով մեր զմիտս և զգործս այլոց՝ հանդիպի մեզ ըմբռնել յախտ յարգանաց և արհամարհա-

թեան, կրկին հաւանութիւն կամ անհաւանութիւն. որ ոչն ընծայէ մարդոյ՝ այլ արժանաւորութիւն արտաքին, կարեմք թէեւ սիրել զայն, բայց պատուել ոչ. Նոյն բանք են զայնոցիկ գործոց որք ձեւանան մեզ 'ի հաճութիւն. օրինակ իմն. մինչ անձնահաճութեան աղագաւ հաճեցուցանէ զմեզ. սոյնպէս արք սրամիտք, հանճարեղք եւ բանագէտք չեն ենթակայ մերումն յարգանաց, վասն զի թող զատուցեալ յատկութիւնովք՝ չեն բարոյականապէս բարի. զնորին հակառակն՝ յաւէտ արժանիս մերումն մեծարանաց առնել է զայսոսիկ. մարդասիրութիւն, արդարութիւն, անձահարութիւն անձին, կորովամտութիւն եւ քաջալերութիւն՝ մինչ բան է զյաղթահարելոյ դժուարութեանց, վասն զի սոքա են որ 'ի հանդէս ելանեն 'ի ձկտողութեան հոգւոյ որ 'ի բարոյական կատարելութիւն։

## Օգնութիւնք վասն ախտից։

Զախտս մարթ է դարձեալ կրկին տեսանել. այն է՝ ըստ չափու սաստկութեան նոցա եւ տեւականութեան. որչափ բուռն են ախտք եւ եռանդուն, նոյնչափ արագաթռիչ տեսանին եւ անցաւոր. որպէս չափազանց սաստկութիւն, նոյնպէս եւ անախտութիւն յամենայնի վնասակար են. հարկ է՝ զի բանն իցէ իշխան ախտից մերոց, եւ մեք ազնուագործեալ հանիցեմք զնոսա 'ի ծայր լրութեան. առ 'ի զօրել զայս՝ ունիմք ընթանալ այսպէս. մի՝ չափ եւ կշիռ դնելով մերում զգայականութեան, ուստի յառաջ գայ նրբութիւն ախտի. երկրորդ՝ սեպհականելով նկարագիրս եւ ըմբռնմունս բազում յոյժ իրաց՝ որով առաւելու պարունակութիւն ախտի. երրորդ՝ քաջացուցանելով զզատողականն, ուստի աղբերանայ ուղղութիւն ախտի. չորրորդ՝ գործունեայ միշտ պահելով զբանն, ուստի յառաջանայ Ճշդութիւն, բարոյականութիւն եւ երկիւղածութիւն ախտի. հինգերորդ՝ մտանակից լինելով արկածից ընկերին, զի այսու լինի ամոքեալ մեղմիլ ախտի մերում։ Մարմնաւոր ախտք իբր 'ի բազումս ուժգին են քան զախտս երեւակայութեան. սոքա դարձեալ բուռն՝ քան զախտս Ճանաչողականին. այն մինչ սաստիկ ախտք զգայականին հակառակամարտ լինին բարոյականացն, պարտին սկզբունք բարոյականին լինել հաստահիմն յոյժ, պարտի զգայութիւն բարւոյն լինել եռանդուն ամենեւին. եթէ ոչ. ախտք զգայականին յաղթահարեսցեն զբարոյա-

կանոն։ Ախտք յարուցեալք ՚ի մեզ՝ ազդելով ճշմարտութեան և առաքինութեան՝ տկուն են, այլ զհակառակն՝ որք ՚ի վայելից զգայականաց յառաջադայլն՝ թռչուն են և անցաւոր. և ոչ չափ միայն. այլ և տաղտկացուցիչ փութով և զզջալի համանգամայն։ Ճանաչողականն կարողութիւն մինչ յասպարէզ անցանէ, ոչ իշխեն ՚ի վեր երևիլ ախտք սաստիկք. ուստի որ կարի լինի հակամէտ բերի յախտս՝ զօրէ բարեխառնել յայժ զայնս, ունակացուցանելով զանձն մտածութեան և հպատակելով ՚ի հետազննութիւնս գիտնական և բարոյական ճշմարտութեանց։

## Է. Յաղագս ցանկականին.

Կարողութիւն մարդոյ ազատութեամբ կամից լրագործել զենթակայս նկարագրաց իւրոց և ախտից ասեմք զՑանկականն՝ որ առնէ զմարդ՝ էակ ինչ գործօղ։ Պատկերագիրք և ախտք որք զօրեն տպաւորել ՚ի ցանկականն՝ է որ զգայական գոլով և է որ իմանալի՝ յառաջածեն զբաշխումն սորա ՚ի վերին և ՚ի ստորին, կամ ՚ի զգալի և ՚ի բանական. վասնզի առաջնոյն է պաշտպանել զախորժականս և զօգտակարս, իսկ ՚ի բաց վարել զանախորժս և զվնասակարս. վերջինս ձգտի յարուցանել ՚ի մեզ խորհուրդս և գործս որ լաւքն են բարոյականապէս, ըստ կարի խոյս տալով յորոց վատքն են ՚ի բարոյական մասին. ուստի պաշտօն առաջնոյն առ յօժարութիւն կամ խորշումն, իսկ յետնոյս՝ կամելութիւն կամ չկամելութիւն։ Կամք մարդոյ շարժին ՚ի ձեռն ազդարանաց՝ բազմօրինակ տեսակացելոց. շարժառիթք հաստատեալք առաւել յախտս քան ՚ի պայծառ և ՚ի ճիշդ նկարագիրս՝ կոչին Թելադրութիւնք բնութեան կամ ընդաբոյս բերմունք. այլև ազդարանքս այսքիկ կախեալ են զհաճոյական և զանհաճոյ ախտից՝ որոց կցորդին նկարագիրք. զոր օրինակ. ինչ մի ախորժական խնդրեմք յերկարաձգել՝ ցոր վայր և հնարաւոր իցեմք, ուստի զհետ գայ թէ ներգործէ աստանօր խորհրդածութիւն բանի որ ուսուցանէ ընտրութիւն առնել ընդ բարի և ընդ չար, ընդ համաձայնս պարտականութեան մերում և ընդ ներհականն նորա, ընդ իրաւս և ընդ անիրաւս։

Զգալի ցանկականն ձգտի կէս մի ՚ի ձեռս բերել և պահպանել զհեշտարարս կամ զցաւեցուցիչս, և կէս մի ՚ի բաց վարել կամ յետս

ընդ կրունկն նահանջել զնոսա. ուստի են որոց ցանկամք, և են յորոց խորշիմք 'ի բաց։ Բուռն սաստկութիւն յօժարութեան ցանկութիւն լոկ. ներհականն նորին՝ 'ի բաց խորշումն. Հակամիտութիւն կոչեմք զտևական յօժարութիւնն որում ընդդիմադրի մեկուսի բերումն. այն ինչ մեղմ է ցանկութիւն՝ ասի յօժարութիւն. բայց իբրև լինի այն առանց զճիգն թափելոյ, ասի իղձք բաղձանաց որք՝ գերածորեալ ուժգնութեամբ՝ կարօտութիւն լինի կամ փափագ։ Հակամիտութիւն գոլով դժուարայաղթ՝ առասի կիրք կամ կարիք. նոյն խոկ կրից երկու ազդ են. է զի բովանդակին 'ի սաստիկ բերումն 'ի պահպանել զախորժականս և յարատաչալած առնել զանախորժս, և է զի յաղդոյ ախտս առանց զօրաւոր ցանկութեանց և անմիջական գործականութեան կամաց. յառաջնոյն համարի են ցանկական կիրքս՝ սէր, թշնամանք, վրէժխնդրութիւն, սպառնացումն, ախտ նախանձաւորութեան, մոլութիւն, երգիծաբանութիւն, ամբարհաւաճութիւն, պատուախնդրութիւն, ժլատութիւն, հեշտախտութիւն, և հրաժարողականքս՝ զզուանք, ատելութիւն, երկիւղ, զարհուրանք, ահաճութիւն, փոքրոգութիւն, յուսահատութիւն, բարկութիւն. 'ի յետնոյն սակս են ախորժական կիրքս՝ ուրախութիւն, զարմանք, ակնածութիւն, յոյս և չախորժականքս՝ տխրութիւն, նախանձ, ցասումն, երկչոտութիւն, զղջումն։

Վերին կամ բանաւոր ցանկականն ակնարկէ մանաւանդ յենթակայս բարոյական հաւանութեան կամ անհաւանութեան. հոգի մարդոյ բերի 'ի գիտութիւն իրաց՝ է որ կայացելոց 'ի սահմանի իշխանութեան բանի և է որ յախտս՝ որք զանազանեն զմարդ յանասնոց և յայանի ընծայեն 'ի սէր գիտութեան՝ չատ կամ նուազ յատուկ ամենայն ումեք։ Առանձին ազդեցութիւնք հոգւոյ՝ յերևան ելեալք սատանօր՝ են մտադրութիւն կամ ընդունելութիւն նկարագրաց և մտածութիւն կամ բերումն 'ի յարուցանել յանձին նորանոր պատկերագիրս, 'ի մշակել զնոսա և 'ի տպաւորել պայծառ իմն 'ի գիտակցութեան մտաց. մեծի ճգնողութեան պէտք են սատանօր՝ քան զի կարողութիւնք հոգւոյ ոչ 'ի փոքունս հանդիսանան վաստակս. ապա ուրեմն վերին ցանկականն 'ի յայտնութիւն մատչի յայսոսիկ մանաւանդ. նախ 'ի ձկտողութեան անդ յաճախել անընդհատ զքանակութիւն մերոյ գիտութեան, երկրորդ՝ 'ի խնդրելն մեր զճշմարտ-

ութիւն՝ որով գիտեմք ներդաշնակել և ստուգել զգիտութիւն մեր. Երրորդ՝ 'ի նախանձաւորութեան որոց լաւքն են , այն է բաղձալն ըղձիւք՝ զի զոր միանգամ ձեռնարկեմք՝ լիցի համաձայն արտաքին և ներքին օրինաց ։ 'Ի հանգիստ յայսմիկ համօրէն կարողութիւնք մարդոյ անկանին ընդ լծով կամաց և եթ, ուստի յառաջ գայ արժան զօրն բարոյականապէս կամ ոչն , և պարտականութիւն մեր առնելոյ կամ թողլոյ · մանրամասն բացատրութիւն առաջելոցս չէ տեղւոյս , այլ բարոյական վարդապետութեանն։ Կամք մարդոյ նշանաւոր հանդիսանայ 'ի նորուն ազատութեան մանաւանդ· այսու ազատութեամբ բաւանդակեմք պարտել զհրապոյրս զգայականին և 'ի դէմընդդէմ ներհակման նորա ընթել · սա է որով իշխան լինիմք 'ի տարակուսական դէպս յամեցուցանել զընտրութիւն մեր՝ մինչև բանական կշռութեամբ լուսաւորեալ ընծայեսցին իւր· այս ինքն զօրութիւն կամաց է որով ստեղծու մարդ գոյացութիւն ազատ , որ է՝ կարող անկախ զանձն կացուցանել 'ի ստիպմանց զգայականին և զգործս իւր առաջադրել ընդ կանոնաւ բանի։ Զազատութիւնս զայս մարթի ճանաչել հեշտաւ յայժ յախտէ անտի զոր նոյն ունիլ է յարուցանել 'ի մեզ , զխիղճ ասեմ մտաց՝ ազատութիւն մեծախորհուրդ որոյ քաջապատշաճն կիրառութիւն կայ և մնայ յաւէտ վերնագոյն նպատակ մերոց ճգանց։ Ստրկութիւն կամաց յառաջ գայ, մինչ նորա առ ոտն կոխել զօրէնս բանի առաջնորդ իւր ունի զհակամիտութիւնս և զկիրս։

## Վերադիտութիւնք 'ի տարբերս հանդերձ բացատրութեամբ նոյին պատճառաց։

Չեն պէտք մանրախոյզ ծանօթութեան մարդկան առ 'ի խելամուտ լինել թէ քանի՛ բազմօրինակ այնք տեսականան ըստ վարուց , ըստ սովորութեանց և ըստ եղանակի մտածելոյ և գործելոյ· բե՛ր այժմ հանդիսացուք 'ի քննութիւն պատճառացն։ Զորս մարթ է բաշխել 'ի բնականս և 'ի բարոյականս · առաջինքն սակաւ կամ ոչինչ կախին 'ի կամաց մարդոյ· իսկ վերջինքս շատ կամ նուազ ստորանկեալ են այլայլութեան կամ տեսակաւորութեան ըստ հաճոյս մարդկան · 'Ի բնականացն համարի դնեմք նախ՝ զորակութիւն մարմնոյ, ուստի յառաջանան որեւ որեւ խառնուածք ոյք են արիւնային, բարկացկոտ,

մելամաղձոտ և մաղասային։ Երկրորդ՝ զզանազանութիւն բնաւոր ձրից հողոյ՝ ուստի 'ի յայտնութիւն ելանեն մարդիկ թոյլ, միջակային, բարիք կամ ակնաւոր իմացականութեամբ և բազմօրինակ առ ոմանս ախտս, հակամիտութիւնս և կիրս տրամադրութեամբ ։ Երրորդ՝ զչափ հասակի՝ որով լինի ապաքէն զգալ երեւոյթ այլազգքան զայր և անդրադարձութեամբ· սակս մարմնաւոր յեղափոխութիւնք համօրէն 'ի զանազան ելեւէջս կենաց մարդոյ զխոնն ազդել 'ի հոգի և 'ի բոյս բարուց նորա, նոյն և զանազան որակացուցանել զզգայութիւնս, զբերմունս և զեղանակ մտածութեան և զգործոյ։ Չորրորդ՝ զսեռ՝ յորմէ այլեւայլ սեռականն բնաւորութիւն· այր զանազանի 'ի կնոջէ վստահութեամբ խորով և հանճարոյ կորովութեամբ , որպէս կին յառնէ՝ եռանդուն եւ ախտին, հեզահամբոյր հոգւով և գեղջանողական բարուք։ Հինգերորդ՝ զեղանակ օդոյ· վասն զի մարմին և հոգի բազում յոյժ կախին զազդեցութենէ՝ որ 'ի փոփոխութեանց երկնային մարմնոց · քանզի խորոց է ընդ բնակիչս Խաղեաց և Լապլանդեաց, ընդ Սենէգալի և ընդ Եւրոպացի· առաւել երջանիկ են զեռադեալքն 'ի բարեխառն գօտին, որ և տարբերին յոյժ 'ի ներքոյ անկելոցն մշտնջենաւոր սառնամանեաց կամ կիզանողական ջերմութեան արեւու։ Վեցերորդ՝ զսնունդ, վասն զի ոմանք առանձնութիւնք 'ի բնութեան մարդոյ գոյանան 'ի կերակրոյ՝ որ 'ի զանազան աշխարհս զանազան տեսանին։ Եւ բարոյական պատճառն ունիմք զառաջինկայքս· նախ՝ զեզու· վասն զի որչափ չքաւոր է ոք, այնչափ և նուազ են ընդունակութիւնք մտաց, իսկ նմին հակառակ՝ որչափ բարգաւաճ՝ նոյնչափ և բարձր 'ի գլուխ պանծայ իմացական լուսաւորութիւն մարդոյ · 'ի սոյն առ կախի մանաւանդ թէ լրութիւն և ճոխութիւն ընդհանուր ընկերութեանց։ Երկրորդ՝ զեղանակ կենաց, իբր զի բազում ինչ խտիր է ընդ խոշոր որսական և ընդ կիրթ ճարտարապետ և ուսումնական, ընդ շինական և ընդ նուրբ քաղաքացի, ընդ աղքատ և ընդ մեծատուն։ Երրորդ՝ զվարս, զսովորութիւնս և զկարծիս որոց ժամանակի ձիգս 'ի ներքոյ կային ազգք բովանդակք և տոհմք առանձնականք։ Չորրորդ՝ զդաստիարակութիւն որ գիտէ այն մեծամեծս ներգործել տարբերութիւնս 'ի մարդիկ ։ Հինգերորդ՝ զկրօն · բեր բաղդատել զՔրիստոնեայ ընդ Հրէայ, զՄահմետական ընդ Հնդիկ, անդրէն դարձեալ ընդ միմեանս զայլեւայլ

անդամս միոյ միոյնոյ քրիստոսեան եկեղեցւոյ , որպէս զՊապականս ընդ Լուտերականս, զվերջինքս ընդ Յունադաւանս և այլն. և այս խելամտեալ ծանիցես թէ քանի՛ այլևայլ ընծային բնաւորութիւնք ազգաց ըստ նոցին այլևայլ ըմբռնմանց Աստուծոյ, ըստ պաշտամանց կրօնից արտաքին արարողութեամբք և ըստ առընչութեանց մարդոյ առ Աստուած: Վեցերորդ՝ զոհ և զկարգ քաղաքային տնտեսութեան որ ոչ նուազ ինչ ունի առ կեանս և առ դաստիարակութիւն հպատակաց , վասն զի բազում ինչ խոկր է աստանօր թէ կատարումն օրինաց իցէ՞ արդ՝ եթէ խիստ, թէ կայցէ՞ ազատութիւն ՚ի բան, ՚ի գիր և ՚ի գործ, եթէ ոչ: Եօթներորդ՝ զբնաւորութիւն, վասն զի ազգարանք և տեսութիւնք, ըստ որոց խորհի և մտածէ մարդ՝ զօրէն բազմօրինակ յոյժ տեսականաւ նոյն և տարբեր լինին կերպարանել զնորուն բնաւորութիւն որ պարտէր յաւէտ ՚ի կամացն ազատութիւն լինել ապաստան:

---

## Զեկուցմունք յաղագս Դաստիարակութեան իբրև յաւելուած Հոգեբանութեան.

Ամենայն ոճ դաստիարակութեան որում ոչ առաջնորդեն օրէնք կազմածոյ մարդկային բնութեան՝ վրիպակ է. քան զի պահանջի ուսուցչէն ճանաչել զոր ՚ի խուզարկութենէ հոգւոյ հետեւութիւնս զորս և պաշտել կոյ նմա առ դաստիարակութեամբ մանկտւոյն՝ հաւատարիմ նորուն խնամարկութեան եղելոյ, այսուհետև վասն կարգեցուք աստանօր ինչ ինչ գլխակս ՚ի հրահանգութեան մասին՝ առաջնորդ մեզ կալեալ զգլխաւորս ոճոյ դաստիարակութեան: ՚Ի դաստիարակութեան կրկին տեսութիւնք են . մի՝ ընդհանուր առեալ յարմատական ուղղութեանց անտի աճելութեան մարդոյ, որ ընձեռէ զոճ պիտանական ՚ի հասարակի. և միւս ես առանձին որ զհետ գնալով անձնական անհատութեան իւրաքանչիւր՝ միտ դնէ յորինչ որինչ տրամադրութիւնս և ՚ի քանքարս մարդոյ ՚ի հրահանգութեան անդ:

### Ընդհանուր ակն.

Զմարդս յերեխայութենէ անտի մինչև ՚ի ծերութիւն տեսանեմք անցանել ընդ զանազան հանդէսս կերպարանափոխութեան: Ազատ նախապատճառ հոգւոյ օր քան զօր ճանապարհ յարդարելով իւր՝

վերհամբառնայ 'ի վեհագոյն վիճակ կենաց · կարողութիւնք ամենայն զարգանան և բարգաւաճին, որպէս զի միոյ միոյ 'ի նոցանէ է իւր ժամանակ ծաղկելոյ, ժամանակ հասունանալոյ և անդրէն նուազելոյ։ Յերեխայս տեսանեն սոքա իբրև ընձիւղս, յերիտասարդ-ոք իբրև ծաղիկս, 'ի ծերս իբրև թարշամութիւն · զայս ամենայն տարբեր որպիսութիւնս մարթ է կարդել 'ի հնգեակ արմատական եղանակս՝ այք են զգայական, բանական, բաղձական, բարոյական և կրօնապաշտական։ Շատ կամ նուազ անցանէ ընդ ընաւս խուզքանչեւր ոք՝ զհետ գնալով հարազատ ընթացից աճելութեան, որպէս զի հնարաւոր լիցեմք զտարբերութիւնս զայսոսիկ որոշել յատպարելի կենաց, թէեւ՝ ըստ որում մարդս է գոյացութիւն ազատ՝ ընդդէմ յարիցեն խափանարարք բազումք յոյժ։ Երկուս միջոցս կենաց մարթ է խորել ճշգիւ · զմի՝ անդստին յերեխայութենէ մինչև ցերիտասարդութիւն, զմիւս ևս՝ յերիտասարդութենէ անտի մինչև 'ի ծերութիւն · առաջին միջոց կենաց անկ է դաստիարակութեան՝ որում մասնակից են ծնողք, ուսուցիչ, սնուցանող և բարեկամ · երկրորդ միջոց կենաց է անձնիշխանութիւն · վասն զի ժամանեալ մանկան յարբունս հասակի՝ 'ի կամս ազատութեան իւրոյ թողեալ լինի ապատան, յորմէ հետէ դաստիարակ նորա են օրէնք, կէս մի արտաքինք 'ի թագաւորութեան, և կէս մի ներքինք՝ բարոյական կանոնաց։ Զառաջնոյ միջոցէ կենաց ունիմք միայն խօսել աստանօր · առաւել բարձրագլուխն 'ի կանոնս դաստիարակութե բովանդակի յառաջիկայս· Վարեաց առ մարդ այնպէս՝ զի որ ինչ կարողութիւնք հոգւոյ և արդասիք անտի նախկին յառաջացեալ իցեն 'ի նմա, եղիցին նոյնք և 'ի գլխաւոր առարկայս մտադրութեան նորա· յայս և 'ի սոյն հաստատի հանապազորդականն դաստիարակութիւն և գիտողութիւն արմատական որպիսութեանց մարդոյ։ Երեխայ մինչչև լծակցեալ գնկատողութիւնս իւր, չէ մարթ տակաւին առաջնորդել նմա առ նկարագիրս առանձինս, վասն զի դեռ ևս անյայտ է նմա զինչութիւն նկարագրաց· պէս գունակ անբաւական եմք զերեխայն՝ մինչչև զուգադրեալ իցէ զպատկերագիրս իւր՝ ածել առ ըմբռնմունս առանձինս, քան զի տակաւին օտար է նմա որպիսութիւն նոյն ինքն ըմբռնման : Նախ քան զընականապէս զարգանալն պատկերագրական և ըմբռնողական կարողութեանց չէ

իշխան դաստիարակն զենթակայս նոցա մատուցանել երեխային առ 'ի գիտակցականն մտաւորութիւն. զոր օրինակ հետ զհետէ տարորոշէ առ երեխայն բնական իմն շարակարգութիւն իմացուածոց , որում նոյն զհետ կրթի առանց ուրուք առաջնորդութեան, որ և յանդիման լինի նմա իբրև ենթակայ 'ի քերականութեան անդ, ուր սկիզբն առնու վերստին շարակարգել զայն՝ զոր յառաջն շարակարգեալ էր նորա առանց մտացն գիտակցութեան։ Առաջնորդ մեր կալեալ զօրէնս զայս՝ եկեսցուք այժմ 'ի պատշաճեցուցանել դաստիարակութեան զորս 'ի կարևորացն գիտելեաց ուսեալ է մեր 'ի Հոգեբանութենէ անտի, անցանելով 'ի ճառ ըստ հասակացն կարգի։

## Երեխայական տիք.

'Ի հասակի յայսմիկ զգայական որպիսութիւնն գերակշիռ հանգիտանայ՝ այլոցն մնացելոց ննջելով տակաւին 'ի խանձարուրս իւրեանց՝ թէև ոչ ամենևին անգործ կալով՝ այլ միայն յաղթահարեալ 'ի զգայականէն։ 'Ի սոյն յայսմիկ դաստիարակ է մայր որոյ գործ է ապաքէն ղեկավարել և ուղղել զիմացական զօրութիւնս երեխային՝ զցոլացեալսն 'ի պահու յայսմիկ։ Երեխայի սանդկոյ պատշաճաւոր է յաւէտ՝ մութն և անդորրութիւն անխռով . չիք տարակոյս 'ի միջի թէ լինի երեխային 'ի խորս քնոյ մշակել զտպաւորութիւնսն՝ զորս ընկալեալ է յարթնութեան անդ. ազդեցութիւն ամենայն որ սաստիկս շօշափէ զզգայութիւնս նորա , խափանարկու լինի նմա 'ի կերպարանելն, 'ի կարգաւորելն և 'ի սեփականելն զարտաքին նկատմունս , վասն զի չէ 'ի կարի երեխայն մատչել 'ի նկարագրութիւն իրաց , մինչև բացորոշեալ յինքեան զայլևայլ ազդս իմացութեանց, զառանձին տպաւորութիւնս միոյ միոյ 'ի զգայութեանց և զյեղանակութիւնս որոշ որոշ զգայմանց։ Հայելի մանկան են ակնունք մայրականք յորս վերծանէ այն զնորին զգայութիւն . և բազում ինչ խորհ է՝ թէ որպէս այն այս հանդիպեցի . աչք գորվախառն և սիրալից զնոյն փոխադրեն և 'ի պատկերն. վասն զի սէր ներգործէ համախառաբար և խնդրէ սէր անդրադարձ. յոր ինչ դաստիարակել պիտի այս և զորս փափուկ՝ է հնազանդութիւն, խոնարհութիւն և երախտագիտութիւն, զորս առ 'ի յարուցանել և զարգացուցանել 'ի հոգւոջ երեխայի՝ սաստի և սիրոյ միանգամայն պէտք

են։ Մինչ դեռ երեխայն է լոկ էակ զգայական, պարտականութիւն է մօր՝ առ 'ի ներգործել 'ի նա՝ զուգախառնել զցաւեցուցիչն ընդ հեշտարարս. երեխայն խորշի 'ի ցաւոց սաստողականացն հնարից, ուստի հրաժարեալ յիւրն 'ի ստահակութենէ՝ ուսանի հնազանդ կալ և սիրելով զկարիս իւր՝ ուսանի հայցել և շնորհակալու լինել. չէ՛ արժան մարց առ որ և է ձայնարկութիւն երեխայից փութալ 'ի հաճել զկամս նոցա. վասն զի տանելն պակասութեանց է՝ որ մեծակշիռ ընծայէ զյարգ բարերարութեան. նա ինքն է որ արագագոյնս և յաւէտ ուժգինս ներգործէ զշնորհակալիս 'ի հոգւոջ երեխայի. զնոյնն հակառակն՝ երեխայք հեշտացեալք 'ի զրգանս փափկութեան՝ ոչ ուսանին երբէք լինել շնորհակալուս և հնազանդս. և այսպիսեաց թափուր և ամայի կան սիրտք 'ի տիս յայմիկ. կորուստ արդեամբք անդարմանելի առ 'ի յապայս։ Այլ ինչ կանոն առաջի կայ մարց, որ է 'ի չափու ունել զզգայականն, մանաւանդ թէ ըղձեշտութիւն քմաց 'ի քաղցունս և 'ի համադամս. այլ 'ի սոյն հակառակէ՝ դաստիարակել զայլ զգայութիւնս՝ որպէս զտեսանելիս և զլսելիս։ Վա՛ղ ուրեմն պարտի տեղի տալ զգայականն՝ բանի, որոյ վասն 'ի պահանջելեացն է յաւէտ ունականալ չափաւորութեան, և մաքրութեան (որ ոչ միայն նպաստեն յոյժ քաջառողջութեան, այլ և ուսուցանեն ժուժկալել 'ի սիրեցելոցն կարեաց ուր զզգայականն և եթ շողոմեն) և զգաստ լինել առ անձն իւր։ Հասակ երեխայական յանդիման կացուցանէ մեզ մտադրութեան արժանի հանդէս անձնաւորութեան. այն ինչ երեխայն կատարելապէս բացորոշեալ լիցէ զանձն յարտաքնոյն աշխարհէ՝ հնարաւոր է ճանաչել անձնաբար զորդասիս զիւրոյ գործականութեան իբրև զիւրն սեփական. այնուհետև զօրացեալ անձնազգայութեան՝ վերամբառնայ 'ի գիտակցութիւն անձին. և որ յառաջն էր միայն թելադրութիւն բնութեան՝ լինի այժմ խելամտութիւն բանական. բազում ինչ խոհր է, թէ որո՞ց զգայութեանց և պատկերագրաց զուգաւորիցի զառաջինն անձնաւորութիւնս այս։ Մինչ լրացեալ է գիտակցութիւն անձին, մատչին 'ի գործ՝ նկարագրական, երևակայական և ցանկական զօրութիւնք. և այս է հասակ խաղարկութեան երեխային. պա՛րտ է թոյլ տալ երեխայից ինքնին ընտրել զխաղս իւրեանց, վասն զի նոքա լաւ ևս ընտրեն զորս համապատշաճ բնաւ մարզել կարեն զնոցին այժս

մարմնոյ․ ուելորդութիւն և զեղխութիւն մի՛ լիցին ներեալ 'ի խաղալիս։ Զաչս երեխայից արժան է սովորեցուցանել 'ի գեղեցիկ կերպարանս, զլսելիս՝ 'ի ներդաշնակ ձայնս․ վասնզի ամենևին է այժմ ցանկութիւն որ՝ հեշտեաւ յոյժ արշաւէ ըստ սահման խմոյ և քոյս, և վրիպի 'ի զգայականն չափաւորութիւն անձին․ է՛ սա կորստաբեր այն մոլախոտ որ 'ի բաց ծծէ զհիւթս յաղնուական բուսոց, զոր և պարտ է արմատաքի խլել ընդհուպ․ ցանկութիւն ժանտութեամբ իւիք յարձակի սեփականել զամենայն որ հաճոյական նմա երևի․ այս տեսանի յաճախակի 'ի կուսասիրութեան անդ և յանմիաբանութեան ընդ այլ հասակակից խաղընկերս․ ուստի պարտ է կամ անդէն անդ 'ի վերայ կալեալ զպատուհասն, կամ փոխանակելով զխաղալիկս՝ յառին պահել զմիաբանութիւն․ օրինակ զայս հնար է արծարծել զբանական և զհեզահամբոյրն հոգի 'ի զգայական կեանս երեխայի։ Այլ զինչ բան է զբարոյական և զկրօնապաշտական ուղղութենէ նորա․ բացառաբար՝ յառաջ խաղոյ բարոյականն, մինչ 'ի չափու կալեալ լինի ցանկութիւն, բայց դրականն թելադրութիւն չև՛ գտանէ տեղի․ սակայն զսուրբ կրօնապաշտականին պարտ է յարուցանել և 'ի սիրտ երեխայի․ 'ի պաշտօնասիրութեան ծնողաց լուսափայլի յաչս նորա ինչ մի 'ի վերնագունից․ 'ի ժամ աղաւօթեան, երեկոյեան և սեղանական աղօթից նոյն և յեկեղեցւոջ կցեսցէ երեխայն զձեռս իւր առ վայր մի և ուշ դիցէ այնմ որ չէ 'ի խաղ և 'ի կատակ․ զուցատուլին հրամայեսցի լուկալ և ունկն դնել բանից քահանային՝ որ ընթանան առ հաւատացեալս․ հայր մի որ պարգևէ առերս ծնողաց՝ որպէս ոգք զաւակաց իւրեանց՝ պարտի լինել գերագոյն․ ո՛ւր է նա․ յերկինս․ օրինակ զայս աչք երեխային անզգալի իմն 'ի բաց յարտաքնոյն տարեալ յաշխարհէ՝ յաւեսցի հոգի նորա 'ի սկզբնապատճառ ինչ որ ունի զազգնի հայեցուածս առ բնաւս երևելին աշխարհի։ Յաւելի է զի սովորութիւն աղօթելոյ յընտանեկան կենցաղս օր քան զօր պակասեալ տեսանի, և յոլովք 'ի քրիստոնէից մերոյս դարու իբր 'ի բազումս մեքենայաբար սրբելով զկիւրակէն առանց զմիտս յաստուածային վերուղղելոյ՝ չար օրինակ լինին իւրեանց իսկ զաւակաց․ բայց կարևոր է, զի մատաղատունկ ծաղիկն այն վաղ ուրեմն զուարթացեալ և հաստատեալ ճառագայթիւք վերնագունի իմն ա-

ըեգական՝ զօրութիւն զգեցցի առ 'ի տեւել տակաւ 'ի ձախորդ աւուրս մրրկածուփ կենաց իւրոց, և առ 'ի վերաճել և պտղաբերել։ Առա-ջին տպաւորութիւն կրօնապաշտականին տնկեալ տակաւին 'ի ստորին վայրս զգայականին՝ յարուցանէ յերեխայն անդ զմտադրութիւն քրիստոսային վարդապետութեան որ յայտյս դիւրեաւ եւս ունի մատչել 'ի սիրտ նորա։

## Մանկական դէպ.

Հաստատեալ երեխայն 'ի գիտակցութեան անձին, այլ և հանդի-տացուցեալ յինքեան հոյլս հոյլս նկարագրաց, երեւակայութեանց և ցանկութեանց՝ ընդունական լինի դաստիարակութեան, որ յա-ռումնարանս։ Այժմ նկարագրականն կարողութիւն համբառնայ յառաջնան ըմբռնողականին, երեւակայութիւնն՝ յառաջնան ախտի, իսկ ցանկութիւնն 'ի հակամիտութիւն․ 'ի հասակի յայսմիկ գահերէց բազմի բանն և յետս ընդ կրունկն նահանջէ զզգայականութիւն․ իսկ վերնագոյն որպիսութիւնքս՝ բե՛ր ասել զհեզահամբոյրն, զբարոյա-կանն և զկրօնապաշտականն՝ դեգերին դեռ եւս 'ի ստուերային խորշս հոգւոյ՝ թէև պայծառագոյնս լուսաւորեալ 'ի ժամուս քան զոր էին յերեխայական տիս անդ։ Դաստիարակութիւն հասանէ այժմ մա-նաւանդ թէ ուսուցչին և դպրոցի․ մայրն որոյ գործ էր յաւէտ առաջնորդել երեխայն 'ի միջոցի զգայական կենաց՝ յանձն առնէ այժմ զգլխաւոր պաշտօն դաստիարակութեան այնոցիկ որոց է հոգալ զպէտս բանականին․ բայց դաստիարակութիւն տանին ունի միշտ զուգընթանալ դպրոցականին, որպէս զի պէսպէս հայեցուածք ման-կականին կենաց կատարելագործեալք առ տնին և յուսումնարանի՝ մի յետնեալ գտանիցին մի քան զմիւս։ Եւ զի զարգացումն բանակա-նին 'ի գլխաւորացն է այժմ, այսորիկ վասն հարկ 'ի վերայ կայ ծնո-ղաց յամենայն զօրութենէ ձեռն տալ դպրոցական դաստիարակու-թեան, այլ և 'ի ներհական դէպսն զիւրեանցն յետին դասել քան զդպրոցին։ Այս իսկ է ներքին պատճառ 'ի վեր երեւելոյ յեւրոպա դպրոցաց և մարդասիրական ատացեալ տանց յորս դաստիարակին մանկունք բացակայ 'ի ծնողաց։

Արդ՝ առ ի՛նչ առաջնորդեն մեզ 'ի հանդիսի մանկականին դաս-տիարակութեան որ առ 'ի մէնջ նախակարգեալ օրէնք․ հիմնական

կանոն դաստիարակութեան է՝ յիւրաքանչիւր առարկայի կրթութեան 'ի խնդիր ելանել դանդաղկոտ կարողութեանց հոգւոյ և ժրափոյթ զնոսա կացուցանել. վասն զի դանդաղկոտութեամբս այսուիկ վարակեալ միշտ տեսանի բուրն, ըստ որում արմատք մարդոյս անդր հաստատին. յառաջինսն յանդիման լինին իբրև դանդաղկոտս երկոքին կարողութիւնքս այսոքիկ. տեսական և երևակայական, որ և պարտին յարդասիս անդ գործականութեան իւրեանց ենթակայանալ մանկանն. քաջայայտ է թէ զնոյն բան ունին զգալի տեսութիւնք ժամանակի և տարածութեան զոր բան և թիւ՝ առ գիծ. ուստի սոքա լոկ են տարերք հրահանգութեան, և զայսոսիկ մարթ է կոչել արմատս ըմբռնմանց: Զառընչութիւնս թուոյ բնական ճանապարհաւ ուսեալ է երեխայն ներգործել յազնուագոյն զգայութեան անդ 'ի լսելիս, լոկ զառընչութիւնս գծից՝ յազնուական զգայարանի անդ յաչս. այժմ մարթ է զգործականութիւնս զայսոսիկ առաջի մատուցանել մանկան առ 'ի վերատեղծել զայնս՝ որ լինի ապաքէն 'ի ցոյց ածելով զառընչութիւն թուոյ և գծի: Այն այս է հոգեբանօրէն ածանցեալ՝ Միութեանց տախտակ մեծանուն դաստիարակին Պեստալոցցի (որ եկաց 'ի վերջին կէս ութուտասաներորդ դարու և 'ի սկիզբն իննևտասներորդին), ուստի պարտի սկիզբն առնուլ հրահանգութիւն ամենայն: Այս տախտակ միութեանց ընծայէ թիւ և գիծ 'ի մի, որով բուռն հարկանէ զխոհական միջոցէ տարրական հրահանգութեան. 'ի տախտակի յայսմիկ հնարաւոր է տեսութիւն ընդգրկել միանգամայն զառընչութիւն թուոյ և չափու. և օրինակ զայս լինի դաստիարակութեան զհետ երթալ ճշգիւ մանկականին բնութեան, որ յառաջին պաշտամունս իւր ներգործէ իբր կշռաբանօրէն և մեքենայաբար. բայց զգայական տեսութիւն տարածութեան և ժամանակի զանխուլ իմն փոխանցէ 'ի վերատեղծիչն զօրութիւն երևակայական: 'Ի լինել այսր, ժամ է վարժել զմանուկն 'ի նկարչութեան, 'ի ձևացուցումն կերպարանաց և յերաժշտութեան: 'Ի ձեռն օրինապատշաճ տեսութեան կարողանայ և դաստիարակի զառաջինն դատողականութիւն մանկան. 'ի յաւէտ հեշտին խնդրոց առ դժուարինն յառաջ խաղացէ մանուկն՝ որով լինի դիւրին բերել դժուարինսն զոր օրինակ մագնիս առ սակաւ սակաւ ծանր քան զծանր բեռնաւորեալ՝ հուսկյետոյ զօրէ կրել լծելս բազումս: Մինչ այսոքիկ

գլխաւորեալ լիցին, նոյն և մինչ հաստատեալ լիցի և քաջացեալ ներդաշնակութիւն կարողութեանց տեսութեան և վերաստեղծիչն երևակայութեան, դարձցի՛ մանուկն 'ի կրթութիւն լեզուի: Ճարտակրթութիւն մասանց բանի զոր առնէ երեխայ ըստ բնութեան՝ առանց ինքնագէտ լինելոյ և ոչինչ առաջնորդեալ ձեռամբ արուեստի, պարտի երկրորդիլ 'ի նմա գործարանական ոճով. այն է՝ 'ի ձեռն քերականական մարզից. լեզուն ըստ իւրում արուեստայարմար կազմածի է գործ ճարտարութեան, ուստի հարկ է յուսումն լեզուի լծակցել զստեղծիչն երևակայութեն ընդ նախընթաց կարողութիւնս:

'Ի գլխաւորել մարզիցս այսոցիկ և 'ի չարակարգիլ ըմբռնմանց ըստ կանոնի դասաւորութեան բառից և քերականական կազմածոյ՝ անցէ՛ մանուկն 'ի կրթել զճաշակաւորն դատողականութիւն որովք 'ի սոյն կարգին: Ազատ նկարագործութիւնք, երաժշտութիւն, բացախօսութիւն, նուագ, վայելչաբանութիւն են խնդիրք լուծանելիք այսմ ժամանակի. կից ընդ զննութեան ճարտարակերտաց յառա՛ջ խաղայցեն նկատմունք չափաբանականք 'ի վերնագոյն վարդապետութիւնս թուահաշուութեան և երկրաչափութեան, իսկ տարրական վարժութիւնք 'ի պատմական նկարագրութիւնս, մանաւանդ թէ 'ի հայրենականսն ըստ նոցունց գաղափարաց՝ սկիզբն առցեն այժմ: Բարձրագլուխ իմն կանոն թուի լինել՝ զյիշողականութիւն և զդատողականն մանկան մարզել միշտ համանգամայն և ոչ թողացուցանել սերտել 'ի բերան ինչ մի որում չէ մասնակից սիրտ մանկան, զոր և կարի դժուարին իցէ նմա առ ըմբռնել: Յիշողութիւն ոչ կարօտի առանձին իմն բնաւորութեան՝ թո՛ղ թէ ծանրաբեռնութեան անիմանալեօքն. յիշողականն զոյգ ընդ դատողականին մարզի հասկանալեօքն. և որով չափու քաջանայ դատողականն, նովին համեմատութեամբ հաստահիմն ընծայի և յիշողութիւն: Ամենամեծն 'ի վրիպակս դաստիարակաց է մարզել զյիշողութիւն շատագիտութեամբ որով լինի հարկանել զզօրութիւն միջամուխ 'ի մասնաւորս լինելոյ: Հասակ մանկական է նոյն և հասակ կրթանաց մարմնոյ. որպէս ընդդեցիկ կեանք երեխայի բարձրանայ յաստիճան բանաւորութեան, նոյնպէս ազնուանայ մարմին առ յաջողակութիւնս 'ի ճարտարութեան. երկոքին ոտքս պէտս ունին տակաւին հաւասարապէս խնամարկութեան. և ոչ չափ միայն. այլև քան զտկարանալ և զխօթանալ

մարմնոյ նախամեծար ընտրելի է զանմշակն թողուլ ոմանց բաժնոց իմանալին անդաստանի. ինչ որ 'ի զգալին բնութեան չարժութիւն է, է խոկացումն յիմանալին: Կրթանք մարմնոյ ճակատ առ ճակատ յանդիման կան կրթանաց հոգւոյ. և երկոքին սոքա պարտին անընդհատ փոխանորդել զմիմեանս. 'ի միջասահմանի անդ ամփոփի միայն քաջառողջութիւն . և սոյն այս միջասահման պարտի կալ և մնալ անխախտ ցայն վայր , մինչև գործարանական զօրութիւնն՝ սկզբնաւորեալ զոյգ ընդ աճողականին ձկտողութեան և լրացեալ վերաստեղծութեամբ սեռին և անձնաւորի, ամրացեալ իցէ բովանդակապէս: Զափաւորութիւն և մաքրութիւն՝ յառաջնում նուագի արծարծեալ յերեխայն՝ պարտին այժմ լծակցիլ ընդ աջողակութեան և և ճարտարութեան մարմնոյ:

Այսոցիկ գլխաւոր կանոնաց՝ որք ունին նուաճել զիմացականութիւն մանկան՝ զուգակցին բազում այլ երկրորդականք որք բղխին 'ի հեզահամբոյր, 'ի բարոյական և 'ի կրօնապաշտական ուղղութեանց: 'Ի մանկական հասակի ևս քան զևս հպատակի խնամականն 'ի հեզահամբոյր ուղղութիւն. և որ չէր յառաջնումն՝ բայց երեխայական չնորհակալութիւն առ մայր , յերկրորդումս յայտնիկ փոխանցէ յակնածութիւն և 'ի վստահութիւն յուսուցիչն. այսոքիկ դաստիարակեն զսիրտ մանկան և գլխաւորեն զբովանդակ առընչութիւն նորա առ խուռն աշխարհ , այլ և ելանեն իսկ ըստ սահման ուղղականին առընչութեան առ ծնողս . ուսուցիչ , դպրոց , տուն դաստիարակութեան են յորս վերաբերի մանուկն մանաւանդ: Առ 'ի դատարկութիւն ինչ ոչ թողուլ 'ի սրտի մանկան՝ պարտ է յարուցանել 'ի նմա զախտ յարգանաց և զվստահութեան յուսուցիչն . բայց առ 'ի զայս ներգործել ոչ բաւեն մայրական հնարք սատոկ և սիրոյ միայն, այլև պէտք են ծանրութեան , կարգի և դաստիարակութեան առ 'ի յուսուցչէն. որ չէր յերեխայի անդ, բայց ստահակութիւն թեթև, առնու 'ի մանուկն չափ և հասակ ժպրհութէ, կամակորութեան, խորամանկաց և առ յայլս՝ ժանտութեան իսկ, մինչ անմշակ կայցէ սիրտ նորա:

Արդ՝ զինչ բանք են 'ի մանկական տիս զհրահանգութենէ բարոյական և կրօնապաշտական ուղղութեանց: Թէպէտ անտեղի է տակաւին պահանջել 'ի մանկանէ առաքինութիւն , քաջութիւն , վե-

հանճնութիւն, առատաձեռնութիւն և որ այլ այսպիսիք, վասն զի կամք նորա չև՛ են ազատացեալ 'ի բնական զօրութեանց, բայց սակայն պարտ է արծարծել 'ի նմա զիմացութիւն պարտականութեան, և զարդարութեան. մանուկն չէ համարձակ հաճոյականացն ևեթ զհետ կրթիլ, այլ պարտի դաստիարակիլ՝ առ 'ի զօրել զրկել զանձն իւր 'ի փոքունց ումանց, և ունի բաշխել զժամանակ իւր 'ի պաշ ուսանելոյ և 'ի պաշ խաղալոյ, բայց զվերջինս քան զառաջինն ստորին դասելով: Ինչ որ 'ի սկզբան անդ էր արտաքին միայն հաճոյութիւն, այժմ առ սակաւ սակաւ հեշտացուցանէ զիմացութիւն բարոյական և լինի բնազբօսութիւն ներքին. և որ յերեւոյթ անդ էր տակաւին չահախնդրութիւն ախտական՝ լուսափայլ բերէ յաչս մանկան՝ մատչելով յըմբռնումն իրաւանց սեփականութեան. ընդ ուսանել նորա զխտիրն որ ընդ իմ և ընդ քո, զարգանան 'ի նմա սկզբունք արդարութեան: Կանուխ ուրեմն մարթ է յարուցանել 'ի սիրտ մանկան զպարտականութիւնս զբարեգործութեան, զկարեկցութեան և ձեռնտուութեան ընկերին. վասն զի այս հասակ է յորում սեռական պարտականութիւն անձնապահպանութեան՝ որոյ հարազատ ընթացք են բարեխառնութիւն կենաց և մաքրութիւն, փոխանցէ 'ի սեռական պարտականութիւն օժանդակելոյ այլոցն բարեկենդանութեան. զայս արծարծանել 'ի մանուկն գործ է հասարակաց ատընին և արտաքոյ դաստիարակութեան:

Կրօնապաշտական ուղղութիւն մանկան է այնպիսի փափուկ ինչ ծաղիկ, որպէս զի անհնարին ջանից պէտք էին առ 'ի պահպանել զայն 'ի սառնամանեաց ունայն մտաց և 'ի պաղութենէ վարդապետական ոճոյ: Իբրև ժամանեալ լցէ մանուկն ըմբռնել զառընչութիւն իւր առ ինչ մի վերնագոյն, հարկ 'ի վերայ կայ պահպանել 'ի նմա զուրբազան երկիւղածութիւն յԱստուծոյ, այլև զգուշանալ յարուեստակելոյ զկրօնապաշտականն՝ իմանալի զայնս կացուցանելով մտաց. վասն զի որ ինչ ներքոյ անկանի ըմբռնման է չափելի և ոչ զօրէ լինել երբէք առարկայ պաշտաման, թող զի խնթալի է այս 'ի հասակի մանուանդ՝ ուր միան զամենայն ինչ իւրովն չափու չափել վատահանոյ՝ 'ի վերնագունիցն խորհրդոց զուրկ գտեալ տակաւին: Հրահանգութիւն կրօնապաշտական թուի լինել մի յառաւել դժուարին խնդրոց դաստիարակութեան. վասն զի կէս մի վերուղղութեն

աչաց առ անտեսանելին է, ինչ մի անսահման յաւիտենին, և կէս մի դարձեալ՝ չէ՛ համարձակ չափ և կշիռ անիմանալւոյն զիմանալին առնել· մի միայն ելք հնարից երևին լինել աստանօր· իմա դու ինձ զանձն յանդիման կացուցանել մանկան զգաղափարն մարդկութեանս, այն՝ որ երևպատկեր տեսանելի՝ բայց ամենամաքուր և անարատ՝ կցորդի ընդ էութեան անտեսանելւոյն․ այս գաղափար է յիսուս քրիստոս որոյ բարոյապէս ամբիծ վարք յաշխարհի, կեանք և մահ և յարութիւն 'ի մեռելոց պարզին պայծառ և կենդանի պատկերացեալ տպանալ 'ի հոգի մանկան, միայն թէ այս ամենայն պարզապէս և բան առ բան մինչև ցվերջինս և ցփոքունս յաւէտ պատմեալ լինիցի մանկան· յայսօրինակ պատմութեանց թէ որպէս լիցի նմա օրինակել և պատշաճաւորել յանձին զնախատիպն զայն, զայդ չէ՛ հոգալ ուսուցչին, բայց այդ և 'ի վեր է քան զամենայն տարակոյս՝ թէ գաղափարս այս կենդանացեալ միանգամ 'ի հոգւոջ նորա՝ ոչ ևս այլ 'ի կորուստ գնասցէ 'ի բովանդակ ընթացս կենաց։ Սերտ աշակերտելոյն երևզգածեալ իցէ աստուածային գաղափարաւս այսուիկ՝ ժամ է ապա առաջի դնել նմա քրիստոսային վարդապետութիւնն և ածել զնա 'ի հանդիսաւոր դաւանութիւն հաւատոյ, ուր եզերին հրահանգք դպրոցականք։ Զորին հակառակն վրիպակ ամենևին թուի լինել ինձ՝ ըստ որում դաստիարակք տան 'ի բերան սերտել 'ի մատաղ տիս անդ զորս 'ի կրօնն հային իմաստք, սաղմոսք, երգք և աղօթք· Հնար ինչ իցէ զկրօնապաշտական և զերկնային իմացութիւն մատաղատունկ հոգւոյս ընդ վայր հարկանել ևս՝ քան յեղափոխելով զաստուածային վարդապետութիւնն 'ի տանջանարան յիշողականին․ և զոր պարտի մարդ սուրբ և մեծակշիռ առնել՝ սպառնալեօք և գանիւք 'ի ներքս մղեցուցանել 'ի ժամու՝ յորում իմաստքն այնքան 'ի վեր են տակաւին քան զհասկացողութիւն մանկան· կարեմք այս՛ պնդել՝ թէ յայսպիսի խեղաթիւր ոճոյ դաստիարակութեան վա՛ղ ուրեմն յառաջանայ սառնութիւն սրտի առ կրօնապաշտականս և անդարմանելի գաղջութիւն առ ամենայն որ յաստուածայինն կարգին։

## Հասակ պատանեկութեան.

Յայս միջոց ժամանակի զարգանան միտք, տեսականն և ամենայն կարողութիւնք ցանկականին, այլև վերնագոյնքն՝ բան, երևակայու-

թիւն և կամք. սոսա ուրեմն բանի գաղափարական գիտանոց աչաց, և գիտակցութիւն անձին բարձրանայ յաստիճան ինքնաճանաչութեան. ըմբռնումն զօրացեալ վերածի 'ի կանոն սկզբնական, ախտն՝ 'ի գաղափար, և հակամիտութիւնն՝ յարմատական հիմունս բարոյականութեան։ Այժմ հասակի անկանելն կրկին մարդք, գիտնականք և ընդհանուրք . ունիցուք միայն զնախապատիւ վարդապետութիւնն՝ զոր աւանդէ Հոգեբանութիւն 'ի պէտս դաստիարակութեան։ Ինչ որ 'ի պատանեկութեան փթթեալ բարգաւաճի մանաւանդ՝ է ուղղութիւն իմացական ցանկականին. սէր և բարեկամութիւն են չնաշխարհիկ ամոլածաղիկքն կենաց մարդոյ, և սոյն սէր ընդառաջ ելանէն պատանեկին. սիրտ մարդոյ է գլխաւորն առարկայից դաստիարակութեան, որոյ պատուականութիւն այնու միայն 'ի յայտնութիւն գայ՝ զի ոչ վստահի 'ի միտս և 'ի շատագիտութիւն, այլ նմին հակառակ՝ զհետ լինի ըմբռնել զսոյն ուրոյն ճառագայթս ցոլացեալս 'ի խորոց սրտի, քաջ գիտելով՝ թէ 'ի հակամիտութեանց և յախտից՝ կենդանագործելոց առ 'ի սիրոյ և 'ի բարեկամութենէ՝ պերճացեալ զանուն բարոյական դատողականութիւն և բնաւորութիւն մարդոյ, մինչ հնարաւոր է այս յառին կալ չարութեան և վատթարութեան առընթեր ամենասուրբն հանճարոյ։ 'Ի պահու յայսմիկ մարտ է պատանւոյն ընդ կրից իւրոց, մարտ այնպիսի՝ յորմէ չէ բաւական և ոչ մի ինչ ճարտարութիւն դաստիարակի ազատ զպատանին կացուցանել, թէպէտ կանուխ արդէն իշխան է հոգ տանել այնմ, զի յաղթող հանդիսասցի պատանին ընդդիմամարտ։ Սէր և բարեկամութիւն են իբրու երկուքին պահապան հրեշտակքն որք չափ և կշիռ դնեն կրից, որպէս զի մի լիցի նոցա զօրէն ապստամբ հպատակաց զանձանցն խնդրել 'ի յուզմունս ցանկականին և բնութեամբ 'ի ձեռս բերել սեփական ինչ անձնիշխանութիւն։ Իմացական ախտ պատանւոյն յար և նման որպէս 'ի ծաղիկս կապեալ է ընդ աճելութիւն սերմականացն մասանց. անձնասիրութիւն նախկին հասակի փոխանցէ այժմ 'ի սեռական ձգտողութիւնս և ընդ սմին 'ի վեր երևին գաղափարք և ախորժ գեղեցկին։ Գեղեցիկն է՝ որ ընծայէ այժմ ճշմարտին հրապոյրս նորանորս, որ և ջեռուցանէ և պողպատէ զործէ զատնութիւն ըմբռնմանն. լոկ իմացականութիւն ոչ ևս այլ շատացուցանէ զպատանին . այլ և հակամիտութիւն

զիւրեանցն խնդրեն զաւարկոյս . ուստի վառեալն պատմիլ ելանէ արտաքս որսնել զնոսա։ Ինչ մի բարձրագոյն 'ի վեր ուսուցանէ զկուրծս պատանւոյն· բանին նմա աշխարհք պատուոյ և փառաց . երազէ հոգի զերանութիւն սիրոյ, մտախոհ իմն զկայ առնու 'ի գնացս ջուրց, մտախոհ իմն՝ 'ի վերայ ապառաժից . երևակայութիւն նորա ընդ թափ սլանայ 'ի տարածութիւնս . ամենայն ուրեք առ ական դիպին նմա կղզիք երջանկութեան· այսոքիկ են ռօբէնսօնեան աւուրք կենաց մարդոյ, այլ խորհրդաւորք և արդոյ ապաքէն։ 'Ի պատա-ուբոյծ վայելս գաղափարաց ջեռնու և կենդանանայ ճարտարութիւն և երևակայութիւն և ոչ ևս այլ 'ի կորուստ գնայ յամենայնի առ ծանրութեամբ գիտութեան և 'ի կենացն կուչման։ Այլ ո՛ է որ առաջնորդէ պատանեկին 'ի հանդիսի յայսմիկ· զմայրականաւն առաջնորդութեամբ զանցեալ է նա, իսկ կենցաղակցութիւն ընդ ուսուցչին յօտարազունիցն լինի նմա· ա՛ստ ուրեմն է՝ ուր հարկ 'ի վերայ կայ հօրն խնամոտել յիւրն առ որդի առընչութիւն բովանդակ· վասն զի մինչ դեռ երեխայ էր պատանին, համարձակ էր հօրն թողուլ զնա 'ի խնամակալութիւն մայրական, և մինչ դեռ մանուկն էր՝ յառաջնորդութիւն ուսուցչի։ Հայրն սոյն պաշտօն չէր յառաջին, բայց միաբանել զաւանինն ընդ դպրոցական դաստիարակութեան՝ պարտական է այժմ՝ վերստին ընկալեալ զորդի իւր 'ի ձեռաց ուսուցչին՝ մի միայն առաջնորդել նմա· նորա՛ է այժմ՝ զգուշացուցեալ զպատանին արձակել 'ի ծով կենցաղոյս· նա՛ միայն բաւական է զգաստ և զվերաթռիչ իմացութիւն պատանւոյն ածել 'ի կամակար հաւանութիւն լուաղունիցն· զո՛ր օրինակ զարգացեալ պատանեկին՝ ժամանէ յանձնիշխանութիւն, և ինքնաճանաչութիւնն յայրական հասակի անդ բարձրանայ յաստիճան օրէնսաւորութեան անձին։ Այրն հաստատի 'ի նոյն ինքն անձն իւր . դաստիարակք նորա են կէս մի արտաքին օրէնք արդարութեան, և կէս մի ներքին օրէնք բարոյականին, ա՛յն է՝ իրաւունք, պարտականութիւն և առաքինութիւն։

Այսպէս պարտէին լինել ընթացք դաստիարակութեան, ուր գոյ դաստիարակութիւն, կարգ և կանոն յառանին և յարտաքոյ կենցաղու· յիրաւի լինէին այսպէս՝ եթէ մարք, ուսուցիչք և հարք ու՛չ գնելով օրինաց մարդկեղէն աճելութեան՝ ընթանային խոհեմութեամբ· այլ աւա՜ղ . ո՛չ այսպէս կերպարանին իրք թէ 'ի դաստիարակութեան

ճանաչողականին և թէ 'ի հրահանգութեան աշխատականին և կամաց· 'ի ճանաչողութեան մասին յամենայն տեղիս թողեալ լինին դատարկութիւնք և պակասութք · զյիշողականութիւն բռնաւորեն յումպէտս անհասկանալիք, մինչ դատողականն է ուրեք զի յետս մնայ և է ուրեք զի անհնարին ճգնողութեամբ բռնադատի 'ի վեր ելանել 'ի խնդիրս այնպիսիս որք առ անտեղիտ և զուգապատշաճ ուճով դաստիարակութեան չիցեն մանկան, այլ խաղ ինչ հեշտին · վեր 'ի վերոյ շատագիտութիւն քան զխորագիտութիւն նախամեծար պաշտի, որպէս զի գիտակ լիցէ մարդ ամենայնի, բայց ոչ անձին իւրում: Գիտութիւնք համօրէն չեն, բայց սոսք միոյ միայնոյ ինքնաճանաչութեան· և ուրանօր լինի մեզ ճարտարապետել կազմած ինչ, պարտ է մեզ անդանօր փոխ առնուլ յանձանց իւր մերոց զկարգ, զսկըզբունս, զզուգաչափութիւն և զզուգամասնութիւն· զոր օրինակ իւրաքանչիւր կազմած է յառանձինս և 'ի մասնաւորս 'ի յայտնութիւն եկեալն բացարձակութիւն ճառագայթից ընդհանուր որ 'ի մեզ յինքեանս զուգահաւասարութեան · յայս և 'ի սոյն ձկտի խորագիտութիւն:

Բայց քան զայս առաւել ծանր է անտեսութիւն կամ չարաչար կրթութիւն ախտական և կամական մասանց մարդոյ · քնքշեցուցանելով կամ անփոյթ առնելով մօր զերեխայն, ոչ զարթիցեն 'ի նմա երբէք ո՛չ հնազանդութիւն, ո՛չ խոնարհութիւն և ո՛չ սիրտ շնորհակալու: Իբրև ուսուցիչն փոխանակ ներգործելոյ ակնածութիւն և վստահութիւն յինքն՝ վարիցի ահընկէցութեամբ, խստիւ, սպառնալեօք և պատժարութեամբ, այնուհետև լիցի մանկան առ սակաւ սակաւ զարտուղել յամենայնի յանցաւորութիւնս· աղբիւր ստութեանց՝ երկիւղ պատժից, և խստութիւն կարի իմն կոշտ՝ ցասուցիչ սրտի և հիմնարկու ստրկային բնաւորութեան, այն՝ որ անպիտանացուցանէ զմարդ առ ամենայն աւուրս կենաց նորա· Թո՛ղ զայս· ապախտ առնելով հօր զփափաշս պատանեաւն կամ խառ՛ն առ նա բերելով՝ զարտուղին հակամիտութիւն փոխանցէ 'ի կիրս և յարատըս · և տարապայման ժուժկալութիւն 'ի վայելից ազատութեան յեղաշրջէ 'ի ներհականն սանձարձակութիւն: Պատանին կանգուն կայ 'ի միջակի երկոցունց հակառակամարտից՝ արատոյ և առաքինութեան, զգայականին և բարոյականին, և տատանի իբրև զեղեգն

ստանդական․ զանցեալ զբունադատութեամբ և զոստիւ դպրոցի՝ չէ՛ է ղարգացեալ 'ի վիճակ կատարելապէս բարոյական, որ կանի յաղատակամ խոստովանութիւն բարւոյն․ 'ի հանդիսի ցանկականին նախաթոռ բազմի տկարին հակամիտութիւն որ և ոչ ներէ օրէնսդիր լինել անձին յամենայնի, ըստ որում չէ՛ կան առաջի կանոնք ապատրնախնք։ Եթէ չիցէ սիրտ կազմ և պատրաստ ընծայեալ յառաջագոյն, կամ եթէ չարաչար հրաժանդեալ այն իցէ, չի՛ք և չի՛ք ազդերանալ անտի ո՛չ սիրոյ, ո՛չ բարեկամութեան, ո՛չ վեհանձնութեան և ո՛չ արդարութեան․ 'ի սորին հակառակէ՝ սարսափական զնա դացեն ագահութիւն, պատուասիրութիւն և փառամոլութիւն զոյգ ընդ ատելութեան, նախանձու, անհաճոյութեան, ստութեան և կեղծաւորութեան, զոր օրինակ յառաջնոյ հուսկ յետոյ անձնապաշտութիւն լինչ ոք կցորդեալ հանճարոյ՝ եղիցի արուեստակեալ իմն կազմած ամբարշտութեան։ Ուրանօր երկպառակեալ են 'ի մարդ միտք և սիրտ, փակ է անդանօր ճանապարհ բարոյականութեան և կրօնի․ սատի՛ է զի տեսանեմք զոմանս պատանիս յընթացս լինչ կենաց իւրեանց անձնամատն լեալ սանձակոտր ազատամտութեան և մոլբաշաւիղ լուսաւորութեան, այո՛ տոտուածուրացութեան իսկ։ Եթէ իցէ դաստիարակին զանց արարեալ կենդանացուցանել 'ի սիրտ պատանեկին զյաւիտենական զայն գաղափար զկնոուս քրիստոս, չի՛ք նմա անկառոյցք հաստատութեան բարոյական և կրօնապաշտական կենաց․ և այսպիսին տատանի 'ի գլուխ երկճիւղ պողոտային որ ընդ արատ և առաքինութիւն․ և հուսկ յետոյ զարտուղի եղանի, մինչև 'ի վերջէ դահավէժ գլորիլ յանդունդս արատոց։ Երեք ազդարանք են 'ի մարդուն՝ որք ընդառաջ եղանեն մեզ 'ի հանդիսի յայսմիկ որ տանի յառաքինութիւն․ այն է՝ պատիւ, սէր և վեհանձնութիւն․ պատիւն՝ 'ի բարգաւաճել անձնիմացութեան, սէրն՝ յաղուագործեալ սրտի և վեհանձնութիւնն՝ 'ի բարոյական կամս․ դաստիարակն թէպէտ և անբաւական է յարուցանել զնոսա, բայց ունի դէթ մատնացոյց առնել զուղին՝ որ առաջնորդէ անդր․ գլխաւոր փոյթ նորա պարտի գոլ՝ զզգայութիւն պատուոյ 'ի մարդն դիմեցուցանել առ բարին․ վասն զի այս զգայութիւն պատուոյ կարող է նոյնպէս՝ յեղափոխեալ 'ի պատուամոլութիւն՝ ներգործել ընդդէմ առաքինութեան և պաշտել զինուրաքանչիւր անձնասիրական առաջարկութիւնս,

որպէս անդրէն դարձեալ՝ եթէ կցորդեսցի ընդ սիրոյ՝ նպաստել գիտէ բանի առաքինութեան։ Խեղաթիւր և 'ի չարն ուղղեցուցանող միանգամայն են համօրէն հնարք 'ի դպրոցս որ հրապուրեն զպատուամոլութիւն, բե՛ր ասել զոչ 'ի ժամու գովասանութիւն առաւելութեանց, քանքարոց և ընդունակութեանց մանկտւոյն, զնշանացոյցս յառաջամասնութեան վասն ճոխագունից տրոց բնութեան, այլ ոչ վասն բարեբարոյութեան, զըստ տեղեացն նախակարգութիւն այնպիսի աշակերտելոց որք թէպէտ և ըստ իմացականութեանն ընդունակք քան զայլս իցեն, այլ 'ի բարոյական միտս յետնեալ քան զայլս գտանիցին · իբրև այսպիսեօք հրապուրեալ է պատուամոլութիւն, այնուհետև օր քան զօր մեկուսանայ 'ի սրտէ հանճարին, և վերնագոյն այն ազդարանք՝ որպիսի են սէր և վեհանձնութիւն՝ անգործ կան 'ի մարդն։

Այժմ կարգեցաք աստանօր զմանս 'ի գլխաւոր կանոնաց Ընդհանուր ոճոյ, զորս փոխ առնու դաստիարակութիւն 'ի Հոգեբանութենէ անտի, որ և զուգապատշաճ թուին աճելութեան արմատային բնաբոյս որպիսութեանց մարդոյ, բայց որպէս զի արդիւնաւոր գտանիցի ոճս այս, ինչ ինչ որ 'ի ծնողս, 'ի դաստիարակս և յուսուցիչս յատկութեանց պէտս ունի մինչև յոյժ · որոց սակի՝ թո՛ղ զառողջ տեսութիւն և զբանադիտութիւն՝ են համբերութիւն, սէր և երկիւղածութիւն· յառաջնումն ամփոփին բարեխառն զգայութիւնք ամենայն, յերկրորդումն՝ ազնուագոյն ախոք և հակամիտութիւնք համօրէն, յերրորդումն՝ բարոյական և կրօնապաշտական պարտականութիւնք բովանդակ· զո՞ր օրինակ յատկութիւնքս այսոքիկ տարրացեալ տեսանին 'ի դաստիարակին, այնպէս և անզգալի իմն փոխանցել ունին 'ի սիրտ մանկան· չէ հնար ստանալ զայնս ուսմամբ, բե՛ր ասել զթուաբանութիւն, զքերականութիւն, այլ հետզհետէ հրահանգէ մարդ անձամբ զանձն՝ առաջնորդ իւր կալեալ զայլս, որպէս գաւազան երկաթի ուղղեցուցեալ 'ի հարաւ և 'ի հիւսիս կոյս՝ հուսկ յետոյ և ինքն զգենու զօրութիւն մագնիսեան։ Որ ինչ ըմբռնողականին, դատողականին և եզրակացուցանողականին է գործ, այն զօրէ ուսան-դիլ դասատուութեամբ, բայց որք հային 'ի պաշտօն ախտական և ցանկական կարողութեանց, զայդոսիկ առաջի կայ մանկան ազատաբար գաղափարել յանձին և ըմբռնել 'ի նոյն իսկ հրապարակի

գործական կենաց․ գործ և օրինակ պարտին քարոզ լինել ատանօր, քանզի ներգործեն ինչ ոչ, այլ են տեսակեալ միջնորդք միայն։ Ինչ որ 'ի սրտէ ելանէ, ընդ թափ անցանէ և 'ի սիրտ․ այս ճշմարտութիւն կայ և մնայ անպարտելի․ ուստի որ կամիցի պաշտել զգործ դաստիարակի՝ առանց զնախակարգեալ յատկութիւնս յանձին բերելոյ, այնպիսին չէ բաւական երբեք զարթուցանել զայնս 'ի մանկտին իւր, այլ որչափ և 'ի մէջ բերիցէ բարոյական խորհրդածութիւնս, այդ ամենայն կացցէ միշտ ամուլ և անարդիւն գործ յիշողութեան և հանճարոյ։ Գործ միայն յարուցանէ գործ, ախտ միայն յառաջ ածէ ախտ․ վարդապետութիւնք ողջոյն՝ որ հաւանեցուցանեն զախտ և զսիրտ՝ պտղաբերեն ատանօր և ոչինչ, բայց եթէ գործ և օրինակ նոյն ինքն դաստիարակին ակնյանդ մա՛ն կայցեն մանկան․ 'ի կատարեալս և 'ի չափահասակս զօրեն յիրաւի բանք զարթուցանել ախտ և գործ, ըստ որում այսպիսիք վա՛ղ ուրեմն ծանօթ են նոցա․ որպէս ձայնս ուէր բաւէ հրապուրել զախտ նորա, որպէս բասս քաջութիւն՝ շարժէ զկորովութիւն կամաց, վասն զի խմաստքս այսպիսիկ կանուխ արդէն մասնեալ լինէին 'ի ձայնսն յայնոսիկ․ բայց այս ոչ հանդիպի 'ի մանկունս՝ որում պա՛րտ է զամենայն ինչ արդեամբք և գործով առաջի աչաց կացուցանել․ մանուկն կարօտ դէպ կենդանի օրինակի զոր դաղափարելով միշտ յանձին իւրում՝ զհետ լիցի ըստ այնմ բոլորի զնուրսն կատարելագործել զսուրբ ընութեան։ Յայս է 'ի սոյն բովանդակի խնկութիւն դաստիարակութեան։

## Առաջին ԺԶ.

Մա՛րթ է ասել թէ իւրաքանչիւր անհատի իւրն առանձին վայելէ ոճ դաստիարակութեան․ որպէս զի իւրաքանչիւր անձն ըստ իւրումն խառնուածոյ, ըստ ընդունակութեանցն, ըստ գործարանական և իմացական կարողութեանց իւրոց 'ի հասարակի՝ տարբեր ինն ընտրեալ է յայլոց․ վասն զի՝ որ քաջայայտ է՝ խառնուած արիւնային և բարկացկոտ պէտս ունին այլոյ դաստիարակութեան քան զմելամաղձոտն և զմաղասայինն․ անդրէն դարձեալ՝ մանուկ մտախոհ այլում կարօտի ոճոյ հրահանգութեան, քան յեղաշրջունն և փոփոխամիտն․ առ երեխայ փափկասիրտ և նրբազգաց չէ վարել

իբրեւ առ բիրտս, առ անզգայս եւ առ վայրենաբարոյս. Նոյն եւ ընդ մանուկ դիւրահակ եւ անսացող այլպէս պարտ է ընթանալ քան ընդ կամակորս եւ ընդ խրոխտաբարոյս. մանուկ հողմազգեաց եւ զարդարեալ ականաւոր ձիւք բնութեան պահանջէ զայլ եղանակ ընդ նմին ընթացից քան զորս ջանիւք եւ անձանձիր ճգնողութեամբ միայն յառաջ խաղալ զօրեն · կիսոց պիտի քաջալերութիւն, այլոց չափաւորութիւն, ոմանց թելադրութիւն եւ զգուշացուցումն, միւսոց ողոքանալիք, այս եւ դան իսկ:

Խնդիր է այժմ 'ի մէջ թէ զիարդ պարտ իցէ անօրինել զԱւանձին ոճն: Զէն մեր խրատունք զայն՝ առ որ կարգեալ է մարդ 'ի բնութենէ՝ հարստահարել բռնութեամբ կամ անհետ կացուցանել զգերագոյն ինչ ձիրսն հոգւոյ 'ի մատաղատունկ եւ 'ի մերաթուիչ եակի յայնմիկ. ոչ եւ ոչ հասանէ մեզ կերպարանել զերկայն ըստ մերումս օրինակի եւ ոչ իսկ պատուաստել 'ի նա զմերն հայեցուած անձնականն. երեխայն դուցէ կրէ յինքեան ձիրս՝ ընդունակաւո յաւէտ գեղեցկագոյն կերպանագործութեան քան զոր մերն է. բարք կամակոր եւ ապերասան, բնաւորութիւն բիրտ եւ ամեհի չեն յիրաւի բերմունք հաճոյականք, այլ իւ մարթ իցէ գուշակել մեզ՝ թէ ոչ սոյն եւ այս ազդարանաց պէտք եղեն 'ի սկզբան անդ՝ առ 'ի զուգախառնելով զայլեւայլ ընդունակութիւնս եւ յատկութիւնս՝ կազմել զբոլոր ինչ աւանձին. զօրէնք արդեօք դատաստան առնել թէ չիցէ այնոցիկ զիջանել եւ մեղմանալ ինքնին, մինչ զուգեսցին նոցա գործարանք վերնագոյնք. է՞ մեր իշխանութիւն անդէն անդ անգործ կացուցանել զազդարանս բնութեան, նոյն եւ խափանել զբոլորին զյառաջատուութիւն:

Զոր օրինակ անհակառակելի է այն՝ թէ հարկ 'ի վերայ կայ մարդասիրաբար զիջանել որոց 'ի նորատունկ կազմածի մարդոյ տեսանիցի բուռն եւ բիրտ իսկ բերմունք, այնպէս եւ անհակառակելի է՝ թէ աւանձին ոճն պարտի խոյս տալ ըստ կարի յամենայն 'ի կիսահայեաց տեսութեանց. ուրանօր մանուկն հակամէտ առ մի եւ եթ տարապայման բերի, ուրանօր ընդունակութիւն մէն մի զարգանայ ըստ չափ, անդանօր զուգաչափութիւն այլոց զօրութեանց առ բոլորն ստէպ է խախտել եւ լուծանիլ: Վնասակար մանաւանդ է, եթէ մի 'ի ստորադասիցն կարողութեանց յաղթահարեալ իցէ յինքն զգաւա-

զան իշխանութեան, բե՛ր տեղ զերևակայութիւն, զատորաքաւոր ցանկականն որ 'ի յոյզս կրից, զախտականն 'ի կանացի թուլասրտութեան, կամ թէ զմիտս ընկլուզեալս 'ի յատակս խորոց և 'ի բանադիւտ ճգնողութիւնս · ուր ինչ մի յայտպլեաց 'ի վեր երևի և ընդ լծով արկանէ զայլ կարողութիւնս, անդ յառաջանայ վրիպակ միատարազն գոլոյ որ ոչ թողու վերաճել մեծամեծաց և զօրեղագունից։

Պա՛րտ է դաստիարակին և՛ս և ստտանօր դէտակն կալ 'ի վերայ օրինաց աճելութեան որք յանդիման մատչին 'ի յառաջ խաղալն 'ի ստորադունից առ վերադոյնս · վասն զի եթէ արժան է մարդոյ 'ի դիտակցութենէ անձին անցանել յինքնաճանաչութիւն, յինքնաճանաչութենէ՝ յօրէնսդրութիւն անձին, ապա չէ՛ համարձակ և ոչ միում 'ի ստորադունիցն կարողութեանց դերակշիռ քան զայլս ելնել և գործ դաստիարակի է յիւրաքանչիւր ստանձին դէպս անհետ առնել զմիատարազ զարգացումն մանկան։

Երկու կանոնք ընդդիմադրին միմեանց ստտանօր· ըստ առաջնումն չէ՛ ներեալ խափանել դրականապէս և ոչ զմի ինչ յատկութիւն, զօրութիւն, ընդունակութիւն 'ի մանկան, վասն զի իւրաքանչիւր մի 'ի սոցունց իբրև խորհրդաւոր իմն աղբերան՝ անհրաժեշտ կարևոր է առ 'ի գործականութիւն բոլորին։ Բնութիւնն պահանջէ աղատ իմն հանդէս նահատակութեան իւրոցն կարողութեանց, և զայս իսկ պա՛րտ է շնորհել նմա յամենայնի · բայց՝ ըստ միւսումն կանոնի՝ առաջի կայ դարձեալ խոյս տալ յամենայն 'ի մեկուսի ընթացից, որպէս զի ներդաշնակութիւն բոլորին զարգանայցէ առաւել քան զառաւել· թէպէտ և՝ որ անհրաժարելին է՝ իւրաքանչիւր անհատ ուժգին ևս հակամէտ բերի 'ի մի ինչ կողմն քան յայլս, բայց արժան է դաստիարակին փոյթ յանձին ունել միայն, զի մեկուսի հայեցուածն այն մի՛ առանձնասցի մինչ 'ի սպառ, այլ իբրև տրամանկիւնաբար միայն լծակցեալ տեսանիցի ընդ այլ ամենայն կարողութիւնս։ Ինչ որ սովոր եմք կոչել ոգի, չէ երբէք առանձնաւորութիւն միոյ միայնոյ կարողութեան, այլ բացարձակութիւն ճառագայթից բոլորին՝ նկատեալ 'ի մասնաւոր ինչ յայտարարի վերնադոյն իմանալի գործարանի։ Անոյ այժմ 'ի քննութիւն դալ՝ թէ զի՛արդ պարտ իցէ միաբանել զերկոսին կանոնս զայդոսիկ · զհետ

գնալով մեր ընդհանուր ոճոյն՝ որ ոչ թողացուցանէ զարտուղի
'ի մի կոյս խոտորիլ, նոյն և սատարելով մեզ նախակարգելոյն
յատկութեանց որ 'ի ծնողս և յուսուցիչս՝ չիք ևս այլ տեղի կա-
կածակաբար դէտակն ունելոյ մասնաւորաց. որ ոք համբերութեամբ,
սիրով և վկայութեամբ խղճի մտաց պաշտէ զգործ դաստիարակի,
նա պէտս ինչ ոչ ունի յետս ընդ կրունկն նահանջելոյ զոր 'ի մա-
նուկն գահերէց հանդիսացեալ բերմունս. մանուկն իբրև սկիզբն
արասցէ գաղափարելոյ յանձին զիւրն զնախատիպ, անհետասցին
ինքնին և մեկուսի հայեցուածք առանց զբոլորին զօրութիւն յա-
պաւելոյ: Երկու ինչ նկատելի են առն դաստիարակի. 'ի բաց
ընկենլով զխոտանսն, զվատթարսն, զարտաքանոնսն, միով բանիւ՝
դիտելով 'ի բաց լուծել զմոլախոտն, պարտի միանգամայն և տածել
և սնուցանել զազնուագոյն ընձիւղսն. դարձեալ՝ մինչ համօրէն
հիւթք հողոյ դիմեցուցեալ լինին առ պատուականագոյնն 'ի բուսոց,
յայնմ հետէ օր քան զօր սակաւասցին յաջորդեալքն մոլախոտք.
բայց անփոյթ եղեալ սերմանահանին սերմանել բարի բարի սեր-
մանս՝ խոպանացեալ մոլախոտեսցեն անդք և անդաստանք. չէ՛ ար-
ժան 'ի բաց խլել զցամաքեալսն, այլ թողացուցանել զուարթու-
թեամբ յաջորդելոցն զկնի դալարեաց տարադիր զնոսա հանել.
ուրանօր լաւքն ակնյանդիման դնին առ 'ի գաղափարութիւն, անդա-
նօր համարձակ է այն արմատախիլ առնել զվատթարսն՝ ոչինչ զան-
գիտելով՝ թէ մի՛ դուցէ վերստին զօրասցին:

Յասացելոցս ցայս վայր զհետ գայ առաջիկայս կանոն դաստիա-
րակութեան. Մի՛ խլեր 'ի բաց դրականապէս զայն՝ առ որ կարգեալ
է մարդ 'ի բնութենէ, այլ խնդրեա՛ ղեկավարել զգերագոյն բե-
րումն նորա, որպէս զի պաշտիցէ զբոլորն և ներդաշնակ ի՛մն զու-
գախառնիցի ընդ այլ գործականութիւնս հոգւոյ. 'ի լինել այսր
այսպէս, գերակշիռ բերումն այն կորուսցէ զթոյն իւր, և որ 'ի
նմայն օգտակար կացցէ անկորուստ: Դաստիարակն առաջնորդելով
մանկան չունի պէտս հսկելոյ կասկածաբար 'ի վերայ իւրաքանչիւր
ոտնփոխից մանկան կամ դատաքննելոյ զիւրաքանչիւր մի 'ի գործոց
նորա և ոչ իսկ գովելոյ կամ պարսաւելոյ զնա, այլ բացցէ՛ բնա-
կան ընդունակութեանց նորա ազատ ի՛մն ասպարէզ շահատակութեան
և դէտա՛կն կացցէ՝ թէ ո՛րպէս այնոքիկ աճեն և զարգանան. զտա-

բապայմանն և զարտականնս միայն հատցէ՛ 'ի բաց , այլ միանգամայն և տածելով և խնամելով զլաւն։ Զազնուական ախտն պա՛րտ է կանուխ ուրեմն արծարծանել 'ի սրտի , որպէս զի հետզհետէ փոխանցեսցէն 'ի հակամիտութիւնս։ Իմացականն մի՛ մնասցէ սուն և ամայի, այլ ջերմութիւն և լրութիւն առցէ յախտականէն· զո՛ր օրինակ համօրէն նպատակք և նկատութիւնք կամաց ազգեցացին առ 'ի յապայս 'ի բարի բարի ազդարանաց · ամենայն ինչ յազնուագործութիւն բնաւորութեան կախեալ կայ · սակաւ յոյժ՝ 'ի չափաւորութիւն և 'ի լոկ ուսումնականութիւն։

ԱԿԱԴԵՄԻԱ